# ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

Գրիգորի Սկեւռացւոյ
Գիտնական Վարդապետի:

Տպեցեալ 'ի Հայրապետութեան
Սրբոյն Էջմիածնի Տեառն
Ղազարու Սրբազան Կաթողիկոսի
ամենայն Հայոց:

Եւ 'ի Պատրիարգութեան Սրբոյն
Երուսաղեմ Տեառն Գրիգորի
Սրբազան Վարդապետի:

Ի Կոստանդնուպօլիս Քաղաքի:

Հրամանաւ նորին Սրբազան
Պատրիարգի Տեառն Յակոբայ
Նալեան Վարդապետի:

Ի տպարանի մահտեսի Աստուածատուրի:

Ի Թուին Հայոց ՌՃՂԱ:
Մարտի քսան:

## Առ Ընթերցօղս։

Ով ոք աղաչաւոր՝ ՚ի կամիլն գը-
նալ առ թգ̃րի մեծազօր, խընդ-
րել ինչ ՚ի նմանէ. ոչ գիտելով ըզ
խօսիլն պատկանաւոր առաջի նր̃,
չիմարեալ տարակուսի, թէ զոր
կերպ արդեօք խօսեցայց որ հա-
ճոյ լիցի արքային։ Այլ տեսեալ
զնա յայսպիսի վարանման ումն ՚ի
խորհրդակցաց թգ̃րին, գթասցի
՚ի նա և ուսուսցէ զոր ինչ պատ-
կանի է խօսիլ հաճոյ արքային։
Այսպ̃ և մեք յորժամ կանգնիմք
յաղօթս, ոչ եմք բաւական մեզէն
նկատել գիտել զպատկանն խօսե-
լոյ առ̃ջի ահեղ և անտես արքային
որ տ̃րն է փռ̃ց և տիրէ երկնաւո-
րաց և երկրաւորաց։ Ուստի յայն
ժամ Հոգին ճշմարտութ̃՝ փռ̃կիցն
հօր և որդւոյ, որ քննէ զխորս այ̃՝
գթացեալ ՚ի տկարութիս մեր, ուսու-
ցանէ մեզ ՚ի ներքուստ (զոր մեք
ոչ իմանամք) զկերպ աղօթից .
առ ՚ի լինիլ ընդունելի մտաց և
բանից մերոց. որպ̃ ասէ՝ Հռոմ̃ ը̃. ի̃զ։

Նա՛ ո՞չ այն որ ուսաւ ՚ի ներքին
խորհրդակցէ արքային զկերպ
խօսելոյն, և ընկալաւ այնու ըղ-
հայցուածն իւր, ուսուցանէ, եւ
բեմն և այլում աղաչաւորի զնոյն
կերպ խօսելոյ և աղերսելոյ յառա-
ջեան արքային։ Նայ՛չ ընտրելաքն
յայ՛ երանելի Ճգնաւորքն անձինքն
ուսեալք զկերպ աղօթիցն ՚ի հո-
գւոյն, ուսուցանեն միշտ մեզ որ
կարասցս զնոյն կերպ աղօթելոյ։
Ոպ՟ սբն գրիգոր Նարեկ″ և այլք։
Յորոց մին և երջանիկ վարդպտս
այս՝ գրիգոր սկեւռացի։ որ արար
զաղօթս զայս, յոյժ գեղեցիկ շարա-
դրութեամբ և զօրաւոր մտօք։
Որոյ քաղցրունի բանիցն՝ ճաշակո-
ղացնէ յայտնի։

* Նաեւ յորդորեմ զհոգեւորս սիրելիքդ իմ
ընկալնուլ զսա և ընթեռնուլ, երբեմնանց
ըղձիւ և մտաւորաւ խոնարհամբ։ Որպէս զի
հանգուցելոյ նորաշնորհն ձեզոյ, արժանի լի-
ցուք փառաւորեալ շնորհաց և սիրոյն և աւէտ
հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն.



Հօր և Հոգւոյն միշտ էա կից.
որ մեզ եղեր պատկերա կից։
Լո՛ւր աղօթիցս աղերսար կու.
՚Ի քեզ խաչելդ անարատ առ նու։

# Գրիգորի [illegible] Ճգնաւորի Վարդապետի Նարեկայ ՚ի սուրբ Երրորդութիւնն:

ՕՐՀՆԵԱԼ ԵՍ ամենասուրբ Երրորդութիւն· անեղ էութիւն· համագոյ բնութիւն: Անիմանալի գոյութիւն· անսահման մեծութիւն· անհաս բարձրութիւն· անբաւ խորութիւն· անկշիռ իսկութիւն· անփոփոխ տէրութիւն: Միասնական ա̄ծութիւն· կարող զօրութիւն· անայլայլական պատիւ· գերագոյ իշխանութիւն· անվախճան թգ̄ւորութիւն· անբաժանելի միութիւն:

Ե

ոյր

Հայր՝ անեղ և անծին. անսկիզբն և անպատճառ. սակայն պատճառ որոց ՛ի քէն ծննդեամբ և ելողութ̃։

Որդի՝ բան և ծնունդ ծոցածին. լոյս փառաց և նկարագիր էութե̃ և պատկեր աներևութին։

Հոգի՝ բղխումն անճառաբար և ելողութիւն անմեկնելի։

Հոգի՝ ոչ ծնունդ որդիաբար. զի և ոչ որդի ելումն ոչ̃ հոգի։

Երիս որոշմունս ըստ առանձնաւորութեան և դիմաց, և՛ի մի միութի̃ ըստ բնութե̃ և ա̃ծութե̃ դաւանեալ։ Անբաժ ՛ի բաժանման անխառն ՛ի միութե̃։ Ո՛չ բաժանմամբն յօտարութի̃, ո՛չ միութեամբն ՛ի խառնուածս։ Անծին, և ծնեալ, և բղխումն անընդհատ։ Անըսկիզբն և սկսեալ և ելումն իսկայն։ ՛Ի զուգութե̃ համայն, բաց յառանձնաւորութե̃ դիմաց և անուանս։ Զի ո՛չ անձն հօր՝ որդւոյ, և կամ որդւոյն՝ հոգւոյ. և ո՛չ հոգւոյն՝ որդւոյ, և կամ որդւոյն՝ հօր։

Այլ՛ի միում բնութեան՝ առանձ-
նաւորութիւն անշարժ մնացեալ.
և յորոշման առանձնաւորութեան՝
միութիւնն ոչ բաժանեալ։
Ո՛չ մեծութի և փոքրութի, զի և ոչ
բովանդակութի. Ո՛չ երիցութի և
ոչ կրտսերութի. զի և ոչ ժամանակ
Ո՛չ սկսեալ և ոչ դադարեալ։
Կեանք և կենարար։ Լոյս և լու-
սատու. և՛ի լոյս բնակեալ անհա-
սելի։ Ինքնագոյ և գերագոյ ։
Անիշխան և ինքնիշխան ։
Անտէր և ինքնատէր ։
Կատարեալ և կատարիչ ։
Բարի և միշտ բարի. և բնաբար
բարութի։ Ի՛ բարութեանդ՝
միայնակ ոչ կարացեալ ունել զան-
ձառ բարիդ, յառաջ հեղեալ ձա-
նապարհորդեցեր յարարչագործու-
թիւն տեղւոյ և նիւթոյ ըստ ան-
նիւթի. բնակի և բնակչի. և այս՝
յիմանալւոյ և՛ի զգալւոյ։
Նախ զիմանալին բնակ և զբնա-
կիչ. եթէ հոգի և եթէ հուր և

Է կամ

կամ այլ ինչ մերձաւոր ոչ քեղէ
գիտելի․ ՚ի սպաս և ՚ի պաշտօն մե-
ծուե̄ քո և փառաց․ որում և ոչ
պիտոյանամ անկարօտ գոլով բը
նութի։ Ո՛վ ըստ յոգնառատ և
անբաւ բարութեդ՝ կամեցար տե-
սօղս և մտաւոր բնութիս ՚ի փառս
մեծուե̄ քո ստանալ․ Հանգիստ-
լեալս և կոչեցեալս անաշխատելի
բնութեդ։ Յաճախս ՚ի գիտուի
և առատս յիմաստուի ըստ յոքնա-
չեայն գոլոյ։ Կիզիչս և հրաբե-
րանս․ մաքրողականս և սրբասցս։
Տէրութիս ինքնատիրեալս յամենա-
կալ տրութենէդ։ Զօրութիս
զօրացեալս յամենազօր զօրութեդ։
Ընծառայական իշխանութիւնս
յիշխանարար մեծութենէդ։
Պետութիւնս առաջնորդականս
՚ի նուաստից վերհամբարձումն։
Գլուխս սպասաւորաց ՚ի նմանն
կոյս վերաբերօղս։ Սպասաւորս
դերամաքուրս․ վերանեցելոյն
առ՚ի խոնարհ իջուցանօղս։

Եւ ոչ յայտնին բովանդակեալ
ամենառատ բարութեդ, այլ եւս
խոնարհագոյնս 'ի ստորինս և'ի
զգալիս առատացար արարչութբ։

Ի կենդանիս և յանկենդանիս ։
Ի շնչաւորս և յանշունչս ։
Ի բուսականս և'ի անկականս ։
Յինքնաշարժս և յայլաշարժս ։
Յերկնայինս և յերկրաւորս և
որ 'ի ջուրս են սքանչելիք' զարմա
նագործ արարչութե որ անցանէ
զիմացութեամբ ։

Եւ ըստ գերակայ հանճարոյդ'
իբր զմիոյ գործ արարչի' զամ
կամեցար 'ի մի ածել կցորդութի
և այնպէս 'ի քեզ մերձեցուցանել.
զի մի' օտար արարածն յարարչէդ
երևեսցի ։ Եւ զի անհաղորդ գո
լով երկուց ծայրիցն և անհպելի
ըստ անբաւ հեռաւորութեան ,
աննիւթի և նիւթոյ . իմանալւոյ
և զգալւոյ ։ Եւ այս բացակայից
ըստ էութե' 'ի մի հանդերձեալ
ածել կցորդութի , պիտոյ էր ինչ

Թ 'ի

'ի միջոցի՝ յերկուցն ունել աղ
գակցութի. զի նմանեաւն առ նը
մանն հայեցի։ Ուստի և զբազ
մապատիկդ 'ի վեր արկեալ զիմաստ
ստեղծեր մի և նոյն կրկին կեն
դանի՝ յիմանալի բնութենէ և'ի
նիւթական էութե. 'ի տիպ և'ի
նմանութի արարչական քո պատկերի։
Երկնային և երկրաւոր։ Ժամա
նակեայ և անմահ։ Միջոց մեծու
թե և խոնարհութե։ Փոքր մի խո
նարհ եղեալ քան զհրեշտակս։
Շաղկապ երկուց ծայրից անհա
ղորդից ըստ էութե։ Որով 'ի միա
ծեալ զնա՝ ծանուցար համայնից
գոլ տր և արարիչ։

Ա՜յ պատուեալ զպատկեր տիրա
կանիդ՝ բոլորից իշխանութբ
որ յերկիս զատուցեալ սեռս, ծը
վային և ստնական և օդային։
Ա՜յ ամենայարմար պատկանաւո
րութբ կանխաւ պաշտպանեալ,
իբրև զարքունիս մի ամենառատ
գանձուք լցուցեր։ Ա՜յ ապա ոչ

Թագաւոր ինձրքս ածեր յանկա-
րօտ բարխոտ վայելել: Այն զհա-
ղորդն տիրական պատկերիդ՝ ա-
նուանադրութ կենդանեացն ըստա-
ցար կցորդ արարչութեանդ:

Այլ ձոխանալ 'ի փափկութեան
վայրս ադենայ շնորհեցեր քոյին
ազործ տընկոցն վայելմամբ:

Նախտ և անցաւ, անտրտում և
անմահ կենաց վիճակեալ:

Ինքնիշխանութ պատուեալ, ընդ-
քո միայն գոլով հրամանաւ:

Սաուր և նիւթ ինքնիշխանութեն
զպատուիրանին աւանդ. որոյ լըր-
մամբ՝ յ՚ան ունէր վերանալ բարձ-
րագոյն պատիւ անկապուտ փառց:

Որ ակն մախացող մարդասպա-
նին խոկղբանէ և հօրն սուտե,
անսովորն 'ի տեսանել զբարի, ոչ
կարացեալ հայիլ ը պատի պատ-
կերին, զբաղմաշնարն 'ի կիր արկա-
նէր կործանիչ մեքենայս. և ամե-
նայն ջուստք զըմբռնօղ վարմոր

ժա գայ

դայթիչն կազմէր։ Ո՜վ ի դժնդակ էր նմա զինքն անկեալ տեսանել և փոխանակ լուսոյ խաւար եղել և զպատկեր արարչին յայնքան պատուի բարձրացեալ։ Այս զի մախանք նր ոչ տիրապէս ընդ պատկերին, քան թէ ընդ նախատպիդ գոլով· որով՝ի վայր կործանեցաւ ՝ի լուսեղէն փառացն։ Այս զի Ը նախատըպիդ անձեռնարկելի էր պատերազմն, հաստատէ՛ զնոյն ընդ պատկերին· կարծեալ որպէս թէ ընդ նախատպիդ պատերազմի։

Ո՛վ ծառայ չար ապստամբեալ՝ի տնէ, և անկարացեալ նմա վնասել, որոց ընդ նովաւ սիրելի բարեկամացն դըժրելով՝ նմա վարկանս առնել զդժրանսն։ Այս զի խմաստունէ և խորագէտ՝ի գիւտ չարի, զզօրաւորն և զհաւանեցուցիչն առնու ՝ի ձեռն՝ զփառասիրութե և զամբարտաւանութեան զզէն· մանաւանդ զփորձն և աղդօղ որով ինքն կործանեցաւ։

Այլ վիշապն մահաշունչ և չարա
թոյն՝ պատկան դարան խուրդ չա
րութեն դտեալ զխմաստնագոյնն ՚ի
գաղանս զօձն. և իբր ընդ պատըր
ուակաւ ընդ նորա դիմօքն մտեալ,
ձգեաց կործանիչ զնետս պատ
րանաց ՚ի կապարճայն մախանաց:
Ահար զպարգաւթուն և զանըն
տելուն փորձանաց՝ աղդօղ և զօրեղ
հարուածովն: Այլ զաննախանձ և
զենաբար բարիդ ընդ բանբասա
նօք արկեալ, թէ առ մախանաց
արգել ՚ի ձէնջ զա՛ծացուցիչ պը
տուղն. զի մի՛ ա՛ծացեալ ՚ի նորին
փառս վայելիցէք: Ո ՚ի դիտէր
ած թէ յորում աւուր ուտիցէք
՚ի նմանէ, ա՛ծք լինիցիք. և ոչ թէ
մահու մեռանիցիք: Այլ առ այս
ձևացոյց կնոջն զծառն՝ բարի ՚ի
տեսանել եւ քաղցր ՚ի ճաշակել՝
ա՛ծութեանն բաղձանօք:
Ո որ ընկալեալ իբրև կակղա
գոյն, և ընծայեալ իբրև հաւա
նական, առեալ եկեր՝ և ետ առն

 իւր

իւրում ընդ իւր և կերանս։ Այլ
աստուածութեանն ոչ հասին․ բայց աչքն
բացան և ծանեան զմերկութիւն
իւրեանց․ և առ ամօթոյն սաղար-
թապատ եղեալ զմերկութիւն ծած-
կէին։ Ո՜ որ բարերարիդ զողոր-
մելոյն տեսեալ զտառապանս,
յապաշխարութիւն ըստ բնաբար
դիթոյդ զյանցաւորսն կոչէիր․
(թերևս յանձին ունելով զյան-
ցանսն, զղջմամբ հասցեն թողու-
թեան․) ո՞ւր ես ասելով Ադամ.
Իսկ նա ՚ի կողմանէ անցուցա-
նէր զպատճառս խայթոյն ճաշակ-
մանն, և նա ՚ի յօձն։ Աստի իրաւա-
ցի՛ վճռաւ ամենեքեան ընկալան
ըստ արժանեաց զպատուհաս յան-
ցաւորութեանն։ Նախ օձն՝ ՚ի տխեղ
իմանալի վիշապին երկրաքարշիլ․
և ապա կինն տրտմութեամբ ծնանիլ
ախտաւոր ծընունդս փոխանակ
աստուածորդիս ծնանելոյ․ Այլ ընդ
նախադաւաճն կամելոյ՝ ընդ ճնազան
դութեամբ լինիլ առնն․ Այլ որ

ծդ քու

յուսայրն ա͞ծաւէար կեալ ՚ի քերթան
երեւաց ուտել զհաց։

Աստի ապա զընդ բիւրապատիկ ախտիւք անկեալն՝ բացատրոհեալ հանէր ՚ի փափկութ͞ն վայրէն բարերար պատուհասիւն • զի մի՛ ճաշակմամբ կենաց ծառոյն՝ անմահասցի յոքնաչարչարն։

Իսկ անյագն ՚ի չարիս՝ ոչ շատացեալ ընդ այն՝ զի ՚ի փափկութ͞ե վայրէն և անմահական կենացն արտաքսեաց, և ընդ բազմապատիկ ախտիւք և մահու գրաւեաց։

Նախ հետամուտ եղեալ յոգնաձևար որոգայթիւք զօրէն զօրեղ պատերազմողի որ վանեալ զախոյեանն՝ ոչ դառնայ մինչև իսպառ հալածեսցէ։ Նոյնպէս և նա զինուք ախտիցն էհար մինչև կիսակենդան անկեալ դնէր ՚ի մեռելոց համարի • ըստ առակին յե͞ղմէ յերիքով իջանելով՝ ՚ի հեռաւորն տարագնաց եղեալ աշխարհ • ոչ ըստ տեղւոյ, այլ ըստ կամաց։

ժե Նա

Իսկ անդ վասնեալ զհայրենի բա
րետոհմութին խողարած վարուք,
՚ի չքաւորութեն անպասնականն
ցանկայր յագել կերակրով:
Այնքան ՚ի բարեացն պակասեալ
արդասեաց, մինչև յանծանօթս լի
նիլ հօրդ և արարչի: Իսկ փոխեալ
զփառս անեղծիդ՝ ՚ի նմանութի
պատկերի եղծանելւոյ. մարդոյ և
թռչնոյ. չորքոտանեայ և սողնոց:
Այլ անշունչ նիւթոց և ձեռա
գործաց՝ զանդրւագական անուանդ
կարդալով: Իսկ այսքան անձնա
րին հարեալ վիրօք, մինչև շունչն
կենդանական իսկզբանն ՚ի դէմսն
փչեալ՝ գնաց ըստ ՚ի մարմին փո
խարկելոյն: * Յորոյ վերայ գրա
ւորականն հաստեալ օրէնք՝ մովսի
սի՛ և դասուք տեսանողացն, և
ահարոնեան քահանայութի տանն
ղևեայ զոհագործութեքն՝ ո՛չ զօրե
ցին օգնել. քին թէ զվէրսն սաստ
կացուցին. պատուիրանին
յանդիմանութե:

Ա Ֆղ Իսկ

Իսկ ապա սամարացիդ ըստ մեզ՝ հայեցար՝ և ո՛չ ոք էր որ օգնէր. զմտաւ ածեր՝ և չէր ոք որ ՚ի թիկունս հասանէր. զի զօրեղ ախտն՝ զօրաւորագունին՛ կարօտացաւ դեղոյ բժշկութեան։ Ընդ նոյն եկեալ ճանապարհ մարմնոյ և նորին կրեց, փրկեցեր միայն բազկաւ և սրտմտութեամբ զգեմ կալար. մինչև յերկիր զնորայն հեղեր մաղձ. և զանկեալն պատեցեր օծմամբ հոգւոյն և անպարտ արեանըդ քո հեղմամբ։ Եւ բարձեալ ՚ի յուս՝ ածեր յեկեղեցի. դարմանելով հին և նոր կտակարանօք առակեալ ՚ի դահեկանս. որով տիրականդ նորոգի պատկեր։

Եւ այս կամաւ հօր առաքողի բանիդ և հաճութեամբ փառակից հոգւոյդ. ըստ որում և ասէիրն. իջի յերկնից ո՛չ զի զկամս իմ արարից, այլ զառաքչին հօր։ Եւ է թէ հնա՛ր է անցցէ բաժակ մահուս

ո՛չ ըստ իմ կամաց՝ այլ.քո։ Ո՛վ ըղ
բաժակին զոր ետ ցիս Հայր՝ ո՞չ ար
բից զնա։ Ո՛վ վ̅ այնորիկ սիրէ
զիս Հայր՝ զի ես դնեմ անձամբ
զանձն իմ. զի միւսանգամ առից
զնա։ Ո՛վ այնպէս սիրեաց ա̅ծ
զաշխարհ, մինչև զորդին իւր միա
ծին ետ։ Ո՛վ որ.քեն խօսէր,
յիւր որդին ասէ ո՛չ խնայեաց.
այլ վ̅ մեր ամենեցուն մատնեաց
զնա. և հնազանդ եղև Հօր՝ մահու
չափ և մահու խաչի։ Ո՛վ տեսա
նողն՝ ո̅ր մատնեաց զնա առ ա
մեղս մեր։ Ո՛վ էակից Հօրդ 'ի
անօրէնութիս.քո ա̅մ՝ գործակից
եղեալ. ըստ որում հովանացեալ
կուսին 'ի բնակութի.քեզ. և՛ի յոր
դանան աղաւնակերպ իջմամբ,
փառակցիդ վկայէր. որով և յա
նապատ վարեիր. և զօրութ̅ նորին
դառնայիր՝ զյաղթութին կատա
րեալ. և զգերեալսն 'ի գերողէն
դարձուցանէիր. նովա՛ւ հարեալ
զպատերազմն։ Ո՛վ 'ի մարմնոյ ըղ

 ժշ

ժշկութիւն եւ 'ի հալածումն դիւաց
նովաւ վարեալ: Ըստ որում եւ ա-
սէ տէրն՝ հոգւովն այ հանեմ զդեւս:
Եւ 'ի տիպ բժշկութեան ոգւոց՝
զախտս մարմնոյ հալածէիր. ըստ
իւրաքանչիւր անդամոց զառող-
ջութիւն շնորհելով: Եւ զմեռեալս
յարուցանէիր. նշանակեալ զկեն-
դանութիւն 'ի մեղացն մեռելութենէ.
Եւ թագաւորդ յաղթող՝ զօրինակ
յաղթութեանդ ոչ զօրութեամբ առնէիր
ըստ ամենակարող զօրութեանդ. այլ
իրաւամբք եւ արդարութեամբ. զի մի
Թշնամին ասասցէ թէ մարդոյ
յաղթեցի եւ յայ յաղթեցայ.
Զի պարտ եւ արժան էր մարդով
եղեալ մահ՝ մարդով լինել յարու-
թիւն. եւ ադամաւ մեռեալ ամենայն՝
երկրորդ ադամաւ կենդանանալ:
Վասն որոյ ընդ նոյն եկեալ ճանապարհ
առ նովաւ գթածաբար երկնայ-
ինդ ադամ, զմերս առեր բնութիւն
կատարելապէս զհոգի զմարմին եւ
զմիտս. զի նմանեաւն զնմանն մաք-

րեսցես։ Իջեր 'ի տեղւոջ հանգստին
իբրև զքաջ ըմբիշ, ուստի նա ըս
կսանի զպատերազմն․ քանզի յորո
վայնէ սկսանի և մինչև 'ի մուտ
մուսոյ արգանդի գերեզմանին
ոչ դադարի։ Ողջացար անպարտա
բար․ ծնար ըստ մեզ, թէև 'ի վեր
քան զմեզ՝ զի 'ի կուսէ։ Ընդ ա՟մ
հասակս անցեր անպարտապէս։
Նա՛ լոյսդ զխաւարն մարմնոյս լու
սաւորեցեր․ և խաւարն ոչ եղև
հասու։ Նա՛ պահեալ զբնութի՟ս
զհոգի զմարմին և զմիտս 'ի բնա
կանն յորում ստեղծեր՝ անխառն
'ի չարին արկածից։ Որ և 'ի լրումն
եկեալ հասակին ասէիր, ո՞վ յան
դիմանեսցէ զիս վասն մեղաց․ և՝
գայ իշխան աշխարհիս այսորիկ
և յիւրոցն յիս ինչ ոչ գտանէ։
Որով զնախադրեալն վ՟քո ճշ
մարտէիր․ թէ ոչ արար մեղս և ոչ
գտաւ նենգութի՟ 'ի բերան ն՟ր ։
Նա՛ երևեցուցեր զբնութի՟ս ար
դար․ և զքեզ հարբ և հոգւով
ի ան

անբամբաս 'ի յարարչութեանն ։
զի ոչ չար՝ այլ բարի՛ ստեղծիք։
Օ ի աշմ որովհետև նորայն ոչ
խառնեցաւ որում չարութեան,
երևեցաւ թէ բարի էր բնութիւ.
և խայտառակեցաւ սկզբնահայրն
չարութե. եթէ նա՛է սկիզբն և ար
մատ և առիթ մեղաց. ըստ առաքե
լոյ՝ թէ յայտ յանդիման խայտա
ռակեաց. նշաւակեալ զնա յանձին
իւրում։ Այսինքն զի քո մրմնոյդ
անմեղութ՝ն՝ առաջի հօր և հոգւոյ
և հրեշտակաց մեց երևեցուցեր
զարդարութի բնութես. և զպարտա
ճորութի թշնամւոյն. զոր իբրև
յայտնեցեր, հայցեցեր 'ի հօրէ և
'ի հոգւոյն զազատութի բնութես.
զորև ընկալեալ 'ի քեզ արդարա
ցեալ զբնութիւ։ Այց քանզի ար
դար է՝ զնախկին յանցաւորութն
որով հետևեալ մարդիկ չարին
պատրանաց յանցեան՝ պահանջէր
զհատուցումն. կամ ինքեամբք հա
տուցանել, և կամ զբոյդ անմեղ
իա մար

մարմին տալ փոխանակ նց՟ 'ի մահ·
նուէր հաշտութեան կամացն հօր
ըստ արդար իրաւանց։ Ըստ որում
հնազանդեալ կամացն հօր՝ եկեալ
'ի չարչարանսն ահիր՝ զերկիւղ
բնութեան յայտնելով, եթէ հնարէ
այլով օրինակաւ առանց մահու
իմոյ փրկել մարդկան 'ի մահուանէ՝
բաժակ մահուս յինէն անցցէ։
Ապա թէ այլով ինչ չէք փրկու-
թիւն, արբից զայս՝ եղիցին կամք քո։
Նա՛ իւր չէր հնար այլով փրկուէ՝
արբեր զնա· տուեալ զանմեղ մար
մինդ քո զանպարտականդ մահու
'ի մահ։ Զի անձն որ մեղիցէ նոյն
և մեռցի· և զի ոչ էիր մեղուցեալ՝
ոչ էիր պարտական մահու · այլ
զանպարտդ ետուր փոխանակ պար
տաւորացս։ Զոր ընկալեալ հօր՝
հաճեցաւ և եթող զպարտիս բնու
թեան՝ արդարացեալ 'իքեզ։ Նա՛ զօ
րացաւ անպարտիդ մահ, զամենե
սեան ազատել 'ի դատապարտութե՟
մահու։ Նա՛ ընդ քոյդ յարուցել

 մար

մարմին, զամենեսեան հօր ընծայե
ցեր և ը̃ աջմէ նորին յուսով նըս
տուցեր։ Ըստ ասելոյն, ընդ նմին
յարոյց և ընդ նմին նստոյց յերկ
նաւորս 'ի Քս̃։ Ար̃ պարգև արդա
րունեդ քո և անպարտ մահուդ 'ի
հօրէ զփառակից հոգիդ առեր,
և 'ի գլխոյդ յանդամս քո ըսփռե
ցեր. փոխանակ զի բարձաւ նա 'ի
մարմին եղելոցն։ Ար̃ լցեր անձա
ռելի շնորհօք զեկեղեցի քո։

Այլ ես եղկելիս և երեքթըշ
ուառեալս բիւրուց պատ
ժոց արժանաւոր, այսքանեաց և
այսպիսեաց շնորհի և երախտա
գործութեց որ գերազանց է քան
զբան 'ի բարերարէդ առիս եղէ
անշնորհակալու և ապերախտ գը
տայ։ Այ̃ զի որբեալ և մերկեալ
քո արդարութեդ, 'ի փլըխածն
անդրէն ըստ առակին դարձայ և
'ի տիղմն թաւալեցայ։ Ար̃ ես չար
քան զառաջինն. որքան յայնժամ

որդիութե գոլ յանցաւոր՝ և այժմ
գիտութե։ Ո ի ծառայ որ գիտէ
ըզկամս տն և ոչ պատրաստեցի
ըստ կամաց նր, արբեցէ գան բա
զում. և որ ոչն գիտէ և արժանի
գանի ինչ գործիցէ, արբեցէ գան
սակաւ։ Ո ի և ոչ զուգորէն 'ի
թագաւորէ 'կրէ' պատուհաս որ
խորհրդակիցն է և սեղանակից և
'ի բազում պատիւ վայելեալ, հան
գունակ յանցաւորութեն այնմիկ
որ օտարն է և անծանօթ։ Ո ի
բազմաց և անթւելեաց մեծամե
ծաց և զարմանալեաց 'ի սկզբանց
և այսր եղելոց բարեգործութեց՝
բոլորովին գտայ յանցաւոր։ Ո ի
զգործիս առաքինութե 'ի ստացո
ղէդ բնաբար առեալ, զոգի զմար
մին և զմիտս, զօրութեք և զգայու
թեք, զէն անօրէնութե պատրաս
տեցի։ Նա՛ զտաճար սրբութե զոր
ստացար քեզ 'ի բնակութի, բագին
բելիարայ յարդարեցի։ Ո պատ
կեր արարչին զանձն բանական

մաքուր զօրութեք. քեզ յարմարել՝
ողորմալի ախտիւք տգեղացուցի:
Հպարտութ և ամբարտաւանութ
նախանձու և ատելութ. փառասի
րութ և ընդպարծութ. որով
իսկապէս հակառակին պատկեր
յօրինի: Ո՜ ծառ կենաց խոհակա
նութիւնն ՚ի մէջ ծառոց դրախտի
զգայութեանցս, զընտրողականն
բարւոյ և չարի, ընտրել չարին
մասին արարի. ՚ի նոյն հետևմամբ
յո՛ր անդառնալի: Ո՜ արիական
զէնն անպարտելի, ընդդէմ օձին
սուր անբըթելի, ՚ի ցասումն եղ
բօրն յեղաշրջեցի. խոցել անխնայ
անողջանալի: Ո՜ ողջախոհութե գոր
ծին պանծալի, որով յածային
սէրն հպէի, պոռնկականին դարշ
և ողորմալի, սատար արարի անպատ
կառելի: Ո՜ մաքուր խորհրդոց
գանձարան զմիտս՝ յոր զածայինն
հաւաքէի. խորհրդոց չարին սեն
եակ արարի. ուստի զանմտութին
յո՛ր բղխեցի: Ո՜ տեսարանս լու

սոյ ընդունակ, զտեսութի՟ երից
բերօղ յստակ, որ ըստ պօղոսի տե
սուե՟ զգալեացս 'ի ծանօթութի՟
արարչին գայի, յարատ հայեցից
զէն պատրաստեցի. նիւթոյ եդե
ղոց գեղեցկագունի. և'ի կապար
ճաց անզգամութե՟՝ նետիւք ցան
կութե՟ զոգիս խոցեցի։ Լո՛ զլա
րանս բանին կենդանի, որ 'ի բե
րանոյ ա՟ն միշտ բղխի. որով քաղ
ցութի՟ ոգւոց կերակրի. զմայլեալ
խնդութե՟ որ ոչն թափի, խրատու
սկզբնաչար վիշապին բացի. հան
գոյն նախամօրն իմոյ ե՛այի. որով
փոխանակ լուսեղէն զգեստի՝ զա
ղարթ թզենւոյն ինձ կարկատեցի։
Ո՛ ծապքողականս կերակրոյ զգա
լի, որով բնու՟իս պահի կենդանի
որ պարկեշտութ՟ն սպասաւորի. 'ի
պաշտօն կալով տեառն հրամանի.
հանդոյն դժոխոց ընդարձակեցի.
որ միշտ առնլոյն ո՛չ երբէքյագի.
'ի տիպ հրոյ որ զնիւթ փայտի, որ՟ք
և բազում առնու բորբոքի։

Ո շօշափականս գործի ձեռին,
որ 'ի սպաս տանս միշտ բանակա-
նին. զի և 'ի մաքուր մաղթանս ա-
ըարչէին՝ աներկուանալի 'ի վեր համ-
բարձցին. 'ի շարժել ցասման սրտ-
մտականին. ձգեցի 'ի հարուածս
անպարտ ընկերին. և շօշափման
ախտականին՝ պաշտօն արարի ըստ
մեղսասիրին: Ո անուշահոտութ-
իւղոյն թափելոյ, 'ի յօրինորդացն
միշտ սիրելոյ, ընդունակ ազդման
խնկոյն բուրելոյ, առ 'ի պօղոսէ
յայտնի եղելոյ. վիշապին չարի
գարշութեն հոտոյ. 'ի յորովայնէ օ-
ձին ժայթքելոյ. ընդունակ եդի
ըստ երկրադիւին. 'ի նոյն յօրա-
ցեալ հանդունակ նմին:
Ո իշխանականս մտաց շարժման՝
որ ծնունդ բանից անմարմնէն.
գործի մարմնական բանի յօդա-
կան. որ շրթամբք ընտրեալ տան
'ի լուր ունկան. նեցուկ արարի
չարախօսութե. և բամբասանաց
ընդ հայհոյութե. խօսեցայ զբան

ապիրատութե՟ · ընդ որում համար տամ՚ի դատաստանի։ Ո՜ Ճանապարհին կենաց ընթացողդ, և պատուիրանին տն՟ զգուշացող· աւետարանին կօշկաց զգեցող· զի մի՛ հարցէ օձն խածանող։ չարին կօշկաց էդի հետևող· որ ՚ի կորստեան դըրունսն է ածող· ուղղոյն մոլարի եղէ սիրեցող · որէ դժոխոց յատակս հայեցող։

Արդ այսքանեաց չարեաց իներքոյ անկելոյ՝ ո՞ր յոյս փրկութեան կայցէ կամ ո՞ր ներել թողութե՟ ։

Ազի անկայ անպատհպանաբար ։
Կործանեցայ անպատսպարան ։
Գլորեցայ անկազդուրական ։
Վիրաւորեցայ անբժշկական ։
Աղտեղացայ անմաքրական ։
Գարշեցայ անսրբական ։
Տղմաթաւալ անլուացական ։

Հոգւոյս ՚ի յերերման , մրրկօքս յար ՚ի տատանման։ Ուստէք չունիմ յոյս փրկութե՟ և ո՛չ ներումն թողութեան։

Իը Այլ

Ողջ ահա՛ յանդնդային խորոցս անյուսունս առ քեզ վերամբառնամ զակն մտացս բարերար․ մարդասէր․ ողորմած․ անյիշաչար․ ներող․ երկայնամիտ․ ամենագութ․ ամենախնամ։ Ո՛ բարերարութիդ յիշելով վերականգնիմ։ զմարդասիրութիդ և հաստատիմ։ զողորմածութիւնդ և սրտապնդիմ ։ զանյիշաչարութիդ և քաջալերիմ ։ զներողութիւնդ և պատսպարիմ։ զերկայնմտութիդ և կազդուրիմ։ զգթութիւնդ և ուշաբերիմ ։ զհայրաբար խնամսդ և նորոգիմ վերստին ։

Որ վատնողին զստացուածսդ հայրենի՝ անառակ որդւոյն, որ ՚ի սովամահ չքաւորութենէն և՚ի խոզապարէն կերակրոյն դիմեաց առ հայրդ բարի, ո՛չ հանդուրժեցեր գալ առ քեզ․ այլ ՚ի հայրականդ շարժեալ գթոյ ընդ առաջ ընթացար նմա․ գիրկս արկեր

իթ համ

համբուրի՛ արժանացուցեր. զլու-
սափայլ վերարկուն զգեցուցեր.
արքունական մատանեաւն զար-
դարեցեր. աւետարանական կօշ-
կօքն ամրացուցեր. Ո՛չ դարովեցեր
թէ ո՞ւր էիր յայսքան ժամանակս.
Ո՛չ կշտամբեցեր թէ զի՞արդ վատ-
նեցեր զհայրենիսն. Ո՛չ սաստեցեր
թէ զի՛արդ կերար զկեանս իմ ընդ
պոռնիկս. Այլ փաղփաղալի հրա-
մայեցեր ծառայիցն՝ թէ ածէ՛ք
զեզն պարարեալ. զենէ՛ք կերա՛յք
և ուրախ լերուք. զի որդիս իմ այս
մեռեալ էր և եկաց, կորուսեալ էր
և գտաւ.

Յիշեմ և զայն, թէ ՚ի գիւտի մո-
լորելոյ ոչխարին և դրամին՝ ու-
րախութիւն եղև հօրդ երկնաւորի
և երկնայնոցդ. Յիշեմ և զմիած-
նի բանիդ զերանաւէտ բարբառդ
և սփոփիմ. որ ասէիր, ո՛չ եկի կո-
չել զարդարս, այլ զմեղաւորս.
Ա՛հ ո՛չ է պիտոյ բժիշկ ողջոց,
այլ հիւանդաց. Ա՛հ զողորմութի

կամիմ քան զպատարագ ։ Նա՛ է
կա՛յք առ իս ամ աշխատեալք եւ
ծանրաբեռնեալք եւ ես հանգուցից
զձեզ. Նա՛ն՝ զչարչարանս եւ
ըղձախատինս եւ զթշնամանս եւ
զփուշն եւ զկռափանսն. զթուքն.
զապտակն. զքղամիդն. զեղէգնն.
զքացախն. զլեղին. զմերկութին.
զբեւեռսն. զգեղարդն. զմահն կա
մաւոր. զդնիլն ՚ի գերեզմանի եւ
զյառնելն յերրորդ աւուր ։
Նա՛ այսօքիւք եւ զհազարապետութին
անձառ խորհրդոյն զյուսա
դրական բանսն նկատեմ. մեղք
ձեզ տէր ոչ տիրեսցեն. քանզի ոչ
էք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք ։
Նա՛ թէ՝ մինչդեռ տկարքն էաք,
քս վն մեր ՚ի ժամանակի ՚ի վերայ
ամբարշտաց մեռաւ ։ Նա՛ յայտնե
ցաւ սէրն այ ՚ի մեզ. զի մինչդեռ
մեղաւորքն էաք, քս վն մեր մեռաւ ։
Նա՛՝ եթէ մինչ մեղաւորքն էաք,
հաշտեցաք ընդ այ մահուամբ որ
դւոյ նորա, որչափ եւս առաւել ՚ի

լա հաշ

հաշտիլս մերում ապրեսցուք կե-
նօք նոր։ Ո՜ յիւր որդին ոչ խը-
նայեաց. այլ վն մեր ամենեցուն
մատնեաց զնա։ Ո՜ թէ՛ քնէ որ
եղև մեզ յայ արդարութիւն և
սրբութի և փրկութի։ Ո՜ որ կայր
մեզ հակառակ, եբարձ զայն ՚ի միջոյ
և բևեռեաց ընդ խաչափայտին։
Ո՜ զձեզ որ երբեմն օտարացեալ
էիք խորհրդով ՚ի գործս չարու-
թեան, այժմ ա՛ւադին հաշտեցոյց
անդամօք մարմնոյ իւրոյ. յանդի-
ման կացուցանել զձեզ սբս և ան-
բիծս և անարատս առաջի նր։
Արդ՝ այսու ամենայնիւ՛ քաջա-
լերեալ վերականգնիմ յանդըն-
դոց անյուսութեն. մանաւանդ
ասելովս թէ՝ անդամօքն հաշտեցոյց
և արար սբս և անբիծս և անա-
րատս։ Ո՜ զի՞նչ այլ այս, եթէ ոչ
նմանեաւն ըզնմանոյն նշանակէ
մաքրութի։ Ո՜ ոչ միայն սրբէ,
այլև անբիծ և անարատ առնէ։
Որոյ և զայս աղերս արկանեմ

առաջի գթածիդ մարդասիրիդ և
ողորմածիդ. զի բոլորովին իմովս
զոր առեր և ընդ քո ա՟ծութիդ
միացուցեր, և պահեցեր անբիծ և
անարատ յա՟մ արկածից չարին,
զիմս մաքրեսցես անմաքրութի՟:
Ո ի վ՟ն այսորիկ բնաւին իմոցս
հաղորդեցար և ոչ կիսամասնեայ,
այսինքն ոգւոյ մարմնոյ և մտաց,
զի բովանդակ արասցես փրկութի՟:
Աստ որում առ հայր ասէիր, ի վ՟
նոցա ես ս՟բ առնեմ զանձն իմ.
զի եղիցին և նոքա սրբեալք ճշ՟
մարտութ՟: Արդ՝ հոգւովդ բանա
կանաւ զոր ամենայնիւ պահեցեր
անարատ 'ի յարկածից չարին ըստ
առաքելոյ՝ արդարացաւ հոգւով.
առոր և աշխարհիս իշխան ոչ ինչ
եգիտ յիւրոցն, մաքրեա՛ զհոգի իմ
յա՟մ ներգործութեց չարին. զոր
կամաւ և ակամայ յիս ընկալայ.
'ի հպարտութե՟, 'ի փառասիրութե՟,
յամբարտաւանութե՟, 'ի սնապար
ծութենէ, 'ի նախանձուէ, յատե

լութենէ. և որ միանգամ յոգիսն ներգործին առանց կցորդութե մարմնոյ. և որք 'ի մարմնակինս խառնեալք յարին. և ընդա՛ որ ինչ շարժմունք են հոգեկան ախտից:

Այլ և մասամբք և զօրութեամբք նորին, զինս աղտեղեալ մասունս և զօրութիս սրբեսցես բանկնին:

Խոհականան որէ ընտրող բարույ և չարի, որ ըստ Եսայեայ՝ զոր նախ քան զճանաչելն զբարի կամ զչար, արարեր անարգող չարի և ընտրող բարոյ, Ո՛ իմն բիւրուք ախտացեալ խորհրդովք խոհականութի, որ իբր 'ի շտեմարանէ չարին՝ յարաժամ բղխէ զանհանճարութիւնն և զմոլար ընտրողութիւն, քանե՛ա բարերար և շնորհեա խորհիլ յօրէնս քո 'ի տունջեան և 'ի գիշերի.

Յամնականան զոր սանձեցեր և չարին ներհակ զինեցեր, զինս ըստունդանող քոյս հրամանի, որ թշնամութի եդեր Ը օձին,

առ որ սիրոյ դաշն յօդեցի. և զոր
՚ի քէն նշանակ աշակերտութեան
զսէր ընկերին առի, զորտմտակնն
առ այն դարձուցի և զդառնու-
թոյնս փոխեցի. մաքրեա՛ ո՛ղորմած
և արա՛ դառնալ յեղքօրէն և զե-
նիլ ընդդէմ վիշապին:
Յանկականաւ՟ ողջախոհութեն՝
զոր սէրդ ճշմարիտ՝ միշտ սիրոյ
գործի արարեր ըստ բնականին
յորում ստեղծեր, Ո՛ իմս որ ըս
տերիւրեալ ՚ի բնականէն և հե-
տևեալ մոլարին շա՟ղաց՝ զոր յերկ
րայինս սէր դարձուցի և գարշ
ցանկութեց զէն պատրաստեցի,
որբեա՛ մա՛րդասէր և բնականին
արա հետևող. սիրել զքեզ ՚ի բոլոր
սրտէ. յամ անձնէ և զօրութէ. և
ընկերին զնոյն երկրորդել ՚ի չափ
անձին ոչ ուսուցեր:
Իմաստութի հօր յս, քո՛ է խոր-
հուրդ և զգօնութի. քոէ հան-
ճար և գիտութի: Որ առատահոս
զեղմամբ զերկնայինս և զերկրա՟ւորս
լե                    հա

համանգամայն լցուցանես՝ անկա
րօտ գոլով մօաց։ Իսկ առնլով
զիմս յաղագս իմ,՝ ՚ի չարին բնաւին
անբասիր պահեցեր շարժմանց ։
որով զգահոյս եղեալ հանգստեն
ապստամբ զօրութեն անթուելեօք
յիմար իմացմամբք՝ քաւեսցես ա
մենագութ ՚ի յոքնակի մոլար մը
տածմանց ։ և վերնագունիցդ ա
րասցես դիտօղ ։ ուր կարապետդ
մեր մաեր՝ հօր յանդիման առնել
երեսաց ։ առհաւատչեայ մեր և
բարեխօս ։

Նորին այն և աննիրհ պահա
պան, բաց յամենայն ճանապարհս
որդւոց մարդկան ։ որ ՚ի քրովբէս
նստիս և զանդունդս նկատես ։
և միշտ յարդարս և յերկիւղածս
քո հայիս ։ զոր իմն կենդանարմատ
ծայրին՝ փոխանակ իմ կափուցեր ։
Նովին ջնջեա զարատ հայեցուած
տեսարանացս ։ զոր ՚ի գեղեցիկ քո
ստեղծեալ դիմաց՝ որով ՚ի քոյդ
պարտէի շարժիլ փառաբանութե

 սաս

սաստիկ առի զխոցուածս վիրաց
անբժշկականաց. այլև չարակնութե
ոչ կարացի հայիլ 'ի բարիս ընկե-
րին։ Այլ լուսաւորեա զամ զի մի
երբէք ննջեցից 'ի մահ. և դարձո
'ի տեսանելոյ զնանրութի. և զարթո
նայիլ առ քեզ յամ ժամ, և 'ի սքան
չելիս օրինաց քոց. և տեսութե
նիւթականիս՝ շարժիլ 'ի քոյդ ան
նիւթ գիտութիւն։

Որ զտնանկաց լսես ցանկութե
և 'ի պատրաստութի սրտից նոցա
հայիս, լուր պաղատանաց հեքոյս։
Այլ լարինօքդ ամենամաքուր զոր
ոչ մատուցեր օձին, սրբեա սըր
բարար զիմս լսարան 'ի մահացու
թունից վիշապին. որով զբիւրա
կերպ խոցուածս բանից թշնամու
ես ինձէն յոգիս գանձեցի. և յա
ւէլ ինձ ունկն լոյ կեցուցիչ քո
պատուիրանի. որոյ և լուրն բաղ
ձալի յառաւօտին վերջին հնչեսցի

Որ հոտոտիս տր կամարար քան
'ի պատարագս 'ի կամս տեց քոց

Լէ և

և 'ի վարս. և զանուշահոտութիւն քո
բուրեա՛ որոց զնոյն քեզ վերըն-
ծայեն: Մաքուր ընդամէք քո
'ի մեղկութեց, զիմս մաքրեսցես
մատնեալ հեշտութեց. որ 'ի յօքնա-
զան անուշահոտութեց, մեղկացայ
յաւէտ թուլութբ կամաց: Եւս
'ի գարշելի ժահահոտութիս տղմային
ախտից, զօրէն ընդուան բերայ
ցանկութեամբ: Եւ թօթափելոյ
իւղոյդ քո բուրման, ըստ օրիոր-
դայն սիրոյ ձգման. և անուշահոտ
քոյոյ գխտուն, անձառելի խորոցդ
հասման, արա՛ ընդունակ ըստ ա-
ռաքելոյ. անընդմիջաբար
միշտ վայելելոյ:

Ով յաւիտենական որ ոչ քաղց-
նուս և ոչ ծարաւիս. որ տաս
կերակուր ամենայն կենդանեաց.
բանաս զձեռն քո և լցուցանես:
Եւ մինչդեռ բնութիդ էր անմար-
մին, կերակրեցար առ բարեկամին.
և 'ի լինելդ քո մարմին, անշուշտ

կրեցեր զկիրս նորին։ Քաղցեար
անկարօտդ յանապատին, և ծարա
ւեցար մերձ առ ջրհորին։ Հարկա
ւորացն հաղորդեցար, և յաւելոր
դացն պատսպարեցար։ Ո՛ խմն որ
ան յաղ մոլուէ բացի զճաշակելն
հանդէս դըժոխոց, և զորովայնս
խըճողեցի տարաժամ ձգմամբ նը
ման անբանի, քոյովդ սրբեսցես
ամենաբարի․ որ աւելորդ․ յնէ ան
հպելն․ և քաղցրացուսցես յիմում
կոկորդի, զ'ի յերկնից իջել հացդ
կենդանի․ և զբան սբց քոց պատ
ուիրանի, ըստ նմանութեան
մեղու խորըսխի։
Աջ և բաղուկ հօր յո, ընդ իմ
ձգեալ 'ի փրկութի և'ի փանումն
ներհակին․ որ տարածեցեր զաշ
խարհաստեղծ բազուկս քո 'ի վր
կենսաբեր փայտին․ և պատառե
ցեր զդատակնիք յանցանաց նա
խաստեղծին․ և զձգումն ձեռաց
նորին՝ կթել զպտուղն մահածին,
բժշկեցեր ամենակարօղ՝ հեղուսե
լԹ                    քո

քո 'ի նմին։ Պաոլլին և զիմս բժշկ-
կեսցես ամենազօր տէր բարերար,
զգործիական ձեռս 'ի վնասուց,
հեռացելոյ չարին խրատուց. կար
կամելոյ ձգել յաղքատս, և անվե
հեր տալոյ 'ի հարուածս. գողանա
լոյ և կծծութե, և ախտաշարժ շօ
շափման։ Տո՛ յընդ դէմն փոխո
խեսցես. գործել և տալ ում պի
տոյ է. և բարկութեան կրից ար
տաքոյ՝ միշտ համբառնալ առ քեզ
մաղթանօք. և շօշափել զբանդ կե
նաց, հանգոյն բանի քո սպասա
ւորաց։

Որ ըստ տեսանողացն ձայնի՝ ոչ
արարեր մեղս և ոչ գտաւ նեն
գութ 'ի լեզուի քում. այլ բանդ
հօր զկենդանի բանդ բղխէիր 'ի
փրկութիւն և 'ի կեանս լողաց։
Ըստ որում որ ճաշակեացն 'ի նմա
նէ աղաղակէր, տէր առ մի երթի
ցուք. բանս կենաց յաւիտենակա
նաց ունիս։ Որով զմեռեալսն յա
րուցեր և զբորոտսն սրբեցեր։

Ըզկոյրսն լուսաւորեցեր և զան
դամալոյծսն հաստատեցեր։
Զդեւսն հալածեցեր եւ զհիւ
անդսն ողջացուցեր։ Որոյ և հա
րիւրպետն ասէր, բանիւ միայն ասա
և բժշկեսցի մանուկն իմ։ Այլ
դուք և սրբարար լեզուաւ սրբեա
զանբերելի ցաւս լեզուի իմոյ։
Ի չարախօսութէ և զհայհոյութէ ։
Ի բամբասանաց և տրտնջելոյ ։
Ի թշնամանաց և նախատանաց ։
Ի դատելոյ և զդատապարտանէ։
Ի քսելոյ և գրգռութեան ։
Ի մատնութէ և զրպարտութէ ։
Ի ստութէ և երդմնահարութէ։
Ի յերկինս դնելոյ և զերկրաւս
ածելոյ։ Ի ըստ նմանութէ օձի
սրելոյ, և թունիւք իժից իներքս
ունելոյ։ Այ՛ փոխեա՛ զխօսս փառա
բանութէ ամենազօրդ քո տրութէ.
և յանկեղծաւոր խօսիլ քո բանի՝
առանց երկիւղի և պատկառանաց.
զի լիցի շնորհօք քո ի բերն աղի
համեմեալ. տալով շնորհս լսողաց։

 Աս

Վաստակեցար յուղէգնացուն,
ո՞վ հանգիստ ես աշխատելոց.
և հետիոտս ընթացար՝ որ գնաս՚ի
թևս հողմոց: Թեթևացար ՚ի վ̃ր
օդոց՝ և անթաց ընթացիւք գնա-
ցեր ՚ի ջուրս: ՚Ի յանխոտոր շա-
ւիղս ընթացար՝ անտեսանելի յա-
կանէ անդեղ: Զգլուխ թագա-
ւորական իժին և քարբին՝ սուրբ
գարշապարացդ կոխան արարեր.
Եւ ընդ նախահօրն ընթացից ՚ի
ծառն՝ ՚ի կենաց փայտն բևեռե-
ցեր: Արդ ընդ արդար քոյդ
ընթացից՝ զխմոյս քաղցրեսցես զան-
իրաւութի: Զերագ ընթացս ՚ի
հեղումն արեան. որ է բեկումն և
թշուառութի: Զշաւիղս ՚ի տե-
ղի պոռնկանոցի, և կամ որ նման
նմին զազրութեան. Զգնացս՚ի
թատերս և՚ի գինարբուս՝ որ հա-
սուցանէ յատակ կորստեան.
Այ դարձո զշաւիղս մոլորութն՝
՚ի ճանապարհս քո խաղաղութե.

խջ Ընդ

Ընդ աղբ կալ 'ի յարկս քո սրբու-
թեան, քան փառօք մեծաւ 'ի մե-
ղաւորաց։ Օ խաչ քո առնուլ
զուրացմամբ անձին՝ և գալ զկնի քո
Հօր միածին։

Այլև ընդ կուսից մաքրական,
զոր յաղագս իմ կրեցեր ամենայ
զօր զհարկաւորս և զբնականս,
Օ իմս որ ընդ հարկաւորացն՝ ա-
ւելորդքն, և ընդ բնականսն՝ ան-
բնաւորքն միշտ խառնեին, սրբեա՛
բարեգութ և մարդասէր։
Ընդ քաղցոյն՝ զորովայնամոլութին։
Ընդ ծարաւոյն՝ զարբեցութին։
Ընդ վաստակոյն՝ զմշակութիւնն
յայգիս առոգմայ։ Ընդ ննջելոյն՝
զանյագութի քնոյն և զթմրութի
հեշտութեն 'ի մեղս։ Ընդ արտաս-
ուացն՝ զլկտութի ծաղուն․ յորմէ
բղխում անզգամ չարաչար արտաս-
ուեցի։ Ընդ երկիւղին՝ յերկեղէ
թշնամեոյն փրկեա՛ զանձն իմ։

Այլև հասակօքդ զանազանորոց
ըստ կարգի հաւասարեցար․
խղ զպէս

զպէսպէս հասակացն իմ աղտեղուե
լուա՛ցես փրկիչ ամենակարող:

Ո՛ զի ծնունդդ ծոցածին էու֊
թեանն հօր՝ կամա՛ւ հօր և հո֊
գւոյն իջեր յարգանդ ամենամա֊
քուր կուսին՝ և յղացար անարա֊
տապէս ՚ի նորին բնութենէ:

Զ յղացեալս անապականութեամբ
յախտաւոր բերմանէ, ըստ ասե֊
լոյն՝ անօրէնութե՟ յղացաւ զիս
մայր իմ. սրբեա՛ ա՛նբիծ՝ յարատա
ւոր յղութենէ:

Ո՛ զի ծնար անապականաբար
յանապական կուսէն ըստ մեզ և
՚ի վեր քան զմեզ. զԼուսուի ծնո
ղին ամբողջ պահելով: Լո՛ւա՛ ան
ապականութե՟ ծննդեան քո զծը
նունդս մեղաց: Զ ի ՚ի մեղս ծը
նա՛ւ զիս մայր իմ. զի ծնայց վերս֊
տին յանապական սերմանէն յոր
դիս լուսոյ հօրդ երկնաւորի. և
յեղբայրութիւն և ժառանգակ֊
ցութիւն միածնիդ:

Ա՛ զի տղայ եղեալ կաթնասուն
դիեցայր․ որ ողորմութե՜ պահես
զտղայս։ Զտղայութեանն իմոյ
սխալանս և զանմտութիւնս շաղփաղ
փութիւն՝ քաւեա կաթնասուն քո
տր լինելովդ։

Ա՛ զի ՚ի մանկութե տիս ժամա
նեցեր ըստ կարգի բնութեն՝
յամի գոլով սքանչելի․ և շնորհք
այ էին իմ քո։ Զմեղս մանկութե
իմոյ և զանգիտութե մի յիշեր․
այլ յիշեա զիս ըստ ողորմութե քո
զի քաղցր և ուղիղ ես տր։

Աճեալ և յարբունս պատանե֊
կութեան իմաստութիդ հօր․
որով ՚ի տան հօր քո զվարդապետս
ծնոյն հիացուցանէիր։ Այլ դու
զիմս քաւեսցես զպատանեկութե
յանցանս ողորմած ըստ մեծի
քում ողորմութեդ։

Ա՛ զի ՚ի չափ կատարելութեան
յերիտասարդական հասեր հա֊
սակի․ յորում եռանդն տմ ախտից
յորդեալ զօրեղապէս բնութես

իմ տո

տոչորիչ. և յայսմ ե՛ս առաւե՛լ յաղ
թահարեալ վերակացուն ախտից:
Ո՛ ի անգամագիտ պատառօղ նե
ժանեացն ՚ի բնաւ՛իցն կացեր ար
կածից: Սրով զեռանդն հրոյ փոր
ձութեան յանդաման իմ հոսելոյ
և հակառակ ինձէն զինելոյ, շի
ջուցես բա՛րերար. և զօրացու
ցես ընդդէմ ախտիցն. արդարու
թե՟ քո զինու վառեալ:

Ե՛ւ զի դու նո՛յն ես և ամք քո
ո՛չ անցանեն. ո՛չ ծնանիս և ո՛չ
ծերանաս: Ո՛ ես որ ծնացեալ եմ
ախտիւք մեղա՛ց և ծերացեալ ա
՛նուրբք չարութե՟՝ նորոգեսցես
շնորհօք քո ապրեալ. ՚ի նախեղե
լոց պարտեացն զերծեալ. և յապա
գայիցն միշտ պահպանեալ:

Ը՛նկա՛լ բարերար. և մարդասէր
զսոյն պաղատանս առ յինէն քեզ
վերընծայեալ. և՛ի դիմաց համօ
րէն քո անդամոց մարդկայինս սե
ռի. զոր ըստ անբա՛ւ խորոցդ. և

խղ ան

անհասանելի դատաստանացդ՝ որ
նորէնութ՟ք քո յօդեցեր՚ի գլուխ
սրբութ՟։ Այլ բոլորովին զամենե
սեան մաքրեսցես ՚ի քեզ քոյովք դ
արդարացեալ. որպէս զի և մի ան
դամ մ՚ախտացեալ զանբժշկինն՝
ի բաց հատցի յա՟ծային և՚ի գերա
կատար հասակէդ։ Ո՟ր համան
գամայն զընա՟ն ՚ի քեզ սրբեալ
և արդարացեալ վերստին՝ ընծայ
եսցես հօր քո երկնա՟որի ՚ի լրում
աստացելոյն, ահա՟ւորի զորս է
տուր ցխա, ոչ կորուսի ՚ի նոցանէ
և ոչ զոք։ Զ՟արս և զկանայս. ըզ
ծերս և զտղայս. զերիտասարդս
և զկուսանս. զիշխանս և որ ընդ
իշխանութ՟ե։ զՔահանայապետս
և որ ընդ նոքօք ժառանգաւորս։
Որք ՚ի պատ՟ուիրանապահութ՟ են՝
զօրացո ՚ի նոյն. հաստատեալ ՚ի
վե՟ր ճշմարտութեան ա՟անդիցն.
աններհակ յամ՟ չարին արկածից։
Այլ որք ըստ դիւրասայթաք որ
կար բնութես գթեցին ՚ի սխալանս

մեծամեծս և կամ փոքունս. հո-
գեկանս և կամ մարմնականս. և
կամ մտաւորականս. 'ի զգայու̃ս
նիւթականին և'ի մասունս տիրա-
կանին: Ո՛ ընաւ̂ն մաքրեսցես ո՛-
ղորմած և ա̀ն յիշաչար. քոյովդ սր-
բեալ և'ի.քեզ միացեալ: Ա̃մ զի
'ի բոլորդ քո մարմնոյ 'ի.քեզ սըր-
բելոյ և արդարացելոյ՝ վեր առա-
քեսցի Գ.լխոյդ Ճշմարտի օրհնու-
թիւն գովութ̃ի բարեբանութ̃ի.
յարդիս և'ի հանդերձելումն.
ընդ հ̃որ քո օրհնելոյ՝ հ̃ո-
գւոյդ Սբ̃վ. յաւիտենս
յաւիտենից
ամէն.

Սրբին Գրիգորի Սքանչելագործի Գոթ-
ճաջան Աստուածաբանին. Աղօթք ՚ի վերայ
ուր խորհրդոյն Թղթոյ.

ԱՆՍԿԻԶԲՆ ԷԻ.
անեղ՝ աներբ՝ անժամա
նակ՝ անհաս՝ անքննին՝
անիմանալի՝ անճառ.
Ինքնադատ, դատաւորաց դերադատ.
Ինքնաշարժ, յամենայնաշարժ, ան
շարժ. շարժօղ, դերաշարժ.
Բարի. աղբիւր բարութեան.
Ամենատես. անզննին. անձև. անորակ.
անբաժ բաժանեալ. կեանք կեն-
դանարար դերակենդան.

Անմահ անմահարար գերանմահ ։
Կատարեալ կատարիչ գերակատար ։
Լոյս լուսաւորիչ գերալոյս ։
Արարիչ ստեղծիչ նախախնամիչ ։
Անսահման սահմանիչ գերասահման ։
Անկշիռ կշռիչ գերակշիռ ։
Անքանակ քանակիչ գերաքանակ ։
Հզօր · փառաւորեալ · ահեղ ։
Ահարկու · սոսկալի ։
Անտանելի · անըմբռնելի · անշօշա
փելի ։ Բարձրեալ մեծութիւն ։
Օրհնեալ էութիւն · անշամանդաղ գի
տութիւն · անստուեր ծագումն ։
Ամենարփի ճառագայթ · վստահու
թիւն անտարակոյս · անաշխատ հան
գիստ ։ Քաղցրութեան ճաշակ ·
բերկրութեան բաժակ · զուարճութեան
արբումն · հոգւոց հաստիչ հաց ։
Ցանկալի ծածկոյթ · անկապուտ
զգեստ · փառաց զարդ · այցելու մեծ ։
Գովեալ ամենայն · շնորհ աննախանձ ·
գանձ անպակաս ։ Հովանաւոր
ամպ · ընթացող անձրև ։

Ծ Սեն

Ամենակալեալ ցօղ · ամենաՀնար
դեղ: Զօր բժիշկ · անարգամ-
ծար տր · սորկաւէք պաշտպան:
Ճոխուն անմուծանող · առատապար-
գև ձիր: Ամենաբաշխ աջ · խրատ-
կշիռ ձեռն · ամենաՀայեաց ակն ·
սփոփանաց ձայն: Բերկրուն լուր
Ընթացք անդայթակղելի · անխար
դախ ելք · աննախանձ տուրք · ան
նենգելի խրատ: Շաւիղ անՀե
տազօտելի: Հետք անքննելի ·
ԱնՀամեմատ գութ · անչափական
սէր: Յաղմաղեղ ողորմութիւն:
Երկայնմտութն անզուգական ·
Անոխակալութիւն անբաղդատ ·
անչարայուշութիւն անսաՀման:
Հրաման աննաՀանջելի: Օ օրեղ
ձեռնմկալու: Պաշտպան կարօղ ·

Փրկական Համբոյր:

Եւ որ ես դերամբառնայ քան
զմիտս և զբան անկշռելի քո
բարերարութեանդ Հանդէս:
Օրհնեալ յամ · գովեալ · բարեբա
նեալ · քարոզեալ · աւետարանեալ ·

ծա Հա

հուշակեալ․ հնչեցեալ․ պատմեալ․
՚ի դերաշխարհիկ բնութիւն և ՚ի
հանուր ազգս երկրածնաց։
Վասն զի ոչ ճանաչիս՝ եթէ ոչ ՚ի
բարերարութե․ և ոչ իմանիս՝ եթէ
ոչ ՚ի գիտութե ։ Ո՛չ սահմանիս՝ ե-
թէ ոչ յողորմութե ․ և ոչ քանա
կիս՝ եթէ ոչ ՚ի մարդասիրութե։
Ո՛չ հասանիս՝ եթէ ոչ յանհասու-
թե ․ և ոչ իսկ պատմիս՝ եթէ ոչ
յանճառութե։ Բազմօք յորջորջիս
կոչմամբք պատկանաւորօք քում
մեծութեդ․ և համայնք տկարանան
առ յայտնութիւն քո իսկութեդ։
Ո ՚ի զօրէն իւղոյ թափելոյ յանօ
թոյ, զէութին անկարացեալ ցու-
ցանել․ քան թէ դուզնաքեայ ըղ
գոլոշխս անուշահոտութեն նշանա
կել։ Նոյնպէս և ամ անուն ծա
նօթական կարծեցեալ քո մեծու-
թեանդ, հուսկ ՚ի վերջոյ մնայ ՚ի
յայտնութէ՝ բնութե աներևոյթ
և անտես քո իսկութեանդ։
Սակայն ըստ քերթողական արհեստի
ծէ ծա

ծանեաք զանուն յիրէ եւ՚ի ձայնէ
եւ՚ի ներգործութենէ: Ըստ որում
յաստիս ածմանէ ԱԾ. եւ՚ի տիրե
լոյ ամի ՏՐ. յառնելոյ զամենայն՝
արարիչ. եւ՚ի բարերարելոյ բնա
ւէից՝ բարերար: Յողորմելոյ ան
արժանից՝ ողորմած: Եւ՛՚ի գթու
թենէ վշտագնելոյ՝ գթած:
Յառաջահոգութենէ հանուրց,
նախախնամօղ: Եւ՛ յոչ պահելոյ
ոխս՝ անոխակալ: Եւ որ ըն այսմ են:
Եւ՛ ՚ի ներհակէն դարձեալ, ՚ի
դատելոյ արդարութէ՝ դատաւոր.
եւ՚ի խնդրելոյ զվրէժ ՚ի պարտա
ւորաց՝ վրէժխնդիր: ՚Ի նախան
ձելոյ՝ նախանձոտ. ՚ի ցասմանէ՝
բարկացօղ: Եւ որ սոյնպիսիք:
Յայսոսիկ նայելով իմ զարհու
րիմ եւ դողամ: Ա՛զի լսելով
ՏՐ մեր հուր ծախողական է, եր
կնչիմ խուիս մեղաց եւ փուշս
անօրէնութե. ծծումբս սոդոմա
կան եւ փուշս քաղդէական:
Գուցէ հանդոյն յատակին պղղ
ծէ ծու

ծուծ՝ անշիջանելեաւն բոցով իս-
պառ տոչորեցայց՝ մշտավառ կիզ-
մամբ 'ի հուրն յաւիտենական .
անհանդուրժելի խածմամբ՝ հրե-
ղէն և անվախճան տատամամբք:
Իսկ ասելոյն եթէ՝ սրտմտութի-
ան իբրև զհուր ձորալիր պա-
րանոցաթաղ յորդեցէ . և՝ բար-
կացան սրտմտութէ որ 'ի վր ժո-
ղովրդեան իւրոյ . և՝ 'ի սուր ան
դատեսցի ամ երկիր. և՝ սուր իմ
կերիցէ միս յարենէ վիրաւորաց.
և՝'ի խնդիր վրիժուց արձակեցից
զձեռն իմ փայլակնանման սուսե-
րաւ: և՝ Բաժակ 'ի ձեռին ան լի
անապակ արկեալ. և մրուր ոչ սպառ-
եալ. այլ տուեալ յարբումն ամ-
բարշտաց: Նա 'ի բարկութէ հուր
բորբոքեալ և սպառեալ մինչ 'ի
հիմունս լերանց. և անզաւակեալ
սուրն ներքոյ և արտաքոյ . ոչ ան-
խայեալ յերիտասարդս, և ոչ պատ-
կառեալ յալեաց. և ոչ գթացեալ
'ի մանկունս. և ոչ կրկնեալ 'ի կու-


սա

սանաց • կործանեալ խոպառ եւ՛
յերկրէ խլեալ կենդանեաց ։

Տապար յարմատս հարեալ անպտ
ղաբեր բարեաց տընկոյ և ներ
հակին քաջաբեր ոստոյ • և յարա
կեց և մշտնջենաւորն մատնեալ
բոցոյ ։ Ո՜ հեծանոցին ընտրողուն
և զծախուածն թեթեւութեն յարդին ։
Ո՜ խոտանն ի բաց ձգեալ յուռ
կանէն , և զժողովելն յարքայու
թենէն զգայթակղութիւնն ։
Ո՜ որոմանցն տրցակիլ և մատնիլ
՚ի յայրումն ։ Ո՜ ընդ մէջ հատումն
և ընդ անօրէնսն մասնաւորիլ ։
Ո՜ տարագրիլն աղտեղեալ զգես
տուն յուրախութեն հարսանեացն ։
Ո՜ շիջումն լապտերաց մորոսացն
և զփակիլ դրանցն առագաստին ։
Ո՜ պարաւանդիլն ոտիւք և ձեռօք
և ՚ի խաւարն ելանել արտաքին ։
Ո՜ կարգիլն ընտրութե ՚ի ձախս
կողմանն, և ՚ի մշտավառն հուր
զառաքումն ։
Ո՜ այսոսիկ՝ եւս քան ըզ սոյն

 բիւ

բիւրապատիկ սաստ սպառնալեց
արդարակորով չափմանց յածային
գրոց լծով սարսափին և դողան
երկկամունք իմ։ Վասն զի այսց
ամենեցուն իւրաքանչիւր պարտա
ւորութիք մանկան յանցանաց՝
ոչ համեմատին առ իմ յարաբար
դեալ լեռնահանդէտ և յոքնա
կոհակ ծովատիպ և ա՛նազաքատիկ
կոյտս մեղաց և անօրէնութեան։
Վասն զի ուրուրեմն ըստ գրոյն
իբրև զձող ցցեալ ՚ի լերին և կամ
հասկ մնացեալ ՚ի հունձս, և կամ
՚ի բարձու ոստս ծառոց խուն ինչ
պտուղս զհամայնիցն տեսանեմ
յանցանս. առ իմ քաղաքօրէն յար
կաց պղծութեան, և ատոքացեալ ան
դոց լիութեան, և քաջապտուղ ոստոց
չարութեան։ Որովք բիւրապատիկս
ըստ արդարակշիռ քո դատման,
ի վր իմ տեղացէ հուրն կիզողա
կան և շողացէ սուրն բարկութեան.
քան ՚ի նախասացեալ ստորերակերպ
տիպսն յանցաւորիս։

ԾՂ Նաւ

Եւ յորժամ նախանձոտ զքեզ ընթեռնում և ոչ կամեցող ըզ փառս քո պըլում։ Մանաւանդ յորժամ նախանձու վառեալ՝ խառազանահալած զանբանն և ըզ վաճառօղսն ՚ի հօրդ տանէն լսեմ արարեալ, պակնում յահաւորութենէդ։ Այլ զի ես ինձէն զտաճարս կազմ ամենայարմար պատկանաւորութե՛՝ ՚ի ձեռն աւազանին լուացման յարդարեալ և տեղի օթևանի քեզ և հօր քո պատրաստեալ, Սնեանական և գարշ ցանկութեքն արարի պղծեալ. և ցորենատարաց յօքնահամբար աղտեղի գործովք լցեալ. և ժահահոտ ժին կին պղնձոյ մեղացն զաղրացեալ։ Եւ չար վաճառականութեամբ, հեշտութեանն փոխանակեալ։ Օ՜ ողջախոհութի՛ն՝ ընդ վաւաշոտութե։ Օ՜ խոհականութի՛ն՝ ընդ անհանճարութե։ Օ՜ արութի՛ն՝ ընդ վատութե։ Օ՜ արդարութի՛ն՝ ընդ

ծէ ան

անիրաւութեան։ Ո՛ խոնարհութիւն
ընդ ամբարտաւանութեան. զգթու-
թիւնն ընդ անողորմութեան. զսէրն
ընդ ատելութեան. զքաղցրութիւն ընդ
դառնութեան. զճշմարտութիւնն
ընդ ստութեան. զպարկեշտութիւն ընդ
որկորստութեան. զհեզութիւնն ընդ
բարկութեան. զանստացուածութիւնն
ընդ արծաթսիրութեան. զպարզութիւն
ընդ կեղծաւորութեան։ Գուցէ բնա
կեցն շարժեալ նախանձու որով
զքոյն ոչ կամիս այլում զփառս,
արտաքս 'ի յարկէն սրբութեան տան
Ջողական պաշտպանօք հանեալ,
յաւիտենական և յարաբորբոքն
մատնեսցես բոցոյ. ուր լալ ա-
չացն է և կրճել ատամանցն։

Իսկ յորժամ յիշեմ, թէ իմ է
վրէժխնդրութիւն և ես հատուցից.
և ահ սաստիկ է անկանել 'ի ձեռս
այ. և թէ դատաւոր արդար ես
և դատես զաշխարհս արդարութեամբ.
և յիրաւունս և յարդարութիւն

ուղղեալ է աթոռ քո . և զերեկա
մունս և զխորսս քննես՝ և զան_
գործսն տեսանես . և ամ̃ ինչ մեր
կապարանոց կայ առաջի քո . և ոչ
արդարանայ առաջի քո ամ̃ մսեղի
Տագնապիմ ահի մեծաւ յահեղ
և սոսկալի քոց դատաստանաց ։
Եթէ իրաւամբք մտանես ՚ի դա
տաստան՝ պարտաւորիմ ։ եթէ ար
դարութ̃ քննես, ոչ արդարանամ ։
եթէ զանօրէնութիս թուես, ոչ կա
րեմ կալ առաջի քո ։ Ա՜ղ տկարու
թի դուզնաքեայ ծխոյ ՚ի շարժումն
սաստիկ հողմոյ . և կամ դիւրածա
խուն մոմոյ ՚ի կիզումն յարաբորբոք
և յաւէտավառ հրոյ ։

Եւս զօրանայ երկիւղ պարտա_
ւորիս տանջանաց, յորժամ ոչ
սոսկ բանիւ ՚ի սպառնալիս, այլ
գործով գլխաւորեալ արդէն իսկ
զհնգիտապարտիցն տեսանեմ պա
տուհաս ։ Մանաւանդ թէ զայժ
մոլոլութ̃ նուաղեալն քան զմոմ .
որքան նորա անդիտութեամբ

ծթ և

և առանց օրինակի պատուհասնելք·
իսկ ես դիտուք և զբաղումն ու-
նելով յարացոյցս: Ո՛ խորդ ան-
դընդահերձ և սահմանաբաց հե-
ղեղա՛ն հեղձան որք զմեղացն հե-
ղեղ յարուցին յանձինս իւրենց:
Որպէս որ զհուր ցանկութեան
անբնականապէս բորբոքեցին յին-
քեանս՝ երկնատեղացն դաղախա-
ցան հրով. յապացոյց և առհա-
ատչեայ հանդունատիպ յանցու-
ցելոցն յարակեղ և մշտնջենաւոր
բոց յորդախաղաց հրոյն տոչորման
Նա՛ որք ածատեսն ընդդիմացան
զարմի՝ արձակման 'ի ծառայուէ
երկաթեղէն ճնոցին կապանաց ,
յոքնաչարչար վտանգիւք տանջել՝
'ի կատարածի ըզ մանկահեղձոյցն
տայրին տոկոսիս յանդընդապտոյտ
խորսն ամայանալով:
Նա՛ զինչ զայսցանէ արձանագրե-
ցից, ուրև անդրանիկն որդւոյ
և զա՛ակին ո՛չ անխայեալ զած-
տեսողի՝ սրտիւքն միտեալ դարձի՛-

 յե

յեգիպտոս։ Այն որ բարեկրնելք
տորընջօղք գտան, մաղկատօղ օ-
ձիւքն սատակեցան։ Այն որք ա-
ռետեացն առ հարսն եղելոյ ան-
հաստատութե՟ թերահաստատեալք,
յածատուր պարգևէն զրկեալք,
ուկերըքն տապաստ անկան յանա-
պատին։ Այն որք գահերեց լինիլ
ցանկացան և հրամանի քո ընդդի-
մացան, երկրի բանալ ետուր ըզ-
բերանն՝ յոքումբք կլանել զկորի
և զդադան։ Այն որք ընդ դըս-
տերսըն մադիամու ՚ի փոգուլրայ
տանն պղծեցան՝ սրով անմարմնոցն
խողխողեցան. ՚ի թիւ քսան և չորք
հազարաց անկան. մինչև զգալի
այս արեգական յանդիման, քա-
եաց զինու քահանայն։ Այն որք
մոխց արժանաւորացն յանդգնա-
բար ՚ի դիմի հարան, տարածմամբ
ձեռացն խաչանման՝ օրինադրին
մաղթանօքն անկան։

Եւ զգուշողն զայն ասորեստն
որ ՚ի վե՟ տանն քո սրբութեան,

կա՟ զնա

զնախատանացն դէմ յանդիման,
հրովարտակօք ձգէր առ քեղ բան,
Տարեր թուով զաւուրսն ութ և
տասն, ընդ հաղարօք ճնդիւք եղա
կան. 'ի ձեռն տանջօղ զօրարթնոյն
պաշտման. որ քո հրամանիդ սա-
տար անխափան.

Իսկ որք յուքնապարդև երախտ-
եացն քոց եղեն ապերախտ ուրա-
ցանացողացն, որով մաշեցեր
բաբելոնականն. և գերութեամբ
տարաշխարհական. ոչ պատուհա-
սին մամնաւորական. ըստ որում
'ի դարսն որ յառաջ անցան. այլ
համօրէն ուննն յակովբեան.
ամն եօթանասունն 'ի ստրկութեն.

Թողում ասել զծնունդ սոցա
որք թմին հարցն նմանեցան.
նաև առաւել ևս չարացան.
և զերանացին առին դատանն.

Օ ի նոքա զծառայսն որ ատաքե-
ցան, 'ի պողոյ այդուոյն ատնով
մանանական, որով կոտորեցին ան-
խնայականն. և մահացուցին քարի-

 կոչ

կոչկոծման։ Իսկ սոքա ՚ի տէրն ան
օրինեցան. որ վն նց եկն փրկուն.
և որ մահու էր անպարտական,
սպանին՝ որ անմահն է միշտ յէուն։
Ուստի անճնարին ետուն դատաս
տան. ըստ իրաւացի քոյոյդ հա
տուցման. բիւրուք հարիւրոք
յաւելեալ ընդ քսան. ՚ի սով և
՚ի սուր անկեալ տուժեցան։
Յայսպիսեաց արդարև զարհու
րիմ և անճնարին սարսափմամբ
դողամ. զի թէ որ արտաքոյ օրի
նացն և ընդ օրինօքն մեղան՝
զայսքան անճնարին կրեցին դա
տաստան, ինձ զինչ հասցէ ապ
երախտ և անշնորհակալու ստաց
ուածոյս, անհանդուրժելի տալ
զտոկոսիս. որ ընդ շնորհօք աղա
տութեանս գտայ պարտաւոր։
Զի թէ նոքա մասամբ կրեցին
պատուհաս, ինձ բոլորովին հաս
ցէ կորանալ. զի թէ կային եօթն
լուծցէ վրէժս, եօթանասնեկինս Է՛
ղամէք։ Զի որք ՚ի յանցանս ինչ

 ըստ

ըստ պատրանաց չարին գթեցին,
ընդ բարոյականս զանբնականսն
խառնեալ զկիրս. և կամ սոսկանս
օտարին սերմանց եղեն ընդունօղ,
մի և կամ կրկին սխալանաց գոլով
պարտաւոր, չափաւորապէս նոքա
ըստ արժանոյն պատիժ ընկալան.
Իսկ ես ո՛չ ոնկոյ ուրուք դարմա
նիչ. և կամ դուզնաքեայ սերման
մշակօղ. այլ բոլորովին այդւոյն
սոդոմայ՝ և գոմորայ անդոյն երկ
րագործ. որոյ դառնութ՟՝ ողկոյզն
լեղւոյ, և սրտմտութիւն՝ գինին
վիշապաց: Ո ի ըստ վարժից ման
կանց տղայոյ 'ի յալֆաբիտսն դե
գերելոյ, որ ընդ սկզբան տառին
առաջնոյ՝ կարգաւորապէս՝ 'ի վերջ
հասանէ: Այլ կամ երկրագործն
ընդ սերմանելոյն՝ հարկաւորապ՟
զպտուղն հաւաքէ, Նոյնպէս և
ես 'ի վարժս չարին՝ հոգաբարձու՟
միշտ դեգերեցայ. և զսերմանսն
զոր ընկալայ՝ անխոնջ տաժանմամբ
'ի հունձ հասուցի.

## Առաջինն Որոշմանմունքեան․

Ի սկզբնամօրէն որկորստութե,
մինչև 'ի գագաթն հպարտու
թեան, անձնարին լցայ վերոք
դառնութե․ որում և չիք դեղ
բժշկութեան։ 'Ի դէպ եկեալ է
ղեռնագործիս ողբերգակին ձայնն
ամուլսածնին։ 'Ի մասնէ վերջին
երկրագնացութե, մինչև 'ի վեհն
կացեալ իշխան անունակ գոլով
ողջունե․ և համայնից կրող տաժան
ման։ որում և ոչ սպեղանիս այս
ման․ և ոչ խղխայթեալ հարուա
ծոյս պատան։ Սո զի ծնունդ եմ
նախածնին․ այն որ ստունգանող
եղև հրամանին․ և ոչ օտարանամ
ծնունդս 'ի ծնողին սկզբան յան
ցանաց․ զի նա ընդ չարին անկա
պատրանօք նախաառաջին որկորըս
տութ։ Այլ առ իմս համեմատու
յոյժ նուազանայ անբաղդատութ։
Օ ի ընդ պատկան մտեալ դարա

նաւ իմաստնոյն 'ի գաղանս ընդ-
նմա խօսէր. և զպատճառս ա̃ծա-
նալոյն առաջի արկանէր. ուստի
և ոչ է սքանչելի եթէ զնա 'ի թա
կարթ վարմին ըմբռնէր: Իսկ ինձ
ոչ ա̃ծանալոյ, այլ յա̃ծային փա
ռացն անկման՝ որովայնամոլութե̃
լինի հրահրակ: Նաւ նմա ադե-
նական պտուղ պանծալի. որև հա
մայնից իսկ է բաղձալի: Իսկ ինձ
անարգ պարէն աղցաւոր՝ որ արօ
տականացն է յարմարական: Սա-
կայն 'ի տեսիլ նկատման բբաց և
'ի ճաշակս կոկորդի հաճելի և ա-
խորժելի. յոր և բերիմ անընտրո-
ղապէս ըստ վայելչական իմ յարա
ցուցին. որ առ նոյեան դարուն
համբաւի: Ո՛չ վերջանամ 'ի լը
ծակցէն իմ սողոմայ. որ յղփութե̃
դինւոյ և պարարտութե̃ ցորենոյ
պախարակի:

Պոռնիկ և պիղծ քան զեսաւ. զի
ոչ զերկրաւոր, այլ զերկնաւոր
անդրանկութիւն հօրդ վերին

կղ ընդ

ընդ խոզապարէն կերակրոյ փո-
խանակեցի։

Ընդ իսրայէլին զա̃ծ տեսողի՝ ոչ
շահացայ զգեստու և հացին. այլ
յօգնահամբար անշնորհակալու-
պորտոյ խորտիկս պատրաստեցի։

Ընդ ապերախտի տանն յակովբայ
նստայ հեշտութք յուտել և ըմպել
և յարեայ 'ի խաղ զբօսման սոր-
նայնոյս։ Որև զառատաձիր պար-
գև տուողին կերեալ յաղեցայ.
և ստոր-արանալով ըստ ամեհեացն
կիցս ընկեցի։

Յար և մերձաւոր անձին ապա-
ցոյց. որոց քաղցրութ և պարար-
տութ մանանային և լորամարգին
'ի կոկորդի, և հայհոյութին 'ի շր-
թունս։ Օ ի զառ'ի յերկրէ և'ի
ծովէ և յօդոյ սպասաւորութենէ
մատակարարեալ քո պարգև՝ ան-
խորհրդաբար և անբանաբ վայե-
լեալ, ոչ միայն ոչ գոհացողական
շնորհաբաշխիդ հատուցի, այլև
յոլով հայհոյութ թշնամանեցի։

Մ՛է շատացայ շնորհայութեն որը
վայնի ստրկապէս կալ ՚ի սպասա
ւորութի, այլև ՚ի պատճառս սորա
զյոլովս և զզօրաւորս եզսատակչա
կան ախտս յիս կոչեցի։ Քանզի
՚ի նուաղութեն կասկածեալ որով
փափկանամս, համբարս բազումս
մթերեցի ըստ նմանութե իմ դա
ղափարին։ Անիս ահա անձն ասե
լով պատճառ փափկութե ամաց
յոլովից. կեր արբ և ուրախ լեր
Ը անզգամութե քո հանգանակիցս։
Ւ՛ որ՝ քան զայս ես չարագոյն,
գողանալով և գողակցելով. զր
կելով և զրպարտելով. անիրաւե
լով և յափշտակելով. կեղծաւորե
լով և փաղաքշելով. շողոքորթելով
և սուտակապասելով։ Աղօթա
կան ձևանալով և պահացօղ. աղ
քատասէր և մարդասէր։ Մ՛է առ
ամենահայեաց ականդ դիտումն,
այլ առ տեսողացն հաճութիւն։
Օ ՚ի այնու պատկան դարան կազ
մելով, զյոլովից արարս կողոպտեն

կը որ

որկորստութ զէն պատրաստեցից։
Եւ զայս խմբս շնորհեալ հեշտու-
թե՝ քեզ և ոչ մասամբ սպասաւո-
րեցի։ Զի տեսի քաղցեալ հար-
կաւորացն՝ և ոչ կերակրեցի յաւ-
ելորդացն որով յօրանայի ։
Ծարաւ՝ և ոչ արբուցի ։
Մերկ՝ և ոչ զգեցուցի ։
Օտար՝ և ոչ ժողովեցի ։
Հիւանդ և 'ի բանտի՝ և ոչ եղէ
այցելու։ Նաև ես շռայտեցայ․
զի ոչ հարկաւոր և պատշաճ ժա-
մուք առ այն փութացայ, այլ ըստ
անբան խոտաճարակացն անկար-
գաբար յայնոսիկ բերայ։ Ուստի
և տեսանողին ձայն ողբերգական
յարմարաբար ինձ պատշաճի։ վա՛յ
որք ընդ առաւօտն յառնեն ան-
բանաբար և զհետ լինին ցքւոյն։
երեկոյանալով 'ի նմին։
Բազում անգամ հացդ կենդանի
'ի յերկնից իջեալ՝ որ կենսացու-
ցանես զ'ի քեզ մերձեցեալսն, բազ-
մեալ 'ի վերայ կենդանաբաշխ սե-



ղա

զանոյն. և արիւնդ սրբարար մա-
տուցանելեաւ յուրախութ մանկանց
ամբաստանին, Ես իմ զայնու զանց
արարեալ՝ յապականացուն բաղ-
մեցայ սեղան. 'ի մարմին սերմանե-
լով. ուստի ծնձեմ զապականութ.
Նազմապտիկ հոյլս ախտից անդոյս
ինձէն ստեղծի՝ և ապաւինեացն
անանդեցի. սովոյ և նուաղութե
և յոքնազան հիւանդութե. համբա-
րելով անխրաւապէս անշնորհակա-
լու պորտոյ զաւելորդսն:
Ո՛չ երկեայ յօրինակէ սեղանա-
կազմին. որ ընդ փափկութեն
պապակէր 'ի հուր գեհենին. որ
կարօտանայր կաթլոյ ջրին և ոչ ըն-
դունէր 'ի մարդասիրէն:
Ո՛չ զարհուրեցայ 'ի վճռէն քո
իրաւացի. որ ընդ յագման որո-
վայնի՝ մշտնջենաւոր սովոյ մատնե-
ցեր: Ո՛չ լուայ կենարարդ ձայնի
որ ուսուցեր ոչ կորստական կե-
րակրոյ սպասել, այլ մնացելոյն
անփոխադրելի:

Ո՛չ սոսկացայ յընտիր անօթոյն քո
ողբերգութե̃ց, որ արտասուէ
զԹշնամիս խաչին․ որք յարմարա-
պէս ա̃ծուն՝ որովայնի սպաս տա
նէին․ և զխնկապէս ամօթն՝ պիտա
կաբար փառս վարկանէին։

Ո՛չ սարսուեցի ծառայս չար յան
վրէպ իմ ապացուցէն․ որ շնա̃յ
տելով ընդ արբեցօղսն և հարկա
նելով զծառայակիցսն, անաչառ-
ութեանն սրով ընդ մէջ հատեալ
և անհաւատիցն հաւասարեալ։

## Եօթներորդն Պատուիրանին․

Այլ ոչ այսու շատացայ՝ քա
նանու զաւակս և ոչ յու-
դայի․ ծնունդս քաղդէացի և ոչ
իսրայէլի․ զարմս բաբելոնի և ոչ
եբ̃ի․ որթս սոդոմայ և ոչ ենգադ-
դայ․ բարունակս տաշտաւոր ու-
ռոյն գոմորայ և ոչ տանն ա̃յ։
Ս̃ զի յղացմանն որկորստութե̃՝
երկնեցի զծնունդն պագշոտութե̃

հա̃ և

և սերմանն փափկասիրութեան՝
զաւակ ծնեայ վատաշոտութեան.
և անյագութեանն մշակելոյ՝ կը
թեցի զողկոյզն պոռնկութեան։
Ի դէպ եկեալ ինձ երգոյն հրա_
ման, թէ յղացաւ զցաւս և ծնաւ
զանօրէնութի։ Այլ ոչ զկորեանցն
իժից այլ բան, եթէ ծնունդն՝
ծնողին է ապականութի· այսպէս
և իմ պորտոյ յղացմամբ՝ զապա
կանութի չնձեալ ըստ գրոյն։
Բանալի կերայ ըստ յակովբայ·
սոնքացայ և ստամարացայ· և կիցս
ընկեցի ընդ դէմ արարչիդ։
Մոռացի զփայտն անյագութե,
ուստի բորբոքեցաւ հուրն ցան
կութե։ Նարդեցի զխուին խնձո
ղութե· յորմէ վառեցաւ բոցն պըղ
ծութե։ Դիզեցի զլուցկին արբե
ցութե· որով արծարծցի կայծակն
աղտեղի և գարշ աղափման։
Անչափութե արկի յորովայն, որով
անսահմանաբար յարեան հեղեղք
ցանկութե։ Ըստ որում գաղափարքն

 իմ

իմ շնայլութեան. որ յիշատակին
'ի դարուն առաջին: Նուէին ամե
ըմպելին. կանայս առնէին և արանց
լինէին. մինչև ըզ հեղեղեալն
գարշ ցանկութեք՝ ջրոյ և հրոյ հե
ղեղք ծածկեցին:

Այլ թէպէտ մի անուամբ ձանա
չէ ախտ պոռնկութն զոր յիս
կոչեցի, այլ յոլովիւք ապականութք
յիւրաքանչիւր անդամս ներգործի:
Աս զի տիրականն 'ի զգայութիս
գերիվերոյ նստեալ ձոխութ տե
սականս զօրութի, որ արարածոյս
տեսութ՝ յարարչին պարտ էր գալ
ծանօթութի և փառաւորութիւն,
արատ հայեցիւք ապականեցաւ.
և'ի գեղեցիկ տեսեալ դիմէն իբր
'ի կործանիչ աղեղնաւորէ հառ
զխոցումն աղդողական. և վէրս
ընկալաւ անբժշկական:

Իսկ լսականս մասն զոր պատուի
րանի քո եառուր սատար լսողութ
և հրամանի բանին կատարման,
ախտաշարժ բանիւք հիւծեալ

հէ ծիւ

ծիւրեցաւ. որով պնդունի ոգւոյս
քակտեցաւ։ Իսկ որ ամենայն իւ-
ղոյդ թափելոյ ընդունելութ եղև
գործարան, 'ի զաղբալի գարշահո
տութի մեղացն ողմոյ իգացեալ
գտաւ։ Այն որ ըստ մաքուր հար
սինն բաղձանաց սիրոյ փեսայից-
միաւորութե՝ համբուրի տուաւ
պատճառ տրփանաց անխղելի սի
րոյ կապանաց. դարձուցի 'ի համ-
բոյր պղծեալ ախտաւոր սիրոյ.
պղծալից գործոյ առիթ եղելոյ։
Թողում ասել զգործի մաղթա-
նաց. առ քեզ համբարձմամբ՝ յար
պաղատանաց։ և կամ զգործելն և
տալ աղքատաց. որով և հոգւոցն
իսկ պատրաստի հաց։ Եթէ զխորդ-
պիղծ շօշափմանց, յիմար և ընտի
չար պադշոտութեց, ըստ խրատու
չարին և խաբէութեց, արբանեակ
եղև անօրէնութեց։ Ո՜ ինչ ունիմ
ասել և զիշխանական 'և զառաջ
նորդական անձին և մնաց շարժ-
մունս. եթէ զխորդ ամենեքեան

 'ի

'ի բնականացն իւրեանց ստերւ֊
րեալ, պղծալից ցանկութե ծառայե֊
ցին։ Վասն զի բազումանգամ
մարմին հաճանեալ սպասաւոր լի֊
նիլ ցանկութ֊ց, անկարանայ հա֊
սանիլ լրման ըստ յոլովից և զա֊
նազան պատճառաց տեղւոյ և ժա֊
մանակի, և գործակցի և յաջողութ֊
և մարդկան ամօթոյ և երկիւղի։
Իսկ նուրբ և անօսր էութի ան֊
մարմին բնութե անձին և մտաց,
ոչ տեղւոյ կարօտանայ և ոչ ժա֊
մանակի. ոչ գործակցի և ոչ յա֊
ջողութե. այլ ամ պատկանաւոր
նմա տեղի և ժամանակ։ Ո՛չ 'կէն
տր երկնչի և ոչ 'ի մարդկանէ ա֊
մաչէ. ըստ անիրաւ֊ դատաւորին։
Վ՟ս զի գիտէ թափանցիկ և ան֊
արգել բնութ֊ն զամենեքումբքն
խափանողք զանցանել և առ
պղծութ֊ գործակիցն հասանել։
Օ՛ փակեալ դրամբք. զպահպանո֊
ղօք. զտեսողօք. զսպանողօք. զբքա֊
բեր լերամբք. զտապաշլ գաշտօք.

զլայնութ՟ ծովու․ զպարսպօք ամ՟
րագունիւք և զանմատոյց դղե-
կօք․ և ոչինչ է որ արգել նմա լինի
Յաղագս որոյ անխափան կատարի
ամ՟ որ ըստ ախորժակա́ցն է գործ․
Յիրաւ՟ի ուրեմն ապա ողջամ
զանբերելի չարէց գործունէյս՝
ամենեքումէք հարեալ նետիւք
ցանկութ՟ե․ Յոգի և՚ի մասունս նր՟․
՚ի միտս և՚ի շարժմունս իւր․ ՚ի
մարմին և՚ի զգայութիւնս իւր։
Նաև որ են քստմնելին է․ զի ո́չ
՚ի բնականսն միայն բերայ պղծա
լից ցանկութ՟իս, այլև յանբնականս
և ո́չ միայն յանբնականսն որ ՚ի
համազգիս, այլև զոր ո́չն է արժա
նի գրի առնել․ եւ՟ յօտարացեղս
և յանասնայինս․ և որ բոլորովին
անշունչք և անշարժք։ Նաև զոչ
էան գոյացուցեալ, գտակ և արա-
րիչ չարեաց լինելով։
Թերևս ինձ տեսանողացն հանրա
կան՝ յարմարաւ՟ պատշաճեալ ձայն
Զի իգամոլ գարովեալ։

հգ Նա

Հնացեալ ե՛մ և պոռնկեալ Սա-
մարիա։ Եւ ո՛չ հաւատարիմ քա-
ղաք՝ այլ պոռնիկ. շաղախեալ երկիր
և պղծեալ ՚ի գործոց պոռնկութեան.
շնացեալ ընդ քարի և ընդ փայտի.
՚ի գայթակղութեան ստացեալ հոմանիս։
Եւ անսուտ ձայն Ճշմարտիդ-
յո՛ր հնչեցեալ յականջս եղերական
թշո՛ւառս անձին՝ իրաւապէս զոր
հուրեցուցանէ. որ ՚ի շնութիւն
իսկապէս զհայելին գրեցեր ցանկ-
կութեան։ Որ և յաջորդեալ որքան
խօսէր՝ և զառ՚ի քէն թերին լցեալ
զշնացեալն և զարո՛ւագէտն ընդ
իգացելոյն արքայութեան արտաքոյ
մոլից փակեալ։ Եւ՛ որ ե՛ս սարս-
ռելի. զապականօղն պոռնկութեան՝
տաճարի քո մաքրելոյ՝ ապականիլ
՚ի քէն գրեալ։ Աստի և երկիւղ
մեծ զյոքնաթշո՛ւառս տագնապէ.
զի ո՛չ հայեցմամբ յարատ սոսկ պղ-
ծեալ, այլ մոլեկան կատաղութեամբ
՚ի լրումն ախտին փութացեալ։
Եւ՛ զառ՚ի քէն շնորհօք մաքրեալս

տաճար՝ ժանտագործ և զազրալի
աղտեղութեամբ ապականեալ:
Նա՛ որ քոյին ըստ առաքելոյ զգեց
մամբ պսակեալ, մերկանալով զայն՝
զեղխարայն արկայ վերարկու:
Ո՛չ մերկացայ զմարդն հին զապա
կանեալն ցանկութ՛ խաբէութեն
և զգեցայ զնորն նորոգեալ ՚ի դի
տութի իսկապէս քոյ փառաց.
այլ կողոպտեցայ զլուսեղէնն պատ
մուճան՝ զանկեալն ՚ի յորդանիս՝ ՚ի
ջրոյ և՛ ՚ի հոգւոյ: Ո՛չ զգեցայ ըզ
լուսափայլն ՚ի Թաբօր յայտնեալ
վերարկու. այլ անմաքրապէս ըզ
բազմահոսն աղտեղեալ կեղտիւ.
որ լուսոյ հարսնարանին
անմտանելի:
Պատուեցի զախտն պղծութ՛, և
անարգեցի զուխտն սրբութ՛:
Եղծի զպատկերն ողջախոհութ՛,
և նորոգեցի զտիպն լկտութեան:
Զխորանն քակեցի սողոմոնեան,
և յարդարեցի վրան կեդարեան:
Ի հեռոց դառանցն խոտորեցայ,

և շաւղաց ուղղոց զՏեա ընթացայ։
Ի սիրոյ օրէնս անօրինեցայ, և յա-
տելութեանն ոչ ուղիղ գտայ ։
Զի զոր սիրել պարտ էր ատեցի,
և յորմէ գարշիլ էր անկ՝ սիրեցի։
Զճշմարտիդ տէր զիս սիրողի ,
ընդ ստորնայնոյս փոխանակեցի։
Նա՛ զի փոխան իմ զքեզ ետուր,
և ես ախտաւոր սիրոյ անմաքրուր։

## Նախատինք Արծաթասիրութեան.

Բայց արդ ահա՛ աստանօր 'ի հա-
կառակէն 'ի զօրութէ գնամ
զօրութի՝ 'ի փոքուէն առ վեհագոյն
ճանապարհաւ ելեալ չարութի։
Զի զորօրինակ շարք շղթայից
զմիմեանց ունելով՝ հարկաւորապ
զկնի միմեանց ձգին 'ի քարշելն ,
այսպէս և վնասք սատակչականք
յարմարապ գան զհետ իւրեաց ։
Նա՛ ոպ ծնունդ որկորստութենէ
ախտաւոր ցանկութի 'ի նմանէ՝
զօրացեալ , այսպէս և վաւաշոտ

պագշոտութեն հեշտեանք՝ անելյա
ըստացութին։ Ո՛ ի խորհրդոյ և
կամ գործոյ պոռնկութեն զօրացի՝
ո՛չ չափաւորապէս կարօտանայ ըս
տացուածոց առ՚ի լրումն առաջար
կութեն։ Ըստ որում և՚ի մի Թա
կարթ անկեալ վաւաշոտութեան,
իներքոյ գտայ արծաթսիրութեն.
և զարմատն ամ չարեաց ըստ առա
քելոյ՝ ՚ի յանդաստանի սրտիս տըն
կեցի։ Ուստի բազմաստեղն են
յոքնուղէշ ընձիւղեալ բողբոջք
անօրէնութեն. սաղարթափթիթք և
վարսաւորք. ծաղկաւէտք և պըտ
ղաւորք. իբրու ՚ի գնացս ջուրց
առոգեալք. անթառամ և զուարճ.
կանաչագեղ վայելչութբ պայծա
ռացեալ։ Որոյ ղդխպուածն մաղ
թեմ սաղարթաւոր և անպտուղն
տնկոյ՝ որ առ փրկագործ չարչարա
նօք յաղագս մեր չարչարելոյդ։
Թերևս և տապարն հատողակին,
դնիլ առ արմին անպտղաբեր տըն
կոյն քաղցրութեն. և բազմաբեղուն

պտղոյն դառնութեն։ Որոյ ոչ թէ
ըստ աստղին լինէր արգանդ ան-
որդի և ստինք ցամաքեալք։ և
կամ հարուածքն այն եգիպտին։
անբոյս առնել զայս չար անդաս-
տան։ և կամ թէ սուրն այն ան-
մարմնական։ հարկանել անխընայ
զայս աստրեստան։ Զոր եթէ ՚ի
թիւս համարոյ բովանդակել ոք
ախորժիցէ զդառնադոյն և կորըս-
տական պտուղս ընկոյս այս սա-
տակչական, գերազանց թուական
արհեստի անցեալ մեայ ՚ի յանհա-
սուն։ Աղի ուստի՞ գողութիւնք։
զրկանք։ յափշտակութիւնք։ անիրա-
ւութիւնք։ նենգութիւնք։ նախանձ։ ատե-
լութիւնք։ երդմնահարութիւնք։
Ուստի՞ ունին լերինք զաւազակս
դաշտք զկողոպտիչս։ ծովք զընկղ-
միչս։ քաղաքք զզրպարտօղս։ ա-
տեանք զսուտս։ դատարանք զկա-
շառս։ կրպակք զխաբէութիւն։
տունք զպատառումն։
Ուստի՞ գործեցան սուր։ զէնք

պատերազմականք․ հարուածք․
սպանութիւնք․ մատնութիւնք․ թշնամանք․
հայհոյութիւնք․ կագք․ կռիւք․ հա
կառակութիւնք․ ոխակալութիւնք։
Ստապալեաց զքաղաքս․ հրդե-
հեաց զգաւառս․ ամայի արար ըզ
դաշտս, բնակութիւն զանձաւս։
Զայս ամ՟ և զայլս բազումս որ
ոչ անկանի ընդ թուով, յղանա-
լով յիս զմայրն չարութեան, ծնայ
զծնունդս անօրէնութեան։
Զբանականն խոհականաւն ե-
տու յիմացումն նանրութեան․ և
զմարմին զգայութիւնք 'ի մշակութիւն չա
րին խմացման։ Տաժանեցայ յերկս
աշխատութեան, զի հաւաքեցից պը
տուղ կորստեան։ Պատերազմե-
ցայ և ընդ բնութեան, զի միայն լցից
զախտն ագահութեան։ Զրկեցի ըզ
մարմին 'ի հարկաւորացն, տալով
յաւելուած արծաթսիրութեան։
Անտես արարի զսիրելին, զի ծա-
ռայեցից խնամով անելաստացն։
Օտարացայ 'ի բարեկամէն, զի մ'

ձե հար

Հարկաւորեցայց զպատկառութիւնն
լնուլ թերութեանն ։

Տեսի և զբեղ ո՛ր քաղցեալ՝ և
փակեցի զգութս առ՚ի քէն ։
Ծարաւ՝ և ո՛չ մատուցի բաժկաւ
յորբուածս ։ Օտար՝ և ո՛չ ընկալայ
ընդ յարկաւ ։ Մերկ՝ և զոր ու-
նէին չնչին վերարկու՝ կողոպտել
քան թէ զգեցուցանել փութայի ։
Հիւանդ և՚ի բանտի՝ և ո՛չ հարկա
ւորօքն պաշտեցի . զի հնազանդուէ
զախտին քան թէ զքոյդ ախորժէի
լնուլ հրաման ։ Սեղծաւորէի պա
տուհիրանապահ՝ որ բոլորովին էի
բատուանդանօղ . զի թերևս այնու
ինչս հաւաքեցից ։ Օ դենուի
հանդերձ ոչխարի ի վերոյ, և՚իներ
քոյ դայլ էի կեղեքիչ ։ Եւ որ
մինչ՚ի վաղիւն անիշխան կենաց էի
ըստ անսուտ և Ճշմարիտ քո բա
նի, երկայնադոյն զայն անանդեցի
ժամանակի ։ Եւ որ յողջութիւնն
՚ի քէն տուեալ աննախանձ վայե
լէի , յոքնապատիկ ախտս թունէի

տուաջի արկանելով։ Նուաղութի
տեսանելեաց · կարկամութի ընթա
ցից · դողդոջումն ձեռին · համրութի
լեզուոյ · ջոգդողումն մարմնոյ · սովոյ
նեղութի · դերութեան վտանգ ·
և այլ ախտս բազմահոսս։
Օի ՚ի պատճառս սոցա կրօնաւորս
համբարեցից և առանց երկիւղի
մթերեցից զաւելորդսն և
զանպէտս։
Ո՛չ լուայ աստղին՝ գանձէ՛ և ոչ
գիտէ ում ժողովէ․ և՝ ՚ի մեռա
նելն իւրում ոչ տանի ընդ իւր․
և՝ մեծութի թէ շուրջանակի ցըն
գիցի, մի՛ առ գնիցէք զսիրտ։
Ո՛չ երկեայ յօրինակէն իմ գեղէ
որ բորոտութե մարմնոյ պատժեցան։
Ո՛չ զարհուրեցայ ՚ի սոսկալի պա
տահմանէն յուդայի․ որ այսու ըմ
բռնեալ ախտիւ՝ համայնից գը
տաւ մատնիչ արարչին։
Ո՛չ սարսափեցի յապացուցէ՛ մե
ծատանն որ պապակէր ՚ի բոց գե
հենին․ և ոչ բաղձացայ ղազարու
ձգ ան

անստացուածութեան որ ՚ի դոդ գըր
դանայ հանդչէր նահապետին։

Ո՛չ սոսկեայ յանդառնալի քո հրա
մանէ, որ դիւրին սահմանեցեր
զԹափանցիկն ընդ անձուկ ծակ
ասղան լինել մալխոյ, քան մեծա
տան յարքայութի քո մտանել։

Ո՛չ շառաչունեցի ՚ի հաղորդապե
տին քո հրամանէ որ քեն խօսէր
և ընդ կռապարիշտան զա՛նելաստա
ցուն դատապարտեաց։

Ո՛չ լո՛ւայ դարձեալ անստացու՛ա
ծութեան և ողորմութե գովողաց.
որ զփութեն աղքատաց՝ արդարութե
ասեն կայումն. և զողորմին նո
ցին՝ փոխատուութի այ. և ծառա
լումն կանուխ լուսոյ. և բարձրա
դահ առ դատողական ատենին է
ղեալ։ Նաև ՚ի քէն առատութեան
աղբիւր. որ զքոյն հայցելով՝ ան
նիւղ ձրեա. և զյերկիր տուեալ
ապականացու և դժրելին՝ անա
պական և անդժրելի յերկինս պա
հես. և ողորմածացն զնոյն հատու

 ցա

ցանես. և աղքատացելոցն կամաւ՝
զերկնից թագաւորութիւն։

Սա՜ արդ՝ ո՞ հեշտագոյն քան ըզ թշուառս, և ողորմ արժանի քան զերկրականս. որ ո՛չ ՚ի սաստկագունիցն երկեայ և ո՛չ հեշտականօքն ընդոստեայ. այլ մի կարծրութեան զգամին սրտի՝ իբրև զայլ դարբնից անտեղի տալի կացի ըստ յոլեայ։

---

## Չորրորդն Տրտմութիւն։

Այլև ո՛չ այսու միայն անկայ և կամ չափաւորապէս հարուածեցայ. զի որ եհարն ասաց՝ ո՛չ դարձայց մինչև սպառեցից. կոտորեցից սրով և արկից ընդ ձեռամբ և փարթամացայց յաւարէ անտի։ ՚Քանզի ահա՛ ՚ի շղթայս անօրէնութեան ընդ նախադրելոցդ քարշի՝ և այլ յո՛յժ դըժնեայ եմ անձնակործան։ Ո՜վ ՚ի ոչ հմուտ պատերազմող՝ որ զախոյեանն վանիցէ և զընդդիմամարտսն զգետ

նիցէ, ոչ միայն միով զինու պատե
րազմի՝ այլ զա̃մ միանգամայն շար
ժէ ՚ի հերքումն ներհակին։
Որք և աստանօր բազմաձայն և
ամենարուեստըն նենգաւոր և՚ի
չար առնելն իմաստուն։ Զի յետ
ագահութեն ծառայեցուցանելոյ
և անելլատտացուե̃ն իներքոյ գնե
լոյ, ՚ի սոյն յարէ՝ և այլ ախտ զօրե
ղաղէս. որով բաանկանէ բոլորո
վին գնել ընդ ոտիւք. զորամու
թին որ ըստ աշխարհի. որով մահ
գործի ըստ առաքելոյ. և այս ՚ի
նուաղուե նախասացեալ ախտից
նութոց։ Մոլի է՝ տրտմութի
որ ըստ այէ. որ ապաշխարութի ՚ի
փրկուի առանց զղջանալոյ գոր-
ծէ. զոր ամի օտարացուցանէ և
զներհակն զօրացուցանէ։ Որով
զանողջանալի հարուածեալս բիւ-
րահօս ախտիւք՝ ոչ գանգատեցաւ
և այսու կարէվէր խոցել։
Մոլի միանգամայն հեշտուե
ախտին ծառայեալ, եթէ դէպ

լիցի յայնցանէ ինչ նուաղանալ,
անձնարին խոցոտիմ վիրօք։

Մ ԻԻԲ պաղատանաց դրութն։

Եթէ պակասեալ ինչ յախորժա-
կացն որովայնի՝ տրտմիմ. Եթէ
ցանկաւորութեանն ան յաջողուի
թախծիմ. Եթէ ապահուեն ոչ լը-
րումն՝ տըխրիմ. Եթէ փառացն նը-
ւաղուին՝ դժուարիմ. Եթէ անար-
դութեան պատահիմ՝ ոչ տանիմ.
Եթէ բամբասիմ՝ ըմբոստանամ.
Եթէ հայհոյիմ՝ դժգմնիմ. Եթէ
թշնամանիմ՝ կորանամ. Եթէ նա-
խատիմ՝ լքանիմ. Եթէ անպատուիմ
անկանիմ։ Ա՜յ յայսցանէ ամե-
նեցունցս և յայսպիսեացս զօրէն
թանձրացեալ և խիտ ամպոյ և մի-
գախառն մառախլոյ զիշխանակա-
նաւս անկեալ մօք, թախիծ և
տրտմութիւն անսփոփելի առնէ։
Ա՜յ խիտ առ խիտ մի զմիով կուտա-
կեալ իբր զծովական ալիս յաճա-
խութիւնք տրտմականացն ընկըղ-
մել փութան։

Մ՛է երբէք տրտմեցայ 'ի նուաղել բարեացն։ Մ՛է տխրեցայ յանդգամուն խոհականին։ Մ՛է 'ի վատուն արութեն։ Մ՛է 'ի մեղկութի ողջախոհութեն։ Մ՛է յանիրաւութի արդարութեն։ Մ՛է 'ի սարկութիւն իշխանականին։ Մ՛է 'ի տէրութե ծառային։

Մ՛է ցաւեցայ երբէք յայլում թշուառութե։ Մ՛է լացի ընդ լացեալն։ Մ՛է վշտացայ ը տրտմեալն Մ՛է թշուառացայ ը վշտադնեալն Մ՛որոյ և ոչ կարեմ ասել ընդ դաւթայ՝ տրտմութի կալաւ զիս 'ի մեղաւորաց. և՝ հայէի յանդարոյնն և մաշէի. և՝ յիս ձեռն քո և՝ 'ի տուն հօր իմոյ։ Մ՛է ընդ մովսէսի՝ եթէ թողուս դոցա զմեղս թո՛ղ. ապա թէ ոչ՝ և զիս ջնջեա՛։ Մ՛է ընդ պօղոսի նզով լինել յաղագս եղբարց. և կամ մատդիւրն ծախել վս նց։ Մ՛է յանձնականաոմ ասացի նուաղանաց լաւագունին, այլ 'ի հեշտալեացն պակասիլ։



Ս՛

Ի երբէք և՛ի հակառակէն դարձեալ ներհակաբար․ 'ի չքաւորութենէ ընտրականին մասանց և կամ 'ի յղփութենէ վատթարին լքանիմ․ ոչ զի 'ի բուժումն ախտին փութացայց, այլ յառաւելութէ տրտմութեն՝ յանձնարին անդունդսան յուսութեան կործանեցայց։ Ո՛չ միայն զիս անկար յապաշխարութի, այլև զքեզ ամենակարող և զօրաւոր և բարի՝ տկար 'ի թողուլն և կամ ոչ կամեցող ընդ փրկութին։ Որ ոչ կամիս զմահ մեղաւորին․ այլ զդարձն և զամենեցուն կեալն և՛ի գիտութի ճշմարտութե ժամանել։

Հինգերորդ Յաւուրն և
Ուրախութեան։

Այսպիսի չարաչար հարեալ կեղով ան յագն 'ի չարիս և ծարաւին իմոյ կորըստեան, ոչ կայ մնայ 'ի նոյն․ այլ սովորական յառաջատութեամբն՝

դայ հասանէ 'ի բարձրագոյն և զօ
րեղ ախտ ցասմնականին. և զբազ
մաճնարն 'ի կիր արկեալ մեքենայս՝
փոփոխումն առնէ 'ի վատթարա
գոյնսն։ Ո՛, ի որ 'ի պաշտօն բանա
կանին՝ սպասաւոր պատուհասի
չարին յարձակման բնականապէս
'ի յարարչէն սահմանէ եղաւ, ո
րով ուժգնապէս ընդդէմ ներ
հակին զօրեղ այն զինու պատե
րազմէր, 'ի սադրելոյ սկզբնաչարին
'ի հոմացեղսն զայն դարձուցի։
Արդ որում պարտ էր ընդդէմ յառ
նել հարկանել անխնայ և վիրաւո
րել, ուխտ խաղաղութե և սիրոյ
եդի ընդ նմա և անլոյծ դաշինս
հաստատեցի։ Իսկ հոմացեղիցն և
տոհմականաց որոց սեպհական էր
ընտանութիւն, կատաղի ցասմամբ
ընդդէմ զինեցայ զօրէն պատառօղ
և չար գազանի։ Արդ յըմբռնմանէ
սաստիկ զայրացման այլայլութե
սրտմտականին, յանընտել և յան
համբոյր գազանային բնութիւն

 փո

փոխեցայ: Նաւ ոչ ինչ ընդ-հատ 'ի յայսակիր մոլեգնելոցն ցուցայ. եւ ես դժնդակ քան զնս. որքան արտաքոյ նոքա կամաց, եւ ես ինքն իշխան յօժարուէ մոլեգնեցայ: Ուստի եւ գթուն յիրաւի նոքա արժանաւոր, իսկ ես բիւրապատիկ թշնամանաց: Եւ զօրէն շան կատաղելոյ առ ամենեսեան յարձա-կեցայ թշնամանօք:

Ո՛չ պատկառեցայ 'ի յալեաց :
ո՛չ խնայեցի 'ի մանկութիւն :
Ո՛չ ակնածեցի 'ի պատուոյ :
Ո՛չ աչառեցի յերեսաց :
Ո՛չ ամաչեցի 'ի սիրելութենէ :
Ո՛չ շառագունեցի 'ի բարեկամէ :
Ո՛չ գթացայ 'ի տկարութիւն :
Ո՛չ երկեայ 'ի զօրութենէ :

Ո՛չ սոսկացայ 'ի քոյդ լի՛ սպառնալեօք պատուիրանաց. որ զյիմար ասօղն՝ ատենի մատնեցեր, եւ զմորոս կոչօղն գեհենին դատապարտեցեր :

Ո՛չ զարհուրեցայ 'ի յարմարական իմ նմանուէ՝ տեսանողին ձայնիւ

Ճշմարտեալ․ որ զարտմութին օձի
ատէ նմանութե․ իժի և քարբի
զականջս խցելոյ․ զի մի՛ յիմաստուն
դեղատուէդ առից զդեղն բժշ-
կութեան։ Մ՛չ սարսեցի յանհեղ-
ձայնէ քո խօսողին, թէ բարկուն
մարդոյ՝ զարդարութին այ ոչ գործէ։
Այլ դաղանաբար յարձակեցայ ։
Յանդգնաբար թշնամանեցի ։
Հայհոյութեան բանս խօսեցայ ։
Անարգել լեզուաւ լուտացայ ։
Նախատանաց սրով հարի ։
Զրպարտութե նետիւք խոցեցի ։
Զդառնութե թոյնս թափեցի ։
Պատառօղ ժանեօք վիրաւորեցի ։
Եւ ոչ իմով շատացայ դառնա-
դոյն մաղձոյ հեղմամբ ՚ի սրտէ,
որ լի՛ ունէի բերան անիծիւք,
և թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանց,
այլև որ սոսկալին է ասելեաց․ և
անճնարին սարսուռ լսելեաց ։
Զէապէս բարիդ և զօրհնութեց
աղբիւրդ՝ զանախտակիրդ բար-
կութե և անիծից պարաբարձող,
 յան

յանդուգն դիմօք և ժպիրհ երե
սօք ախտակից լինիլ ինձ կոչէի
բարկութե՛ և անիծից. զի այսու
առաւել ինձ բորբոքեցից զանձն
ջանելի զբոց գեհեննին։

Սա՜ իմն այսր ամի՝ ոչ սարջացայ
ամենաթշուառս . ոչ միշեցի
զանոխակալեդ խրատ փրկութե.
որ խեթ ունողին ընդ ընկերին՝
զառաջի անդ եդեալ ընծայ թո
ղուլ հրամայեցեր՝ և զհաշտութի
նախապատուել։

Սա՜ս և զահաւորն և զսոսկալի և
զլին բխրատմունքի սպառնալեօք.
եթէ ոչ ՚ի սրտից թողուցուք ըղ
յանցանս իրերաց, և ոչ ՚ի բարե
րար երկնաւոր հօրէն գտանէք
թողութի պարտեաց։

Սա՜ ոչ յառաքելական երկեայ
հրամանէ. որ նախ.քան զմրտա
նել արեւուն գրէ՝ զհաշտութի.
Օ հարիւր դենարին ոչ թողի ըղ
պարտս, որ բիւր քանքարին թը
ոի թողութեան։ Աստի յիրաւի՝

 քան

բանտից կտտանաց և աններելի
մատնիմ կապանաց մինչև ՚ի
հատուցումն ընիոնին։

\- - - - - - - - - - - - - -

## Մեչերորդն Զանջրուլեան։

Այլ համբառնամ աչս՛ առտա
նօր ըստ օրինակի որ առ
տիճանօք սանդղոց՚ի բարձ
րագոյնն ելանեն աշտարակ․
նոյնպէս և ես ՚ի փոքու չարեաց՝
աստիճանօք ախտից ՚ի յոյժ բարձ
րագոյն և անմարտնչելի խմոյ որ
կարուն ելի ղղեակ չարութեն․
որ ձանձրութենն է ախտ զօրաւոր
և ըմբռնողակին։ Որ ստարնէ հա
նուրց ախտից կորստականաց․ և
նաւահանգիստ խաղաղ և անքոյթ
բեղխարայ կամաց հանգստեան։
Զի ոչ յօթևան ինքեան յարդա
րեալ ՚ի յոքնածուփ երկոց չարուն՝
բազմի յանհոգս անաշխատելի։
Սան զի որ նախ քան զայսոսիկ
ախտքն՝ ասպարէզք էին հանդիսի

զե և

Եւ թէպէտ անզօր էի 'ի մարտի ընդ-
դիմամարտութեն կռուոյ բանսար-
կուին, այլ երբեմն կայի 'ի յակաս
տանի զօրէն զինուորի՛ անկելոյ
և դարձեալ կազդուրելոյ։
Իսկ արդ՝ անկայ անպահպանաբար
և կործանեցայ անպատսպարան։
Գլորեցայ անկանգնելի և խոր-
տակեցայ անողջանալի։
Ընկճեցայ եղէ տկար անարի,
և հարուածեցայ անբժշկելի։
Ո՛չ վերականեցի առ պաշտպանդ
փրկութեան։ Ո՛չ կոչեցի զապաս-
տանդ յուսոյ։ Ո՛չ կարդացի որ
յառաջ քան զհայցելն լսես։
Ո՛չ մաղթեցի որ և նախ քան զլ-
սելն մերձես։ Ո՛չ զգեցայ զզրահն
արդարութեն։ Ո՛չ եդի 'ի գլուխ ըզ
սաղաւարտն փրկութեն։ Ո՛չ առի
զվահանն հաւատոյ։ Ո՛չ վերացու-
ցի զսուսերն ածխօսութեան։
Ո՛չ զինեցայ զինուն պարկեշտութեն։
Ո՛չ ամրացայ 'ի դղեակն յուսոյ։
Ո՛չ մերկացուցի ըզ վաղակաւորն

արուն։ Ո՛չ առի ՚ի ձեռն զնորանն
քաջուն։ Ո՛չ հարի նիզակաւն ող
ջախոհուն։ Ո՛չ ձգեցի զլումբ
քարին պատուիրանապահուն։
Այլ բոլորովին անկայ լքայ կոր
ծանեցայ. ՚ի խորխորատ անյուսու
թեան ընկղմեցայ յանդունդս ձանձ
րութեան։ Ո՛ անցեալն պատերազմ
միշտ առաջի աչաց եդի։ Ո՛ ապա
գայիցն՝ առաւել սաստկացուցի։
Ո՛ ձեռնտուութեան բարերարիդ
ոչ յիշեցի։ Ո՛ օգնականութիւն
մարդասիրիդ ոչ զմտաւ ածի։
Ո՛ ժամանակ հանդիսին երկայն
նկարագրեցի։ Ո՛ պատերազմօղսն
քաջս։ Ո՛ մարտն սաստիկս։ զանձն
տըկարս։ Ո՛ ձեռնկալուս անզօրս
կամ անվշտակիցս։
Ես որ երբեմն բաղձալի ածխօ
սութիւնն՝ այժմ տաղտկալի։
Ես որ երբեմն տենչալի պահոց
պնդութեանն՝ արդ անըղձալի։
Ես որ փափագելի երբեմն տըք
նութեանն՝ այժմ անբաղձալի։

Վա՜յ որ ցանկալի պարկեշտութիւն՝
արդ անատենչալի։
Վա՜յ որ սիրելի ողջախոհութիւնն՝
արդէն ատելի։
Վա՜յ որ պանծալի եղբայրսիրութիւն՝
այժմ անվայելուչ։
Վա՜յ արութիւնն որ համբուրելի՝
արդէն փախչելի։
Ջերմութիւն յիշատակի միշտ բա
րույք՝ արդէն սառուցեալ։
Առաքինութեան բոյք բողբոջեալք՝
արդէն խամրացեալ։
Ի սէր վերին փառացդ շարժումն՝
արդէն դադարեալ։
Կայլակք արտասուաց երբեմն զե
ղեալ՝ այժմ ցամաքեալ։
Սրբութիւն երբեմն պատուեալ՝
այժմ դսրովեալ։
Մաքրութիւն երբեմն ըղձալի՝
այժմ բասրելի։
Լոյսն խաւար։ Միջօրեայն նսեմ։
Քաղցրութիւն դառն։ Հեշտալին
դժուարին։ Ախորժելին ատելի։
Վա՜յ ինձ որ միանգամ ի լաւին՝ ձանձ
րութ իմաստին յեղել՝ ի ներհակն։

## Յօրինակքն փառամոլութեան և Սնափառութեան։

Այլ Թէպէտ և այսպէս յանել
անդունդս կորուստական
կրից անկեալ կամ, այլ
'ի վատթար յառաջատութէն զոր
գործէ ծուլութիւնն՝ չար ուղե
ւորս ոչ դադարիմ։ Մանաւանդ
զի թէ և անուանք զանազանին 'ի
միմեանց, այլ իրօք մի և նոյն այս
անկումն և ելումն տեսանին։
Զի անկանիլն 'ի բարձրութենէ
լաւին՝ ելումն է ներհակին. և ոչ
դուզնաքեայ ինչ ելումն, այլ 'ի
յոյժ բարձրութի ամբարտաւանա
փառամոլին. որև ըքանչումն առա
ւել է քան թշուառական դիպուածք
վատաչուերիս. մանաւանդ անմտու
թեան նշանակ։ Այս զի բնաւո
րապէս փառք՝ բարեգործութե են
հետևանք, և եղեռնագործութե
պարսաւ։ Իսկ անիմաստս և ան
հանճար՝ զի ոչ փառքն իմ, այլ ես

զԹ փա

փառացն զհետ ընթանամ։ Նա՛ ա-
հա՛ յանելուած անզգամութե՛։
Օ ի որ ինչ ըստ սովո՛րն բարե-
գթութե՛ որ յընդհանուրս և առ-
անարժանս ձեռն կարկառել ՚ի մար-
դասիրեդ՝ անկելոյս յարուցման
և բեկելոյս ողջութե՛, ամենաթըշ-
ուառս՝ ո՛չ ձեռնինդ ամենակարի,
այլ իմո՛յ անզգամութեան տալով
փառամոլիմ։ Ճշմարիտ և էապէս
փառացդ անփափագ, անոտի և ան-
կայուն և ծաղկընկէց տոչորիմ
փառաց ցանկութե՛։
Նա՛ զոր օրինակ առ ախտի ար-
ծաթսիրութենն կեղծաւորէի
ձեւով առաքինութե՛ եղեռնագործս՝
զի կերակուր ախտին զփարթա-
մութին ժողովեցից. գունակ նմին
և սատանօր յոչ էան կերպանամ
զի զանոտի փառսն հաւաքեցից։
Որ թէպէտ և հանդէտք են ՚ի չա-
րութե և հասարակ անուան պատա-
հեցան, այլ զանցանէ՛ յոլովս զնո-
վաւ՝ ռ առաւել գերազանցութե։

Որքան նա՛ գլրուին հարկաւորցն
անընտրող դատողութե՟ իրաւացի՛
ունէր պատճառ. իսկ սա՛ ոչ ան-
պատճառ և կամ պատճառաւ գո-
լով՝ ի պէտս հարկաւորացն. այլ
մնում և ունայն փառաց ցանկացե՟լ
որ պղպջակի նման լուծանի:
Եւ որպ՟ որում յատուկ ցորենոյ
ախտ, այսպէս և փառամոլութի՟՝
բարեգործութեն: Զի եթէ յա-
ղօթս կանխեմ, կամիմ զայն՝ ի ցոյցս
մարդկան առնել: Եւ եթէ պա-
հօք զանձն իմ ճրնշեմ, առ՝ ի մարդ-
կան փառս կործանիմ: Եթէ ու-
րեք յաղքատ ձեռն կարկառեմ,
շուրջանակի՛ ածեմ զաչս՝ տեսա-
ղացն սպասելով: Եթէ ընթեռ-
նում, ահա՛ առընթեր կայ: Եթէ
հրապարակախօս լինիմ յատենի,
զոյգ ընդ բանին բուսանի:
Եթէ սոսկալի խորհրդոյն սպասա-
ւորեմ, գործակից լինիլ թուի:
Եւ բոլորովին զօր ինչ և մասն բա-
րւոյ կարծի, ապականիչ ժանկն՝ ի
վե՟ր գունաւորի:

Ահ թշուառականիս և եղկելւոյ.
թէ զո՞ր քարբ ծնայ որ սատա-
կիչ թունօքն հարկանէ զման-
կունս առաքինութե. Զո՞ր պա-
տառօղ գազան սնուցի, որ չարա-
չար փաղաղէ զծնունդս սրբութե.
Զո՞ր կիզանօղ հուր 'ի ծոց իմ
գանձեցի, որ իսպառ տոչորէ և
գաղախացուցանէ զբողբոջս բա-
րեպաշտութե. Ա՜յ զի այլ ախտք
ըստ ինքեանց գոլով փասակարք,
յառաքինութեց եղծանին և ապա-
կանին. Իսկ որ 'ի ձեռինս է՝ զա-
ռաքինութին առ չարութի ածեալ
փոփոխէ. Ա՜յ զի ծախէ՝ ոչ խուի-
հալէ՝ իբրև զմոմ. չքացուցանէ՝
ոչ հողմ զծուխ. 'Ի հիմանց խախ-
տէ զտունն առաքինութեան.
Ի վայր կործանէ զաշտարակն սր-
բութե. Տապալէ՝ զդղեակն ան-
ախտութե. Ահ 'ի վերայ այսր ամե-
ան յաղէ 'ի չարիս. ըստ իւրաքանչ
իւր ժամանակի և տեղւոյ և պա-
տահման՝ նորագոյն խնդրէ փառս

 Ար

Մարմին ՚ի լնուլ հարկաւորացն՝ խոնարհ ինչ ցածուցանէ զխանձումն յարձակման. իսկ սա և ոչ ընաւ։ ՚Ի յամենայն ներգործութիւնս՝ յանձնականս և՚ի մարմնականս, ՚ի շարժմունս՝ ՚ի մտածութիւնս՝ ՚ի յառնել՝ ՚ի պատահումն՝ ՚ի տալ՝ յառնուլ՝ յոր առընթեր կայ զօրէն ստուերի որ զհետ ընթանայ մարմնոյ. և զընաւին եղծանէ։

Օ՜ որ այսպէս ամենայնիւ և յամէ ընդդիմ ունելով՝ յարաժամ մեղանչեմ. հանապազ սխալեմ. միշտ վնասեմ։ ՚Ի մերձենալն հեռանամ. յընտանենալն օտարանամ. յարդարանալն անօրինիմ։ ՚Ի լուանալն աղտեղանամ։ ՚Ի լուսաւորելն խաւարիմ։ ՚Ի պայծառանալն մթանիմ։ ՚Ի սրբելն պղծեղանամ։ ՚Ի քաւելն պարտաւորիմ։

Օ՜ վերին փառացն խլաց ընկեցել՝ զստորինս հայցեցի. Օ՜ երկնաւորսն արհամարհեալ՝ երկրաւորիս ցանկացայ. Օ՜ անցնդելեն և ըղ

ձէ կայ

կայուն՝ ընդ ցնդելոյս և անկայի
փոխանակեյի: Ո՜վ անապականն և
մշտնջենաւո՛ր՝ Է̃ ապականացուիս
և առօրէի: Ո՜վ քեզ ունելով տե
սող հանդերձ մարդկան շուրջա
նակի հայիմ: Ո՜վ անմարմինս և
զերկնաւո՛րս՝ և հողանիւթեայցս
կեղծաւորիմ. յորոց և յիրաւի՛
ըստ անսուտ քո բանի՝ զկեղծա
ւորութեանն վարձս ընդունիմ.
յանդաստան հաճութեան կամաց
նոցա սնոտիավաստակ լինելով. և
ոչ զհաճոյս ամենակեցոյց կամաց
քոց առնելով: Արդարութեամբ
'ի բարեաց քոց հատուցմանցդ զր
կելով. և զնոցայն ոչ ունելով ու
նայն և սնոտի փառս. որ ստուգա
պէս պարսաւեն քան թէ
փառաւորեն. այնպիսի
անընտրող և անհան
ճար ոգւոյ պա
տահեալ:

## Ութներորդն Հպարտութեան եւ Մեծամտութեան։

Այլ ահա՛ աստանօր յե՛ս բարձրագոյն գագաթն յայսցանէ ճանապարհորդեալ հպարտին կենաց՝ ամբառնամ. 'ի բարձունս ելեալ մեծամտին. ո՛չ քակել զամրութի՛ւն ըստ պօղոսի, այլ ընդ գերութ լինել գերողին։ Մանաւանդ եթէ զբիւրատեսակ երկոց աշխատութ՝ զոր մշակութ չար ախտիցն յիս սերմանեաց՝ տոհմականօք արդ հաճաքէ զպտուղ։ Սա՛ զօրօրինակ ցնծութ երկրագործի՝ պտղոցն է հաճաքումն, և հողմակոծեալ նա՛ւ 'ի նաւահանգիստն, այսպէս և բեւեռարայ մեղսաբեր և կորստական կամացն, յորժամ 'ի փոքու և 'ի տկար հաղբիցն՝ յանդնդայինն այն կափուլ՝ և 'ի բարձր ամբարտակ՝ ամբարտաւանութեամբ վերացուցանէ։ Ըստ որում և զիմս վաստնէր

և երեքթշուառութեն անձին՝ ինքնա
դատակ և սկզբնաչար և աշխարհա
կործան ախտին ինքեան յարդա
րեաց պատկեր· քանզի յայս ժմ
իրօք անկարկութե ապստամբին
հայր դիւտումն։ Օ ի ոչ նուաս
տութե՛ն՝ քոյդ 'ի մեզ կենդանագրի
տիպ բարերար, ըստ ասելոյն՝ ու
սարուք յինէն զի հեղեմ և խո
նարհ· գտանակ ամին և ամբարտա
ւանութե՛ն՝ հպարտին ըմբռնք կեր
պարան։ Այն զոր 'ի սկզբանն քեզ
ստեղծեր պատկեր ողորմած, ամ
բարտաւանութե՛ն յինքեան տիպն
կերպագրէ հպարտն ամբարտաւա
անն բարձրամիտն փքացեալն։
Որ ըստ գրոյն՝ իմերոյ եղանէ երկ
նից, զաթոռն իմո արկանէ ամպոց
և նման լինի բարձրելոյդ։ որ իմո
հասանէ ամցուն իբրև 'ի բունոյ,
և բառնայ ոչ զձուս մնացեալս։
Յայս ամբարտակ ինքնահաճութե
ելեալ եղկելիս, փքամ· խրոխտամ·
որոտամ ամպանման· կայծակունս
ձգ իջու

իջուցանեմ կիզողական. կարկուտ
ապականիչ. յորդահոսան հեղեղս
գերփիչ: Զ ամենեքումբք արհա
մարհեմ. զենա՛ս քամահեմ. զբո
լորս առ ոտն հարկանեմ: Նոպէ
րեմ, թշնամանեմ, բասրեմ, դարո
վեմ, նախատեմ, հարկանեմ, հայ
հոյեմ: Ո՛չ ՚ի մարդոյ ունիմ հա
մարի. ո՛չ իբր զբանական և զիմաս
տուն. այլ զանբան և զանզգայ:
Ո՛չ ուրուք կարօտ զանձն առ դը
նեմ. ամենեքումբք գոլով կարօտ:
Ո՛չ ՚ի հոմանեալց հաճոյութի.
ո՛չ ՚ի նոյնաբնութեց բաղդատութի:
Անձնահաճ. ինքնազօր. ինքնա
բաւ. յանձնապաստան. յանդուգն
ժպիրհ. բա՛ւական առ ամենայն:
Ա՛յ զի՛նչ ես ասացից առ համ
աղդիս գոլով փքացեալ. ուրե
ամենազօրիդ՝ ամենակարողի՝ բա
րույ՝ մարդասիրի՝ շնորհաբաշխի՝
առատաձրի՝ հաճատարապարգևի՝
անկարօտ վարկանիմ յանձին պան
ծացել զօրութի: Որև դանդաղիմ

ձէ կար

կարդալ յօգնութ̃ զդիւրալուրդ
և զարադահաստ· որ նախ քան ըզ
կարդալն մեր մերձ եւս, և յառաջ
քան զհայցելն պատրաստ 'ի տալ:
Ի գլուխն ելի ամբարտաւանութ̃·
զգագաթն ըմբռնեցի հպարտութ̃·
յաշտարակն բարձրցայ վերացման·
'ի դղեակն ամրացայ մեծամտութ̃·
'ի քաղաքն ապաստանեցի այտման:
Որ որթոյն սոդոմայ էի տընկա-
գործ, ահա զողկոյզն կթեցի դառ-
նութ̃: Որ ուռոյն գոմորայ դար-
մանիչ, ահա զգինին ճմլեցի յիմա-
րութե: Որ անօրէնութե անդաս-
տանին երկրագործ, ահա զսեր-
մանսն հաւաքեցի կորստեան:
Մինչև ցայժմ մասնական ինչ ախ-
տիւք ապստամբին կամաց հըպա-
տակ էի· իսկ արդ բոլորովին զնո-
րին կերպարան զգեցայ: Ոչ ան-
դամ է հարուածեալ թէ պատե-
ցից· Ոչ մասն վիրաւորեալ թէ
սպեղանի արկից· այլ յոտից մինչև
ցգլուխ չիք առողջութիւն:

Ճր Լ

Ա՜յ որ են դժնդակնէք քան զամ֊
մ֊ն զի ա՟մ բարձրամտութի բնաւո
րեալ է բուսանիլ 'ի բարեգործու
թենէ, և սկիզբն՝ յառաքինութե
առնուլ վատակոց: Իսկ իմ և ըղ
կարդն եղծեալ չարին յղացման,
և զսահմանն այլայլեալ ծնընդոյն
անօրէնութե: Ո՜ ի զառաքինու
թեն ոչ ունելով արմատ, բողբո
ջեցի զընձիւղն հպարտութե:
Ո՜ բարեգործութեն ոչ ունելով
սերմն, բուսուցի զբոյսն ամբար
տաւանութե: Ո՜ զգաստութեն
ոչ ունելով բարունակ, յոքնա
պտուղ գտայ յողկուզին մեծամը
տութե: Ո՜ պարկեշտութեն գօսա
ցուցեալ տունկ, բազմաբեղուն
և քաջուղէշ շառաւիղեցի զբող
բոջն փքացման:

Ե՛ արդ՝ ահա՛ այսուքիկ ախտք
որովք արդարադատ չափ
մամբ զանձնէ՛ չարախօսեցի, թէ
պէտ և մեծամեծք են և գլխաւո
րագոյնք և դժընդակք, սակայն

խուն ՚ի եղմացն։ Սրովք ապստամ
բին կամաց հետևեցի, և զկարգ
առաքինութեն եղծի. և զպնդութի
անձին լուծի. և զամրութի ոգւոյս
քակեցի. և զխոհականութիւն
յանհանճարութիւն փոխարկեցի.
և զարիութ քաջութի վատթարեցի.
և զողջախոհութի մեղկացուցի.
և զպարկեշտութիւն լքի
Օ զգաստութի թմրեցուցի
Օ հայեցուածս արատեցի
Օ լսողութիս բծաւորեցի
Օ հոտոտելիս իգացուցի
Օ ճաշակելիս պոռնկեցուցի
Օ շօշափելիս հեշտացուցի
Օ գնացս թիւրեցի։ Օ մտաւո
րական շարժմունս ստերիւրեցի։
Օ ի թէ և սակաւք են քանակու
թեամբ, այլ յոքնակի են որակութ։
Իւրաքանչիւրոք ՚ի խոցուածոց իբրև
զտունկ ինչ հաստարմատ որ յո
լով բողբոջէ ստեղունս. քաջ գե
ղեցիս և երկայննաձիգս. յոքնա
տարածս և ընդարձակս. մեծամեծս
ՃԺ և

և մանունս․ սաղարթախիտս և
ծաղկաւէտս և յոքնապտուղս։
Ըստ այսմ ապացուցի և առաւել
քան զսոյնս՝ ընդ ինքեամբ իւրա-
քանչիւրոք յախտիցս յայսցանէ
բերելով ախտս զանազանս, մեծա-
մեծս և մանունս, սաստկիչս և
կործանիչս․ որովք իսպառ մլրա
հորեցայ յա՛ր ՚ի սոսին բերելով։
Նախանձու․ ատելութե̃․ ոխակա-
լութե̃․ չարայուշութե̃․ բամբասա-
նօք․ հայհոյութե̃․ չարախօսութե̃․
Նախատելով․ Թշնամանելով․ դա-
տելով։ Ստութե̃․ ստերդմամբ․
երդմնահարութե̃․ գրգռութե̃․ հակա-
ռակութե̃․ կեղծաւորութե̃․ մարդա-
հաճութե̃․ սուտակապաստութե̃․
խեղկատակութե̃․ շատխօսութե̃․ դա-
տարկաբանութե̃․ մատնութե̃․ քսութե̃․
զրպարտութե̃․ զրկելով․ յափշտակե-
լով․ անիրաւութե̃․ գողութե̃․ հեղ-
գութե̃․ աչառանօք․ երկպառակութե̃․
անհնազանդութե̃․ յանդգնութե̃․
լրբութե̃․ անամօթութե̃․ ծուլութե̃․

անժուժկալութեան· ցանկութեան· անո֊
ղորմութեան· հեռի՛ս· նենգութեան· չարա֊
բարութեան· և որ այլ ինչ բիւրս և
անթուելիս որ ընդ սոքօք բերին։
Որովք ամենեքումբք յանցաւոր
գտայ եղկելիս և թշուառականս·
ո՛չ ունելով յոյս փրկութեան և ո՛չ նե֊
րումն թողութեան։ Ո՛ւ ի յոլովս 'ի
քէն բարեգործեալ մարդասէր և
ողորմած, և թողութիւն պարտեաց
գտեալ, 'ի փոխանակ անդրէն դար֊
ձայ ըստ առակին· և ընդ տիղմ
աղտեղութեան թաւալեցայ։
Բազում անգամ ուխտեցի տրոհիլ
'ի չարեաց՝ և զլացող եղէ։
Պաշինս կռեցի իբրեւ կաղ 'ի խոտո֊
րութեանց և ստեցի ճշմարտիդ։
Վայելեցի և 'ի խնամս ձեռնտուութեան
բարերարիդ և ապերախտ գտայ։
Մաղթեցի և լուայ· խնդրեցի և
ետուր· հայցեցի և գտի· բախեցի
և բացեր ըստ անսուտ քո խոստ֊
մանդ ամենաշնորհ· և հեղգութեամբ
իմով և դանդաղանօք կորուսի զնոյն

Յուլանդամ և առանց խնդրոյ
կարկառեցեր զաջդ ապա՟ինութե
հզօր և ամենապարգև՝ առատ և
ընդարձակ ձրիւք առ անարժանս
ըստ սովորդ բարեգթութե։
Որ ըստ երգոյն՝ բանաս զձեռն և
լցուցանես զամենեսեան, և ոչ
այնպէս եղէ պիտանի։
Դարեր երբեմն գթածաբար ախ
տիւք մարմնական, ընդ ոստուցա
նելով՝ ի թմրութէ յիմարութէ ստորինս
սիրոյ, և ոչ այնպէս սորջացայ։
Ըստ ապերախտի տանն յակոբայ
տանջեցեր և ոչ զգացի․ չարչարեցեր
և ոչ կամեցայ ընդունել զխրատ։
Ձայնեցեր և ոչ անսացի ։
Կոչեցեր և ոչ լուայ ։
Մերձեցուցեր և հեռացայ ։
Ընտանեցուցեր և օտարացայ ։
Յարուցեր և անկայ ։
Կանգնեցեր և գլորեցայ ։
Ողջացուցեր և հիւանդացայ ։
Լուացեր և աղտեղացայ ։
Սրբեցեր և զազրացայ ։

Մաքրեցեր և դարշացայ ։
Սպիտակացուցեր և աղտեղացայ ։
Լուսաւորեցեր և խաւարեցայ ։
Մեծացուցեր և տընանկացայ ։
Փարթամացուցեր և աղքատացայ ։
Ճոխացուցեր և չքաւորեցայ ։
Բարձրացուցեր և կործանեցայ ։
Փառաւորեցեր և անարգացայ ։
Պատուեցեր և անպատուեցայ ։

Յատակս իջի դժոխոց. ՚ի խորս ընկղմեցայ անօրէնութեան. եմուտ գլուխ իմ ընդ երկրաւ ։ Ո՜ իցէ թէ յաւելից հայիլ ՚ի տաճար քո սրբութե ։

Ուժղ առ քեզ ահա՛ ՚ի խորոց անդնդոց անյուսութե վերակնեալ մաղթեմ մարդասէր. ընկա՛լ բա՛րերար և ողորմած զպաղատանս ամենաթշուառ վարանելոյս. և կարկառեա՛ զաջդ ամենազօր յօգնականութե հեքոյս. և հա՛ն յանձնարին անդնդոց կործանական խորոց ըղբաղմավրդոյս ։ Ո՜ զոր ինձէն խոստովանական յանդիմանութե

ձժդ պար

պարտաւորեցի զանձն իրաւադատ կշտամբութեան, թող ոչ սովոր ես բարեգութ. և մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ անձնադսրով պարտաւորելոյս։

Ահա ես ինձէն պարտաւորեցի զանձն՝ զի դու թողցես։ Կշտամբեցի՝ զի դու մի՛ պարտաւորեսցես։ Յանդիմանեցի՝ զի անտեսեսցես։ Հրապարակեցի՝ զի ծածկեսցես։ Դատեցի անաչառութեամբ՝ զի դու մի՛ դատեսցես։ Հարի անխնայաբար՝ զի դու պատեսցես։ Վիրաւորեցի դառն խոցոտածով՝ զի ողջացուսցես։ Այլ ըստ ինքնապարտաւ ամբաստանութեանցս՝ զբժշկականն իմ դիցես սպեղանիս. և զհարուածն խղխայթեալ՝ յառողջութիւն ածցես վերստին։

Որ քաղցեցար իմոյ փրկութեան յառաւօտին հացդ կենաց, և ծարաւեցար զիս կեցուցանելոյ՝ ի վերայ աղբերն ջուրդ կենդանի.



զոր

զոր որկորստութ̅ե̅ն յանցեայ և
որովայնամոլութ̅ե̅ն պատրեցայ և
յայնոսիկ անժուժութ̅ե̅ն սխալե
ցի, բա՛րձ՝ որ զա̅մ բարձեալ բերես
փրկական քո վասն իմ կրիւք։
Եւ՛ շնորհեա՛ քաղցնուլ կենա
րարդ բանի յա̅ծային բերանոյդ
բղխելոյ. և ծարաւիլ ջրոյդ անմա
հի՝ խաղացելոյ 'ի կեանսն յաւի
տենից։ Աւստի որ ուտէ և ըմպէ
ըստ անսուտ քո բանի, ո՛չ երբէք
քաղցնու և ծարաւի։

Եւ՛ որ ծնունդ ես իսկա̅պ էու
թեանն հօր 'ի վեր քան զբան․
կերպարան և կնիք․ լոյս փառաց
և նկարագիր․ և հաճեցար ծնանիլ
յախտաւոր մեր բնութենէ՝ անդր
քան զամենայն ախտից շարժութ̅ի
'ի կուսէ և առանց սերման,
Օ յղացեալս յաւիտենից անօրէ
նութ̅ե̅՝ և զծնեալս 'ի մեղս պագշո
տութ̅ե̅՝ զզարգացեալս հասակաւ
վաւաշոտութ̅ե̅ և զկենցաղավարեալս

ձժղ ախ

ախտաւոր ցանկութ՟ե՝ յարուեստականս
և յիգականս, յանասնականս և՚ի
գազանայինս, ՚ի բնականս և յան֊
բնականս. խոհականին անընտրո
ղութ՟ե և ստերիւրմամբ, և զգայա
րանացս ախտաւոր շարժիւք յիւ֊
րաքանչիւր ներգործութ՟ես. ՚ի տե
սութ՟ի բղծաւոր և՚ի լուր ախտա
ւոր. ՚ի հոտոտութ՟ն իգացեալ և՚ի
շօշափումըն մեղկեալ: Մ՟աքրեա՛
անախտական և գերամաքուր՝ ըղ
բոլորիւք շաղախեալս ՚ի պղծալից
ցանկութ՟ես և՚ի գործս աղտեղիս:
Եւ շնորհեա՛ իւրաքանչիւր զօրու
թ՟եք և մասամբք և զգայութ՟եք
և շարժմամբք և ներգործութ՟եք
՚ի լաւագոյնսն յեղուլ: Փոխանակ
երկրային և աղցաւոր սիրոյ, տեն
չալ անմահ և անապական երկնա
ւոր փեսային. միայն բարւոյ և
ամ՟ բնութ՟ե բաղձալւոյ. գեղեցկիդ
տեսանելով՟ք զամ՟ որդիս մրդ՟կն:
յորոյ շնորհք սփռին շրթանց. և
աթոռ քո յաւիտենից յաւիտեանս:

 և

և դալ քեզ 'ի հանդիպումն համ
բուրին շոթանց · սիրել 'ի բոլոր
սրտէ 'ի բովանդակ մտաց և յա-
մենայն զօրութէ: Ո՜ քեզ սիրել,
և յամէ միանգամայն հրաժարիլ:
Ո՜ քեզ միայն ունիլ, և զամ կեն
ցաղս լքանել: Ո՜ ողջախոհութե
զհետ երթալ, և'ի վաւաշոտութէ
իբաց դառնալ: Ո՜ պարկեշտութի
սիրել, և զշուայտութիւն ատել:
Ո՜ զգաստութի ընդգրկել, և'ի
լկտութէ փախստական լինիլ:
Ո՜ անախտութի ողջունել, և զախ
տաւոր ցանկութի առոտն հարկա
նել: Նախ մտուք 'ի քեզ մերձե
նալ, և յամ կապակցութենէ երկ
րաւոր սիրոյ հեռի դնել զանձն:
Յաւհ և երկիւղ քո յղանալ, և ծը
նանիլ զհոգի փրկութեան:
Ստանալ զաւակ ողջախոհութե,
և դիել զմանկունս առաքինութե:

Այլև զզօրեղ իմ ախոյանին, հար
ցես խոպառ զգունդ անպարտելին
Ճծր զբաղ

զբազմօք ընդ իւս պատերազմողին.
այն որ հետեւօղն է ցանկականին:
Որ 'ի պատճառս լրման ախտին.
սկիզբն առնու յաղթոյն 'ի յասպա
րիզին. զարմատն ամ̃ ախտից հա
րուե̃. ըստ առաքելոյ եդեալ հրա
մանին: Այլեւ ընդդիմակ բարե
պաշտուե̃՝ որ հանգոյն կռոցն եր
կրպագելի: Սաստի գործեցաւ
զէն պատերազմի. հարկանել անխը
նայ 'ի սուր սուսերի: Յորմէ՝ սի
րոյն արմատ գօսացաւ, եւ ատելու
թե̃ ծառն ծաղկեցաւ: Որ 'ի հի
մանց տապալեաց զքաղաքս, եւ
զաշխարհ արար աւեր ամայի:
Որ 'ի ծովու շարժեաց ամբոխումն
եւ խռովութի̃ անհաշտ 'ի յերկրի:
Որ զբնութիւն անծանօթացաւ,
եւ զգութ փակեաց 'ի մերձաւորէն:
Որ ընդ ստացողին պատերազմեցաւ
արկեալ անխնայ ընդ ստրկութե̃:
Որ մեծատանցն է պատճառ չարի՝
յափշտակութե̃ եւ զրկողութե̃:
Նա՛ 'ի մանկց մերին խորանին իբեւ

 պա

պարըսպէ զունօղըն իւր։ Նաեւ՝
տընանկաց վտաստակար. որ ընդ գո
ղութեանն երդմնահարութե̃։
Նա՛ զի ընդ սովաւ բերիմ ամենե
քումբք՝ որովք խայտա վերա̂ր̃ցայ,
հար ուժգնակի կարօղ զօրութե̃
զփաղանգս կրիցն կործանական։
Պարծո՛ ՚ի ներհակն փրկանաւոր
՚ի սէր տռփանից անկապուտ գոյին
Լքանել զանկայունս և զցնդելին՝
որ ՚ի յունելն միշտ ծորոպրի։
Ստանալ զանփոխն և զհաստատուն,
որ ՚ի շտեմարանդ վերին գանձի.
որ ժանեաց ծըծեացն է անծախե
լի. և անապական անըմբռնելի։
Որ փոխատրուին է անկարօտիդ,
և հատուցումն անբաղդատելի ։
Որ յաւիտեան կայ և մնայ՝ յար
դիս սփռելովն կարօտելոց։
Որ բարձրագահ պանծանօք պար
ծի՝ առ բեմիդ մեծի ՚ի դատաստանի։
Տալ զառօրեայս ապականացու,
և առնուլ զկայունդ և անվկան։
Սերմանել ոչ ՚ի մարմին՝ ուսան
ծի   հնձի

ջնջի ապականութի՟, այլ առատութե՟
յանձն բանական. որոյ հունձքն
կեանք յաւիտենականք:

Լա՛ւս՝ ագահել զագահութիւն որ
լի՛ է երանութե՟. և սիրել զարծաթն
զայն որ պատճառ է անմահութե՟:
Ո ա՟մ որ միանգամ յերկրի գոյք
են ՝ցանկալի, փոխանակել ընդ քո
սիրոյ տենչալի. և ստանալ գանձ
մեծ զքեզ զանկապուտ ճոխութիդ.
զաններհակ փարթամութիւնդ.
զանապական գանձդ. զանաղտ ոս
կիդ. զլուսաւոր մարգարիտդ:
Լա՛ արծաթ սիրել զքո բանդ՝ սըր
բեալ և զտեալ բազմապատիկ ՚ի
հողեղէն կարծեաց. զկեցուցիչ
պատուիրանդ որով կեցցէ մարդ:
Ո քարդ պատուական, զոր ծո
խացեալն նորա՛՝ անլուծանելի
ասաց պատճառ կենաց. հետևեալ
նմա մինչև եմոյծ ՚ի նոյն:

Իսկ որ ըստ աշխարհի է տրտմու
թիւնն որ մահու է պատճառ,
Ճիա՟ որ

որ 'ի նուազիլ հեշտալեացն յղացն
և 'ի պակասիլ ախորժելեացն ծնաւ.
զոր յաճախութի չարեաց սնոյց,
և յուսահատութեանն անդունդ
ուղեաց . Որ ուրախութիդ ես
երկնայնոց և երկրայնոց, փոփոխեա՛
յուրախութի որ ոչ անցանէ ։
Հա՛ր յետս զտխրութին անփոփոխ։
Կործանեա՛ զտրտմութին անմխիթար։
Փարատեա՛ զսուգն զօրացեալ ։
Հեռացո՛ զթախիծն ստուարացեալ։
Մ՛երժեա՛ զյուսահատութին որ
մտացեալ ։ Մ՛խիթարեա՛ զալըս
տեամբ քո շնորհի։ Սփոփեա՛ ծագ-
մամբ քո լուսոյ։ Զի որ ոչն կա
մեր մխիթարիլ, յիշատակաւ քո
ուրախացի . և խրախ լիցի սիրտ
որ խնդրէ զքեզ. և ցնծասցէ և
զուարճասցի յուսացեալն 'ի քեզ։
և 'ի ներհակն յեղցես տրտմութի
որ գումելլինէ։ Տո՛ւր ինձ ցնծու-
թի համայնից տրտմիլ 'ի նուազուե
բարեաց. որ ապաշխարութիւն 'ի
փրկութիւն անզղջանալի գործէ։

Ճիէ Սուգ

Սուգ ունել՝ որոյ արմատ երանու-
թիւն է, և պտուղ մխիթարութիւն։
Տխրել 'ի յանձին վասն. թախծիլ
յընկերին սխալանս։ Որպէս զի
կարող լինիլ ասել ընդ դաւթի,
տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղա-
ւորաց. և՝ հայէի յանագորունսն
և մաշէի։ Ընդ մովսէսի՝ եթէ թո-
ղուս դ՟ց զմեղս թող. ապա թէ ոչ՝
և զիս ջնջեա 'ի դպրութէ քումմէ
յորում գրեցեր։ Ընդ պօղոսի նը
զով լինիլ վ՟ն եղբարցն. լալ ընդ
լացեալսն. վշտանալ ընդ վշտան-
գեալսն. խնդալ ընդ խնդացելսն.
զուարճանալ ը՟ն փառաւորեալսն.
ոչ խնդրել զանձին ևեթ, այլ և
զընկերին և զբազմաց զի ապրես-
ցին։ Շնորհեա ինձ բերկրութիւն
բոլորից՝ տրտմիլ յանզգայութե խո-
հականին. յարութեն վատութի.
յողջախոհութեն մեղկութիւն.
յարդարութեն անիրաւութիւն.
'ի ստրկութիւն իշխանականին.
'ի տէրութեան լինիլ ծառային.

Ձիգ Ա՟

Նա՛ միանգամայն՝ ՚ի վնասակարս ամ
տխրիլ՝ և յընդդէմն զուարճանալ։

Այլեւ որ հետեւանք նախաձաւե
լոցս՝ ցամմնականին յանդուգն
յարձակումն՝ որով արտաքոյ բնու
թե վարեցայ ըստ անընտել և ան
համբոյր վայրենաբարոյ բնութե
գազանաց, Պարձ՛ անախտական
և բնաւ բարի ՚ի սրտմտութենէն
որ խլր եղբօրն. և կարողացս զինիլ
ընդդէմ հակառակամարտին։
Շիջո՛ զկատաղի ցասումն ՚ի մեր
ձաւորեն, և տու՛ր զայրանալ ընդ
դէմ օտարին։ Սիրել զընկերն հին
գոյն անձին. և սրտմտիլ ընդդէմ
վիշապին. ըստ ՚ի բնութեն եդեալ
սահմանին. լինիլ սպասաւոր պա
տուհասի չարին յարձակման. և
հերքել որպէս զգայլս ՚ի հօտէ
գառանց։

Եթէ եկեսցէ քննին՝ այլ և շողո
քորթ ցանկութին հեշտ և մեղկա
ցուցիչ յարիցէ զինուն արութե
ձիդ և

և խոցոտեսցէ իսպառ անխնայ ։

Եթէ սողեսցի վիշապն մահա-
շունչ՝ պոռնկութե՟ն թունիւք
սատակօղ՝ մտանել ընդ քակուած
ոգւոյս և ըմբռնել զդըղեակ ամ-
րու՟ն ողջախոհութե՟ն, սպառազի-
նեսցի՛ ընդդէմ նորին որ հրաման
էառ սպասել գլխոյն ․ և դնասցէ
խրոխտ զօրու՟ք ՚ի վերայ իժին և
քարբի ․ կոխան առնելով զա՟մ զօ-
րու՟թ ընդդիմամարտին ։

Եթէ սկզբնամայրն ախտից հեշ-
տու՟ե որկորստուի՟ն՝ բնաբար
և կարեկցապէս իբր տնանկից՝ հար
կա՛նօրացն արտաքոյ շարժեսցի ,
պարկեշտութե՟ն առարկու եղեալ՝
ո՟չ զինո՛ր քաջ և արի զայրաց-
մամբ մեծա՛՝ սակա՛ապիտութե՟ն
սրով մարտիցէ ։

Ե՛ եթէ աշխարհակուլն այն և
անյագ որովայն՝ որ ծովաքատակ
խանչմամբ զա՟մ ուխս երկրաւոր
դղից ՚ի դժոխայինն ամբարէ պոր-
տի և ոչ յագի , Օ՟ արթիցէ սրով
ձին

բար

բարկութն առիւծաբար յարձակ-
մամբ. և ժանեօք որամոլութեանն
զփաղաղիչն պատառեսցէ առ՚ի յեր-
կիր զնորայն հեղլով զմաղձ։

Եթէ որամոլութին որ ըստ Նի՛
՚ի նմանողութն իրիք շարժեսցի ,
կամ առաւելութի վնասակարացն
զյուսոյն առասան հատցէ, սաստ-
կագոյն վառեսցի ցասմամբ՝ նիզա-
կաւ ժուժկալութն և վստահութե
յուսոյն որ առ քեզ. տապաստ ար-
կանելով զհողս հակառակացն։

Եթէ վատթարն այն և զէն ընկ-
կեցն ՚ի յասպարիզի որ ձանձրու-
թեն է աստ՝ զօրասցի, կասեալն ՚ի
վաստակոց և թուլացեալն ՚ի պըն-
դակացմունց՝ կատաղի ցասմամբ
ընդ դէմ մարտիցէ . հալածական
առնելով զկնատան և զմեղկեալն
՚ի քաջ պնդութեանց։

Իսկ Եթէ զանխղաբար ՚ի ներքս
մըղեսցի որ ամ առաքինութեց
դրանց ահազակապէս սպասէ՛. և
սկզբնաբույս ընդ լանին վերերե-

Ձիղ ես

եսցի ցորենոյ որոմն դառնուն․
որ անմարմնոցն մշակութ ջնջեալ
՚ի հուր տոչորի փառամոլութեն
ախտ․ շարժեսցի՛ ընդդէմ բարկու
թե՟ հարկնել․ և ոչ դարձցի մինչև
իսպառ կործանեսցէ։

Ա՟ եթէ մոլին այն և յանդուգն՝
ըմբոստն և յանձնապաստան ,
որ զամենեքումբք քամահէ , ըղ
բնածին արհամարհէ և առ ոտն
հարկանէ՝ հպարտութին և ամբար
տաւանութին շարժեսցի, գաղա
նային և անընտել զայրացմամբ
ընդդէմ յարիցէ՛ ըմպահկեսցէ՛
խրոխտասցի՛ փքասցէ՛ խլէրեռաս
ցէ ՚բարկութբ մինչև անդրէն նա
հանջեսցէ։ Ա՟ բոլորովին ընդ
դէմ ա՟մ ախտից՝ զօրէն շան տիրա
սիրի առընտելս և մերձաւորս՝ հեզ
և հնդարտ երևեսցի, և առ օտարս
և անծանօթս՝ սրտմտեալ վայրենա
բարոյ և պատառօղ։ Բա՟ացն՝ ա
րութեն օժանդակեսցէ, և ընդ
վատթարացն՝ գաղանութեն պատե
րազմեսցի։

Իսկ որ յարմարապէս զՏէր քար
շի՛ ՚ի շարս շղթայից կորստական
ախտից զօրեղաց՝ լքեալն յարու
թեց եւ թուլացեալն՝ որ ձանձրու
թենէ գումարտակ ընդդէմ քա
ջութեց: Որ նահանջանդիստն է
աչէկոծեալ եւ տատանեալ չարին
կամաց: Որ օթեւաննէ հանդըս
տեան բազմավաստակ երկոցն բե
ղխարայ: Որ ամրոցն է անմարտըն
չելի եւ ապաստան յուսոյ ապա՛ւի
նութե ապաստամբելին: Յոր՝ ժամա
նեալ կայ միայ իբր ՚ի քաղաք եւ
ընքպարսպեն եւ ՚ի դղեակ անպար
տելի խաղաղացեալ խռովարարն
բոլորից. զի ո՛չ ունի զօք մարտա
կից եւ ընդդիմահար: Ո՛չ ախոյեն
յաղթօղ. ո՛չ զօրավար զօրեղ. ո՛չ
զինուոր քաջ. ո՛չ ըմբիշ արի:
Զի ամ պարտեալ ամաչեցեալ
գլխակորեալ զէնընկեց եղեալ,
ձանձրութեն իւր հասեալ զօրեղ
ընդդիմամարտ, զամ առհասարակ
 պարտեալ:

Այլ որ աննիրհ պահապանդ ես
իսրայէլի՝ զարթո՛ զզօրութիւնդ և
եկ 'ի կեցուցանել· հա՛ր յետս ըզ
թշնամին· ա՛ռ զզէն և զասպար քո
և արի՛ յօգնել· հա՛ն զսուր քո ընդ
դէմ հալածչացն և արգել· և դար
ձո՛ 'ի ներհակն զձանձրութիւնն·
Ա՛ռ ըզ զէն ընդդիմամարտին և
տո՛ւր 'ի ձեռն անկելոյս· զի ին
քեան զինուն ընդ նմա մարտուցն
յաղթող գտայց քև պաշտպանեալ
ամենազօր· Ո՞չ զի առ ամ քաջա
մարտիկ զինուորս նորա ախոյեան
հոյլս՝ նովաւ պատերազմեցայց:
Զանձրացեալ լինելով 'ի շարժմունս
ախտիցն· լքեալ 'ի յաղդմունս նց·
թոյլ 'ի մտածութիւնս· մեղկ 'ի
յօժարութիւնս· անզօր 'ի կամակցու
թիւնս· ակար 'ի ներգործութիւնս·
անշարժ 'ի սկզբունսն· անարի 'ի
կատարմունսն· զօրէն բազմամեայ
հիւանդի և կամ 'ի մեռելոյ դող
համարի առ ամ շարժմունս ներ
գործականս սատակչական ախտիցն:

Իսկ յընդդէմն սոցուն յառաքի
նութեցն ազգմունս և՚ի կատար
մունս՝ ուշեղ իմաստուն . ճնարիմաց .
խորագէտ . զօրեղ . քաջ . արի ։
՚Ի սկզբմունսն հանճարեղ . ՚ի միջո
ցին զգաստացեալ . յաւարտումն
զօրաւոր ։ ՚Ի վաստակ անձանձրոյթ
՚ի տքնութի զուարթ . ՚ի ճգնութի
անխոնջ . ՚ի մաղթանս մտաւոր . ՚ի
պահս անթուլանալի ։ Ո՛ վաստա
կոյն ժամանակ սուղ նկարագրել
զհանգստեանն երկայն ։ զպատե
րազմն փոքր , զմրցանակն մեծ ,
զաշխատութին սակաւ , զհատու
ցումն բազում ։ զելսն մերձ , ըզ
դատաստանն հասեալ ։ Որով ամե
նեքումբք հեղգ առ վաստութիւն
և արի առ քաջութիւնս եղեց
զօրութ̃ քո պաշտպանեալ ։

Իսկ արդ ահա յայսոսիկ վայելել
իմ ՚ի պաշտպանութ̃ քո փրկութ̃
հեշտալուր և առատապարգև տր̃,
որ բանաս բախողին և անձնախանձ

Ձև ձրես

Ձրեւ հայցողին. սողի՛ ահա վիշապն
անդընդային՝ օձն կամակոր՝ իժն
պատառօղ՝ քարբն խածանօղ. և
զանխլաբար ընդ ծերպս շարժման
իշխանականին զանձն իներքս քար
չէ ախտ ամբարհաւանս փառամո-
լին։ Որ է իւրաքանչիւրոն զոյգ-
բուսանի 'ի մասունս առաքինուե
որում ապականիչ. եղծանել և ջրն
ջեռ մինչև իսպառ։ Քանզի ահա՛
որջացեալ 'ի կայումն իշխանակա-
նիս՝ վիժէ՛ և պատառէ՛ զամ։
Որ թէ յղանայ և կամ ծնանի 'ի
պատուիրանաց քոց սերմանէ՛ ման
կունս առաքինութե՛, մահացու-
թունիւքն վիրաւորէ։ Ո՛ որ ած-
ցես ողորմած և մարդասէր ըղ-
սուրն մեր և հատանօղ 'ի վր օձին
կամակորի և վիշապին փախուցե-
լոյ։ Ջախեսցես զգլուխ խա-
ծանողին, յոր տկարացայ անզօրս
'ի լրումն քո հրամանին։ Արա-
ցես լինել կորխան 'իներքոյ ոտից
ղքեղ մաղթողիս. զօրացուացես

զձեռն տկարիս ՚ի բոյն իժիցն կո
րեանց արկանել և արտաքս ձգել
՚ի յորջից սրտիս գործարանի. և ոչ
վնասիլ իբրև ՚ի լեառն սրբուն։
Բաղեա՛ մշակդ երկնաւոր ՚ի յայ
գւոյս տընկեալ քո աջոյ զդաղձն
վնասակար. որ ո՛չ միայն բազմապը
տուղէ չարուն և անպտուղ բա
րւոյ, այլև զողկոյզն քաղցրութե
՚ի դառնութիւն փոխարկէ։

Տո՛ւր ինձ Լ՛ոյսդ անմերձենալի
լուսատուդ բոլորից բիբս կորո
վիս ըստ վկային ճշմարտութեան
վկայեցելոյդ Հօր. որով կարացից
նկատել զքեզ ՚ի բարձունս ը̅ Հա
մակամս և միաբունս Հրանիւթիցն
խըմբիւք տեսանող իմոյս Հանդի
սի։ Լո՛ւ մի՛ կործանիլ ՚ի փառս սը
նոտի և ընդունայն դեմետրածին
ռամկիս. որ կարծիս միա՛յն է և ո՛չ
էութիւն. և ծխոյ նման պակասի։
այլ զվերինդ խնդրել զփառս սեր
տեալ և անփոփոխ. և մի՛ զստորինս
լուծական և յեղլի։ Ո՛չ փոխա

 նա

նակել զյաւիտենականդ և անցըն
դելն՝ ընդ առօրէիս և անհաստատ
նոյ։ Լա՛ւ ոչ զհաճութիւն կամաց
ամենազօրիդ՝ որոյ կամքդ է կեալն
ամենեցուն, ընդ հաճուե կամաց
մարդկային. որոյ շնորհն՝ ցրումն
ոսկերաց ըստ մարգարէին։
Ո՞ւր խառնեսցի ժանկն ապակա
նուե փառամոլ ախտին ընդ անա
պական և ոսկէճաճանչ գեղեցկու
խոհականին ընտրողութեան։
Ո՞ւր գունաւորեսցի ախտն ամ
բարհաւաճութե իւրո զուտ և մս
քուր արծաթոյ բանի քո քարո
զութեան՝ բազմապատկապէս սըր
բելոյ ՚ի հողեղէն կարծեաց։
Ո՞ւր ագեղուն անմաքրութե նո
րափառութեն խաւարեցուցէ ըղ
պայծառ մարգարիտն ածխօսութե։
Ո՞ւր մէգ փառաց երկրաւորիս տա
րածեսցի առ պաղպաջուն քա
րամբք ողորմութեն առ աղքատս՝
և գթութեն առ կարօտեալս։
Ո՞ւր շաղախումն հաճութե հա
ճլդ մա

մասնու տեսողաց շփեսցի զպատ-
ուական ակամբք զանազան պատ-
ուիրանաց քոց լուսափայլ գեղեց-
կութեց։ Այն որ ես դժնդակն է
քան զամենայն․ յոչ էսն պանծալ
և յանդոյսն խոխոտանալ։

Ա՛ի ոչ հպեալ և՛ի մի ինչ տեսակ
առաքինութե՝ առ այս ձևացայց
կերծիւք որսալ զփառս 'ի մարդ-
կանէ։ Այն մի՛ յանհաւասարին կար
գեցայց դասու ըստ Ճշմարիտ քո
բանի՝ որ պատճառ անհաւատութե
զաւ 'ի միմեանց հայցումն փառացն
ասայեր․ և ո՛չ 'ի միա՛յն Ճշմարտէ։
Այլ անարգելով զերկրաւորս,
ըստացայց զերկնայինսդ․ և պատ-
ուելով զվերինդ՝ արհամարհեցից
զստորինս․ և բաղձանօք էապէս
բարութդ՝ 'ի նոյն փութացայց ան-
դարձ յառաջ շարժիւք՝ զկնեայն
մոռացումն արարեալ վերայ յայսո
սիկ և նախքան զայս։

․․․․․․․․․․․․․․

Այսոյն աղերս մաղթանաց բարձ-

Ճրդ  րե

ընլոյդ փառաց և գթուն կամաց
'ի թախծեալ սրտէ և 'ի վշտագին
անձնէ ամենախնամ և հաւատոր_
պարգև տնդ և արարչի մատուցա
նեմ. բողոք բարձեալ 'ի սաստիկ
հարուածոյ և կարեվէր խոցուա_
ծոյ զօրաւոր դումարտակին ամ_
բարտաւանութե՝ հէ.քս և թշուա_
ռական. զի յայլոց ախտիցն վերա
ա՛որեալ նետից՝ առ .քեզ վերա_
կանգնեսի կարդալով յօգնակա_
նութե և ոչ վրիպեսի 'ի յուսոյն.
որև յառաջես .քան զհայցելն ա_
ռատանալով 'ի պարգևս. վասն զի
հաղէք էին ըմբըռնողականք. 'ի
բնականս կամ յանբնականս. 'ի
գէտս և յանգէտս. 'ի կամայս և
յակամայս. ներելիք բարերարին
կամաց և շնորհելիք. թէպէտ և
մեծամեծք և դժնդակք:

Իսկ արդ պատկեր եղէ ապստամ_
բին. ինքնագիտ և ինքնակոր_
ծան տպօքն կերպարեալ:

Վասն զի լուայ թէ ողորմած ես

ձե և

և գթած. ոչ ըստ մեղաց առնես
և ոչ ըստ անօրէնութե հատուցանես։
Ըստ բազմագթութե ողորմութեան
մաքրիցն ՚ի յելլիցն զանօրէնութիւն
հեռացուցանես։ Նմանաս զմեղսն
և ընկենուս ՚ի խորս ծովու։
Բայց ամենաբաւանիցն՝ հակա-
ռակ ես. հպարտից թշնամի. զի որ
բարձրացուցանէ զանձն ընդդէմ
կամաց բնութե բարձրելոյդ՝ խո-
նարհեսցի։ Իսկ յարիցես ՚ի նե-
ղութենէդ ՚ի վրէժխնդրութի
ամենաբարձելոյն հակառակ քո ամե-
նազօր և կամարար տր. ոչ ինձ այլ
որ յիշանէ զօրացեալ ամենաբաւան
ախտին։ Վասն զի ապստամբեաց
դռուզն այն փքացեալ ՚ի վեր տան
քո՝ որ երբեմն շնորհիւքդ ՚ի բնակու-
թի քեզ յարդարեալ։ Կործանեց
զամրութիս. քակեաց զշինուածն.
էառ յաւար զստացուածսն. խող-
խողեաց զշինուորսն. եհար զզօրա-
ւորսն. ՚ի դերութի վարեաց զամ։
Վասն որոյ թագաւորդ հզօր՝
Ձեղ            յաղ

յաղթօղդ 'ի պատերազմի՝ ամբարձ
ցես զձեռնդ բարձրեալ հակառակ
քո բարձրելոյն ։ Արձակեցես
զաջդ կարող 'ի վրէժխնդրութի հա
կառակին։ Ազբեցուցես զնետ
բարկութեդ յորենէ մխրաճորաց
և գերելոց գլխոցն իշխանաց։
Սրովդ քո աննղաճակեցես արտա
քուստ և ներքոյ։ Հուր ցասման
քո վառեսցի և'ի հիմանց տապա
լեսցէ։ Զլերինսն ամբարձեալ
հպարտութե՝ հալեսցես։ և զան
տառսն թանձրացեալ ամբարտա
ւանութե՝ վատնեսցես։ Զար
թուցես զաղեղն քո սաստկութե։
և զնետս կապարձաց քոց արբե
ցուսցես։ Ձգեսցես նետս 'ի գլուխ
ամբարտաւանին։ և մինչև յան
դունդս ընկղմեսցես։ Խորտակես
ցես զբազուկ հպարտին։ և բար
կութե խռովեցուսցես՝ զի այլ
մի' գտցի։ և զնա զերծուսցես 'ի գո
ռոզէն որ զօրացեալ է յորդիս ա
պստամբութե։ Զի եղէց շնորհի

ձէ                    քո

քո մարդասէր յայսմհետէ ամբար
տաւանս խոնարհ. հպարտս նուա
ստ. բարձրամիտս ցածուն. փքա
ցեալս զնստեալ. յանձնապաստանս
զյուսոյ քո կախեալ. ինքնաբաւս
կարօտ. ինքնազօրս տկար:

Ո՛չ գերամբարձեալ քան զհոմա
սեռս: Ո՛չ բարձրացեալ քան
զհասակակիցս: Ո՛չ փքացեալ քան
զպատուակիցս: Ո՛չ այտուցեալ
քան զմերձաւորս: Ո՛չ ուռուցեալ
քան զհամարունեսս: Ո՛չ յարձա
կիլ ՚ի վեր այլոց Թշնամանօք:

Ո՛չ արհամարհել. ո՛չ առոտն հար
կանել. ո՛չ նախատել. ո՛չ եպերել.
ո՛չ բասրել. ո՛չ պարսաւել. ո՛չ դըս
րովել: Այլ առ ամենեսեան հե
զուբ՟ գնալ. խոնարհուբ՟. ցածուբ՟
նուաստախոհուբ՟: Ո՛չ ՚ի յոչէսն
մեծաբանել. ո՛չ ՚ի յոչգոյսն հպար
տանալ՝ որ յետին Թշուառութիւնէ:
Ճանաչել զչափ անձին: Իմանալ
զկար զօրութե՟: Ո՛ քոյդ նկարել
պատկեր հեզութե՟ և խոնարհութե՟

Ձըր զոր

զոր ուսուցեր․ զապստամբելն եղ
ծանել ամբարտաւանութե՟ն տեսլ։
Ո՛չ բարձրանալ զի մի՛ խոնարհե
ցայց․ այլ խոնարհեցայց զի բարձ
րացայց ըստ քում հրամանի
ամենողորմ և մարդասէր։
Ե՛ւ զի ոչ միայն այսու գլխաւո
րագոյն ախտիւք վիրաւորեցայ
ամենաթշուառս, այլև ես յոլո
վիւք որ ընդ սոքօք բերին․ ատե
լուե՟․ նախանձու․ ոխակալուե՟․ և
այլովք։ Զորս զա՟մ դարձուսցես
բարերար (որ դարձուցանես յայդ
զստուերս մահու) յիւրաքանչիւր
վատթար շարժմանց ՚ի ներհակըն
կոյս որ ըստ ընտրականին մասին։
Սիրել զքեզ ՚ի բոլոր սրտէ ՚ի բո
վանդակ մտաց և յա՟մ զօրութե՟․
և զընկերն ՚ի չափ անձին։ Լինել
աննախանձ ՚ի չարիս և նախանձա
ւոր բարեաց․ անոխակալ․ անչարա
յուշ․ անբամբաս։ Ո՛չ հայհոյել։
Ո՛չ չարախօսել։ Ո՛չ դատել։ Ո՛չ
ստել։ Ո՛չ երդնուլ։ ոչ գրգռել։

Ո՛չ հակառակել։ Ո՛չ շոգմոգել։ Ո՛չ կեղծաւորել։ Ո՛չ մարդահաճել։ Ո՛չ սուտակասպասել։ Ո՛չ խեղկատակել։ ո՛չ դատարկաբանել ո՛չ մատնել։ ո՛չ քսել։ ո՛չ զրկել։ ո՛չ զրպարտել։ ո՛չ յափշտակել։ ո՛չ անիրաւել։ ո՛չ գողանալ։ ո՛չ պղերդանալ։ ո՛չ աչառել։ ո՛չ երկպառակել։ ո՛չ անհնազանդել։ ո՛չ յանդգնել։ ո՛չ անամօթել։ ո՛չ խեռալ։ ո՛չ նենգել։ Այլ լինել գըթած. ողորմած. ժուժկալ. բարեսէր. արթուն. զգաստ. պարկեշտ։ Յամ կամս բարեսիրիդ՝ արիութբ գնալ. և որ ներհակն է կեցուցիչ

կամացդ՝ հրաժարել։

Այլ ով Իմաստութիւնդ Հօր՝ որ շինեցեր զտուն քո զեկեղեցի ՚ի բազմորակ նիւթոց իմասին հաւաքելոց. յօտարասերմ ազանց եթովպացւոց և քանանու. հնդկաց և բաբելոնի. ծուրայ և ծայդանու։ Ո՛ սւացեալն մեղօք և զոգեղացեալն անօրէնութե.

Ճխ ԸԶ

զզազրացեալսն կռապաշտութե՟ և բիւրապատիկ յանցաւորութե՟։ Ո՛ որ մաքրեցեր լուացմամբ աւազանին· և լուսափայլ զարդարեցեր քև զգեցմամբ և փառակից Հոգւոյդ շնորհիւ · և զնս՟ ամենեսեան որպէս հանդերձ զգենլով։ Յորոց պատճառս փրկութե՟՝ անպարագրելի բանդ հօր և ծնունդ անճառ էութե՟ նր՟՝ հաճեցար լինել որդի մարդոյ՝ հաւասարեալ կրից նց՟ բաց ՚ի մեղաց։ Չարչարեցար՝ խաչեցար՝ մեռար և յարեար · և ընդ քեզ յարուցեր զամենեսեան ՚ի յանկմանէ մեղաց ՚ի կանգնումն արդարութե՟ · և մարմին և անդամ քեզ արարեր · յօդեալ ՚ի գլուխդ սրբութե՟։ Ո՛չ անդէտ եղեալ հանապազասխալ և դիւրագայթ կամաց նց՟ որ ըստ ծուլութե՟ և չարին պատրանաց · որ միշտ թաքուցանէ զորոգայթս և ըմբռնէ ՚ի հաղբս կորստեան։ Սակս որոյ և սահման ապաշխարութե՟ ցուցեր և վերստին

Ճխմ՟ նո

նորոգման 'ի ծնութէ ապականա-
գործ կրիցն։ Ո՛ ի եթէ ախտաս-
ցի ինչ յանդամոց մարմնոյ հան-
րական գլխոյդ, մի՛ զանբժշկականն
յորմէ 'ի բաց հատումն, այլ շնոր-
հիւ քո ապաշխարութեն սպեղա-
նեօք առողջացի և 'ի նոյն հաստա-
տեսցի։ Արդ ընկալ յանարժան
մաղթողէս հեշտալուր և բարեբեր
տ̄ր զպաղատանս զայս. զոր խնկեղ-
բան բանիս մինչև յաւարտումն
քեզ մատուցի։ Ես 'ի դիմաց հա-
մօրէն մարդկային սեռի. որ ծը-
նունդ գոլով նախածնին, և ընա-
ծորապէս նորին ախտից հետևեալ,
և զնոյն ունելով մախացող և պատ-
րող թշնամի, հանապազ վերասա-
ցեալ ախտիւքս որսացեալ լինին
'ի նմանէ 'ի նորին կամսն։ Եւ թող
զյանցանս ամենեցուն. զկամայ և
զակամայ. զգիտուն և զանգիտու-
թեան. զոր յա̄ծայինսդ և 'ի մարդ-
կայինս։ Ո՛ անձին և զզօրէնց ն̄ր.
զբանի զցասման և զցանկութե̄։

Ծխը զմար

Օ մարմնոյ և զգայութեանց նր․
զտեսանելեաց զլսելեաց զհոտո_
տելեաց զճաշակելեաց և զշօշա_
փելեաց։ Օ մտաց և զշարժմանց
նր․ որ համայնիցն է կառավար և
առաջնորդ։ Որք հեստեալք են
՚ի պատուիրանացքոց և սուննդա
նօղք հրամանի օրինացքոց․ և հեշ
տութե ախտիւք հարեալք ՚ի սէր
աշխարհի․ ջեռեալք սիրով ստոր
նայնոյս․ և սառուցեալք և անփա
փագք բաղձանաց վերին փառացդ։
Տուր նց ողորմած՝ դարձ ապաշ
խարութե և արթութի ՚ի գործ պատ
ուիրանի քո․ ժուժկալութե վարուք
վերանալ յաշխարհէ։ Ի՜ անշարժ
գոլ սիրոյ անցաւորիս, և ջերմեք
մշտաշարժութբ և անխոտոր գնա_
ցիւք ՚ի յելս երկնային ուղւոյդ
և ՚ի տենչումն խնկալի բարւոյդ․
որում ամենայն որ ուղիղ զհայե
ցուածսն ունի՝ բաղձայ։
Իսկ որք միանգամ ողջոյն տուել
երկրաւորացս և բացադարձեալ
ճխտ ՚ի

՚ի բնութե̄ հրաժարելեացս , վա
ռեալք հրով զոր արկեր յերկիր․
որ կիզանօղն է ախտից և լուսա
ւորիչ ՚ի լոյս գիտութե̄ երկնաշա
ւիղ ելիցդ․ պահեա անսայթաք
յա̃մ հաղէից որոգայթադիր թշ
նամւոյն․ և զօրացո արիութեամբ
յա̃մ գործս պատուիրանաց քոց․
օրըստօրէ յառաջանալ անստերիւր
քաղաքավարութեամբ։

Ա՜ զորս քահանայապետդ մեծ՝
անցեալ ը̄ երկինս և՛ ՚ի ներքին
մտեալ կողմ վարագուրին յանդի
ման եղեալ երեսացն հօր՝ զմերն
քահանայագործել զփրկութիւն,
կացուցեր յեկեղեցւոջ քո՝ փոխա
նակ քո հովիւս և վերակացուս
հանդերձ քահանայական դասուք
և որ ընդ նոքօք ժառանգաւորք,
հովուել զհօտ քո․ զոր ապրեցու
ցեր պատուական արեամբ քո՝ ան
բիծ և անարատ գառնդ բարձող
մեղաց աշխարհի։ Զօրացո իբրև
զհովիւս քաջս մարտնչիլ ընդ չար

գողս ապականիչս հօտի.քո՝ և ընդ արիւնախանձ գազանս կեղե_քիչս դառնից.քոց. և դնել զանձինս իմ͞ր հօտիցն ը͞ս օրինակի.քո. և արածել յարօտս ա͞ծային հոգևոյդ բղխման վարդապետութե.

Այո՛ եթէ հեղգացեալ ինչ գտան, կամ՛ի տալ զանձինս օրինակ բարւոյ հօտին մաքուր քաղաքավարութե, և կամ՛ի խրատել և յուսուցանել զժողովուրդս քո ըստ հրամանի սրբոյ քոյ պատուիրանաց. ներեա՛ ո՜վ մարմնոյ և արեան վիճակելոց. և թող զյանցանս նոցա զկամայ և զակամայ՝ քոյով մարդասիրութեամբդ.

Այո՛ որք հրաժեշտ տալով ա͞մի՝ բարձին զխաչս խուրեանց և հետևեցան զկնի խաչեցելոյդ. մեր_կացելք յա͞մէ և օծեալք շնորհիւ հոգւոյդ ըմբիշքն բարեպաշտութե. Որ ոչ զհողմս կոծելով յանդոյս ձգեն զձեռս, այլ ազդօղ հարուածով զկարևորսն վերանորեն ընդ-դիմամարտին։

Օ՜ օրացն նահատակաւորդ յաղ-
թող՝ յասպարիզի նահատակութն
ընդդէմ հանապազորդեան թշնա-
մւոյն. կալ քաջութբ և յաղթել
արիութբ ՚ի նկրկին պատերազմի ա-
ջական և ձախակողմ ախոյեանին։
Եւ եթէ գլթութեամ ինչ հանդի-
պեսցի յերկատեսակ այս հանդի-
սի, աջդ հօր՝ ձեռն կարկառեսցես
և վերստին կանգնեսցես հաստա-
տեալ ՚ի յապաստանդ փրկութն։
Եւ զորս յառաջ կոչեալ ՚ի բարձրա-
գահ իշխանութի ըստ մարմնոյ
առաջնորդութն հօտի քո՝ զթգւրս
և զիշխանս՝ զպետս և զդատաւորս,
Շնորհեա՛ նց ըստ արդարութն
իրաւանց քոց դատել զժղվրդս
քո. դատ առնել որբոյ և այրւոյ.
իրաւունս տնանկի և խոնարհի.
ապրեցուցանել զաղքատն և զտը-
նանկն ՚ի ձեռաց հզօրացն փրկել
զնս։ Մի՛ կաշառօք և ո՛չ աչառութբ
թիւրել զիրաւունսն։ Իսկ որք
յայսոսիկ սխալականք գտան, եթէ

ձիղ ՚ի

՚ի վարս անձանց և եթէ յիրաւանց
անիրաւութիւնս, ոչ հողանիւթ
գոլով և ընդ ոտնարուք անկեալ,
մարդասիրապէս գթացիր ներեա՛
սխալանաց նոցա ըստ ամենառատ
քո ողորմութեանդ։

Ա՛է ընդ հասարակ քո ժողովուրդ
խնամեսցես նախահօդակ փըր
կիչ ըստ իւրաքանչիւր կարգի և
աստիճանի։ Որք ՚ի զինուորականն
կարգեալ են դասու. զքաղաքա
կանս, զվաճառականս, զռամիկս,
զձեռնարուեստս, զերկրագործս՝
ընդ ճանապարհորդս, զնաւորդս.
զայրս և զկանայս. զծերս՝ զորդայս՝
զերիտասարդս և զկուսանս։

Ա՛է որք ՚ի պէսպէս ՚ի բիւրապա
տիկ յանցանս գթեցին ՚ի մեծա
մեծս կամ ՚ի փոքունս, ամենեցուն
ոյց արասցես մարդասէր և բարե
րար փրկիչ։ Ուրացողաց. սպանո
ղաց. կախարդաց. պոռնկաց. ար
ուադիտաց. զրկողաց. ափշտակո
ղաց. անիրաւաց. կաշառառուաց.

կաշառատուաց · զերանուն թիւ-
րողաց · հպարտից · ամբարտաւանից
ատեցողաց · նախանձոտաց · չարախօ-
սաց · հայհոյչաց · բամբասողաց · թշ-
նամանողաց · նախատչաց · եպերո-
ղաց · դարուողաց · դողոց · անաղա-
կաց · գերեզմանակրկտաց · սրտոց ·
ստերդմանց · երդմնահարաց · դըր-
դառողաց · հակառակողաց · երկպա-
ռակաց · շոգմոգաց · մարդելուզաց
շողոքորթաց · սուտակապասաց ·
աչառողաց · կեղծաւորաց · քսոց ·
մատնողաց · մարդահաճոյից · անա-
պարծից · փառասիրաց · արծաթասի-
րողաց · չարաուշից · ոխակալաց ·
բարկացողաց · սրտմտողաց · ծուլից
որովայնամոլից՝ շատախօսաց · դատար-
կաբանից · խեղկատակաց · անձնա-
ղանդից · անդթից · անողորմից ։
Եւ որ այլ ինչ ՚ի սոյնս յարմարին
յարմատոյ չարին և ՚ի սերմանց ·
՚ի բողբոջից և ՚ի շառաւիղաց · ՚ի
բարունակաց և ՚ի ստեղանց · ՚ի սա-
ղարթից և ՚ի ծաղկաց · և յատո-
Ձիր քա

քաջն պտղոց։ Որ յիւրաքանչիւր
հասակս ՚ի կարգս և յաստիճանս
սերմանեց չար մշակն, զամենայն
յարմատոց խլեալ մշակդ քաջ և
երկնաւոր։ Իսկ փոխանակ այսո–
ցիկ՝ սերմանեալ տընկեալ և արմա–
տացեալ զընդդէմն նոցին զառաքի–
նութեցն տունկս և սերմանս։
Ո՛վ սիրելին զքեզ յամ սրտէ ՚ի զօ–
րութենէ և ՚ի մտաց. և զընկերն ՚ի
չափ անձին։ Լինիլ հեզ և խո–
նարհ. երկայնամիտ. անոխակալ.
անյիշաչար. ողջախոհ. անբիծ. ան
արատ. ողորմած. գթած. վշտակից
արդարախոհ. իրաւադատ. Ճշմար–
տախօս. բարերար. ձեռնկալու.
աղօթական. պահացող. ժուժկալ։
Իսկ միանգամայն որ ինչ մասունք
են առաքինութեան՝ յամ զօրացս
քաջարութե՛ լինիլ կատարիչ հրա–
մանի քո։ Որպէս զի և մի անգամ
մի՛ գտցի զանբժշկականն ախտա–
ցեալ և ՚ի հարակաց մարմնոյ գրը–
խոյդ եկեղեցւոյ ի բաց հատցի։

Ճխթ այլ

Այլ ամենեքեն շնորհիւ քո ա-
ռողջացեալք՝ վերստին ՚ի նոյն հաս-
տատեսցին:

Եւ որք բանիւ կամ արդեամբք
զինքեանս յանձնեցին՝ եւ իբր
սպասաւորք քո մեծութեան զպտուղս
հաւատոյ ընծայեցին ՚ի ձեռն իմ
քեզ, համարձակութիւն կարծեալ
ունիլ առ քեզ բարեխօսութեան.
անդիմացեալ զանկանիլն ըստ ա-
նուանն գնացից յերեսաց իւրեանց
բարւոյդ. թէպէտ եւ իմ ոչ գոլով
գործունեայ յանդս օրինացս քոց՝
զի ՚ի քոյդ վայելեցից պարգեւս:

Այլ դու ընկա՛լ բարերար եւ մար-
դասէր զընծայեալսն իմ քեզ. եւ
յաննուաղ պարգեւացս քոց բիւրա-
պատիկս ըստ հաւատոյ եւ յուսոյ
նց̃ հատուսցես նց̃ յարդիս եւ ՚ի
հանդերձեալ կեանս:

Եւ ինձ մի՛ համարիր ՚ի դատա-
պարտութիւն իբրու անգործ է-
ղելոյ ՚ի պատուիրանս քո. զի ահա՛
յես մեծամեծս եւ բարձրագոյնս

ձծ                    քան

քան զոյնս առատութ՟ ձրից քոց
վայելեմ յարաժամ աննախանձա-
բար. որով կեամ և եմ և շարժիմ:
որում զարգ՟կն ծագես և անձրև-
ածես և զօդ առ՚ի շունչ հեղուս.
և զայլսն ա՟մ որ ոչ թուին՝ յերկնէ
և յերկրէ սպասաւորես.

Ա՜ որք զանցաւոր և զսնոտի
ընդունայնութ՟ի կենցաղոյս լը-
քին, և ընդ կուռ և ընդ կոխ ճա-
նապարհ հասարակաց բնութես հե-
տևեցին ՚ի կայուն և յանփոփոխ
և որ միշտ նոյնպս ունի կեանս.
յորոց փակեցան ա՟մ դրունք ա-
պաշխարութե և բարեգործութե.
որով ապրէր անձն և մարմին. ՚ի
շնորհաց տեղւոյ և ժամանակէ՝ ՚ի
դատաստանի և հատուցման ժամա-
նեալ. չքաւորեալ յա՟մ օգնակա-
նութենէ. և կախեալ միայն զյու-
սոյ քո և զգթութեան, Յիշեա՛
անյիշաչար և ողորմած զքո վասն
նց զկամաւոր խոնարհութիւնդ.
զաշխարհակեցոյց զչարչարանսդ,

և զմահդ կենսատու։ Եւ շնոր-
հիւ ամենօրհնութեն քո և մաղթա
նօք ընտրելոց քոց որք իսկզբանէ
քեզ բարեհաճոյացան՝ հարցն մեց
և արդարոցն առաջնոց՝ բնութեն
օրհնօքն արդարացելոց։ Տեսանո
ղացն դասուց՝ հոգւով քո մաք-
րելոց և զապագայսն պատմողաց.
որք ընդ գրաւորականին ընտիրք
երևեցան։ Ընտրելոց քոց առա-
քելոց, որք ակնատեսք և սպասա
ւորք եղեն ամենօրհնութեն քո, և
բարձրաձայն քարոզք աւետարա
նի քո մեյ։ Մաքուր մարմնարանի
և անարատ առագաստի մարդեղու
թեն քո՝ սրբուհոյ Ածածնին մարի
ամու. հանդերձ ամենայն պարու-
սրբոցն որք կուսութե նահատակե-
ցան։ Մարտիրոսացն խմբից. որք
զանձինս իւրեանց ետուն փոխա
նակ սիրոյ քո. և ընդ արեան քո
հեղին զարիւնս իւրեանց։
Ճգնաւորացն հանդիսին. որք ա-
րեամբ չափ նահատակեալ հակռկ

 կա

կացին մեղաց: Պատերազմեալ
ընդդէմ հանապազորդեան թշնա
մւոյն: Նա՛ միանգամայն ամ նեց
որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ:
Ներեա՛ և թո՛ղ նց զամ յանցանս
զոր ըստ դիւրասայթաք և սխալող
բնութեն ՚ի պատրանաց չարին՝ և
՚ի թոյլ և՚ի մեղկ յօժարութեանց
յանցաւորք գտան պատուիրանի
քո: Ո կամայ և զակամայ. ըզգի
տուն և զանգիտութն՝ զոր յած
այինսդ և՚ի մարդկայինս. զհոգւոյ
զմարմնոյ և զմտաց: Ո ի սրբելք
և ազատելք ՚ի մեղաց՝ շնորհիւքո,
արժանասցին մտից արքայութեն քո
ընդ ամ սբս քո: Փառաւորել
զանփոփոխելի Ածութի և զան
վախճան թգրւի քո Քս ած՝ ընդ
Հօր և Սբ Հոգւոյն. յաւիտեանս
յաւիտենից ամէն:

Նորին Գրիգորի Արքեպիսկոպոսի Սքեւռայոյ. Աղօթք որ 'ի խորհրդական ժամու Սրբոյ Աստուածային Խորհրդոյն մատուցանի:

ԱԲԱՐՁՐԵԱԼ. ահաւոր. անքնին. անիմանալի. անհասանելի. անճառելի: Ինքնագոյ գերագոյ. ինքնաբաւ. ինքնազօր. ամենազօր: Որս ծայրագոյն ես անմերձենալի. պատճառ գոյացութե որք ընդ լինելութե. իմանալեաց և զգալեաց. բերող նախախնամական զօրութե զոր ստացար արարչութե. որով ունիս յանլուծական հաստատութե. և կառավարես բարերարութե. տածես սիրողապէս և դարմանես գթութե: Ով լի և

առաստաղաշխող բանաս ձեռն ե՛ւ
լցուցանես զամենեսեան. պէս պ̃ս
եւ զանազան պիտոյիւք հարկաւո՛ր-
րացն ըստ բնութե̃ն ունակութե̃ն
պաշտպանես ամենեցուն:

Եւ ո՛չ այսչափ միայն, այլ որ եւ
հրաշափառագոյնն է եւ ամենայն
սքանչացման արժանաւո՛ր. առ բա-
նակինս սեւ առատացար շնորհօք.
զի առ սէր անկելոյ քո պատկերին՝
զէապէս պատկեր աներեւութիդ
առաքեցեր ՚ի փրկութի: Ո՛չ բաւա-
կանացար սպասաւո՛րքն հոգւովք.
Ո՛չ պաշտպանողական խմբիւք :
Ո՛չ տեսանողացն դասուք. այլ ըզ
ծոցածինդ ետուր բան: Ո՜ էու-
թենդ նկարագիր. զփառացդ լոյս.
որ զո՛չ այլ ոք ունէիր փոխանակ
նի: Ո՜ի թէ եւ յամի գոլով կարող
եւ ոչ ինչ տկարանայ առաջի քո ա̃ծ
գրոյն, այլ ո՛չ եւ յայսմիկ: Ո՜ի
անեղ բան եւ ծնունդ համաբնու-
թի՛ քեղ այլ ո՛չ գոյ: Եւ եթէ ա̃ծ
ամենաբաւ զօրութե̃դ գոյացու-

ցանես, եղական ահա և ո՛չ աներղ
համարդոյ. Օ՜ն ամ հաճեցար տալ
պարտս ընդ պարտաւորացս և փըր
կանս փոխանակ գերելոցս։
Ընդ որս և ինքն հիացմամբ ասէր՝
այնչափ սիրեաց ա̃ծ զաշխարհ,
մինչև զորդին իւր միածին ետ։
Ա՛յն որ նովա՛ն խօսէր՝ յայտնեաց
ասէ ա̃ծ զսէրն իւր ՚ի մեզ. զի մինչ
դեռ մեղաւորքն էաք՝ ք̃ս վասն
մեր մեռաւ. և՛ յիւր որդին ոչ խըր
նայեաց. այլ վ̃ս մեր ամենեցուն
մատնեաց զնա։ Ա՛յն որ հոգւովդ-
քո խօսէր՝ ա̃ր ասէ մատնեաց զնա
առ մեղս մեր։ Ա՛յ եթէ յայս ա-
ռատացար ամենախնամ, զիա՞րդ ոչ
նովա՛ւ հանդերձ զա̃մ ինչ շնոր-
հեսցես նովա՛ւ փրկելոցս։ Եթէ
զժառանգն տուր՝ ՚ի ստացուածս
ո՞չ խնայեսցես։ Եթէ զամենն շնոր
հեցեր, ՚ի փոքունս հի՞մ ուրա
գտանիցիս։ Եթէ որդիութե̃ ար
ժանաւորեցեր, ՚ի հայրականդ կոչ
մանէ ո՞ վերջացի։ Եթէ եղբարս

ձ̃գ մի

միածնիդ անուանեցեր, ժառան-
գակցութեանն ո՛ երկբայեսցի ։
Եթէ զտէրդ ՚ի ծառայի զիջուցեր
կերպարան, յազատութէն ո՛ թե-
րահաւատեսցի ։ Եթէ զանմահդ
ընդ մահկանացուս խառնեցեր,
մահացելոցս անմահութեն զիարդ
տարակուսանք ։

Անեղիդ ընդ եղականս միուէ՛
փրկութեն ո՛ անհաւատասցի ։
Աներևութիդ ՚ի զգայականս տե-
սաւորիլ` ո՛ ոչ հիասցի ։
Աննիւթ էիդ ՚ի նիւթականս խո-
նարհիլ` ո՛ ոչ սքանչասցի ։
Անպարագիր բնութենդ ՚ի մարմնի
պարագրիլ ո՛ ոչ սխրասցի ։
Անհասման մտծուենդ ը՛ փոքրկուէ
սահմանիլ ո՛ ոչ փառաւորեսցէ ։
Անբովանդակելոյդ ընդ բովանդա-
կուէ լինիլ ո՛ ոչ բարեբանեսցէ ։
Անչարչարելոյդ ՚ի չարչարանս գալ
ո՛ ոչ երկրպագեսցէ ։
Անմահիդ ընդ մահկանացուացս
մեռանիլ ո՛ ոչ գոհաբանեսցէ ։

Մակայն լեզուք ամ՟ բանաւորաց
ակարանան յարժանապէս փառա-
տրութե՟ մեծապարգևիդ. վերջա
նան յիսկապէս ծանօթութենէ
անբաւածաւալ շնորհիդ։
Ո ի ոչ ըստ զօրութե՟ որով ճոխա
նաս, այլ ըս՟ սիրոյ կամեցար փըր
կել. և ոչ այլով եղանակաւ, այլ
միածնաւդ հաճեցար ազատել։
Ուստի և փրկեալքս համարձա-
կեալ քոյովքդ զքեզ մաղթել.
և կամեցողիդ բարեաց՝ զհակցիդ
առաջի արկանել զկամաւոր խոնար
հութեն աղերս. Մ՟ զի 'ի մենջ
չքաւորիմք պատկանաւոր ինչ յա
ռաջ բերել ընծայ հաշտեցուցիչ
կամաց բարերարիդ. այլ զկիրս
անախտակիր բնութե՟ ծոցածին բա
նիդ՝ մերովս յաղագս մեր կրեալ՝
մատուցանեմք քեզ աղերս։
Մանաւանդ և առ նոյն ինքն դար
ձուցանելով զբան մաղթանացս.
ո՟վ առ փրկագործ և ազատիչ պար
տաւորաց ճշմարտութե՟ հօրդ
կամաց՝ ասելով։

Ո՛վ բան և ծնունդ՝ լոյս և ճա-
ռագայթ․ իմաստութիւն և զօրութիւն այ
Հօր․ էակից և փռ̃կից համաբուն
և համազօր կենդանարար և աշ-
խարհանորոգ հոգւոյն։

Որ 'ի լրումն նախաքարոզ տեսա-
նողացն ձայնից հոգւովդ քո զօ-
րացելոց՝ յապագայ անճառելի տ
նօրէնութե̃ն քո խորհրդոյ բացա-
տրութե̃ն, խոնարհեցար յանբաւելի
բարձրութե̃ն հայրական ինքնաբուն
և անկապուտ պատուոյդ 'ի վեր-
ջին և 'ինուաստ մեր աղքատութի̃․
յանձն քո լնլով զգրեալսն օրինաց
և մարգարէից։ զի թէ և զօրութե̃
առ ամ̃ եղանակ փրկութե̃ն իսկա̃պս
կարողանաս, այլ զառատութի̃ն կա-
մելով յայտնել արարչական սի-
րոյդ՝ զքե՛զ ինքն խառնեցեր ընդ
բնութի̃ս։ Կերպարանդ հօր՝ զկեր
պարանս ծառայի առեր։ Ո՜ զոր
երկինքն ոչ բաւէր տանել վերին,
յանձուկ սենեակ մաքրեցելոյն
հոգւովդ՝ ծրարեցար։ Ո՜ որում

ձծթ ոչ

ո՛չ գոյ ակնդէն աճուրց և կատա-
րած ժամանակաց՝ ի՛նն ամսեայ ժա
մանակաւ՛ յառագաստի անարա-
տին բնակեցար։ Ո՛վ ծոցածին ծը
նունդդ հօր անմարմնաբար՝ ՚ի
կուսականն ծնար ծոցոյ՝ մարմնոյ
զգեցմամբ։ Ո՛վ որ զլոյս զգեցեալ
ես ոպ̃ զօթոց, ՚ի խանձարուրս պա
տեցար։ Ո՛վ որ ՚ի քրովբէական
կառաց հանգչիս՝ ՚ի յանբանից մը
սուր եդար։ Ո՛վ որ ՚ի սրովբէից
երեքսրբեան ձայնի՛ սրբաբանիս՝
՚ի կուսական մաքուր շոթանց դըդ
ուե՛ցար։ Ո՛վ որ յիմանալի խո-
րանն վերին ընդ հօր և ընդ հո-
գւոյն բնակիս՝ ՚ի տաճարին ըն-
ծայեցար։ Ո՛վ որ ՚ի թևս թեթևս
հողմային երագաշարժ սլացմամբ
կառավարես, յամպն թեթև բատ
գրոյն նստեալ՝ իջեր ՚ի տիպն խա
ւարի։ Ո՛վ զայս ա̃մ յանձն առեր
բարերար, զի զեղծեալն քո պատ
կեր՝ ձուլեսցես վերստին ՚ի քրայս
իմանալի անապական կուսական

արդանդին յառաջին անարատու-
թեան: Այլ ոչ կիսամասնեայ առեր
զբնութիւն, այլ բովանդակ՝ զհոգի
զմիտս և զմարմին. զօրութեամբք շարժ-
մամբք և զգայութեամբք. զի նման
եա՛ն զնմանն մաքրեսցէ:

Որպէս և յանձառ և խորին խորհրդ-
դոյդ հազարապետէ՝ վարդապետիմք.
զձեզ տէ որ երբեմն օտարացեալ էիք
և թշնամիք խորհրդով՝ ի գործս
չարութեան, այժմ ա՛ւադիկ հաշտե-
ցոյց անդամօք մարմնոյ իւրոյ՝ ի
ձեռն մահո՛ւանն իւրոյ. յանդի-
ման կացուցանել զձեզ սուրբս և
անբիծս և անարատս առաջի հօր:

Զի պարսպելով զմարդկայինդ-
քո բնութի յամ չարին արկածից,
՝ի քեզ ինքն երևեցուցեր արդար
զբնութիւնս եթէ ոչ էին հաղբք
որոգայթից թշնամւոյն. և զակզբ-
նահայրն մեղաց խայտառակեցեր
պարտաւո՛ր դատապարտեալ ամ
չարեաց. ըստ այնմ, յայտ յինդիման
խայտառակեաց նշա՛նակեալ զնա

յանձին իւրում։ Սակայն Թէպտ
և առաջին Հօր և Հրեշտակաց մեզ
երևեցուցեր արդար զկնութիս
քոյին անմեղ կրիւք որում խա֊
արն ոչ եղև Հասու.) զի Թէպէտ
և Հալածեաց զերևելի խաւարի
զլոյսդ, այլ ոչ եհաս ներգործու֊
Թն ՚ի զգայականս ՚իմաստորականս
կամ յանձնականս.) այլ ոչ էաք
անպատիժք ՊՏ արդար իրաւանց.
զի պարտիք նախնի յանցաւորու֊
Թեն զօրանայր իվ մեր. և դատա
պարտէր զմեզ մահու. զի անձն
որ մեղիցէ ասէ՝ մեռցի։ Իսկ մեք
զի ըստ պատրանաց չարին ինքնա֊
յօժար կամօք սայթաքեալ ՚ի մեղս,
արդար իրաւունքն Հօր ոչ առնէր
զմեզ ազատս. այլ կամ անձամբ
Հատուցանել զնոյն, և կամ անմե
զի մեռանել փոխանակ պարտա֊
ւորացս. զի մեղանչականի մահ ըստ
իրաւանց՝ զիւրն և ոչ զայլոց ու֊
րուք Հատուցանէր զպարտս։
Յաղագս որոյ անմեղդ և մար֊

դասէրդ որ ըստ գրոյն ո՛չ արարեր
մեղս և ո՛չ գտաւ նենգութի՟ 'ի
բերան քո, որև ասէիր ո՛վ յան-
դիմանեսցէ զիս վ՟ս մեղաց. որև
նմին իրի զգեցար մարմին չարչա-
րելի և մահկանացու՝ անչարչարե-
լի և անմահ բնութ՟դ, զի չարչարա-
նօք անչարչարելոյդ և մահուամբ
անմահիդ՝ զչարչարելեաց և մահ-
կանացուացս լուծցես զդատապար-
տութի՟ և զմահու պարտաւորութի՟.
Ո՛ քո ինքն անմեղ մարմինդ ե-
տուր 'ի չարչարանս և՛ 'ի մահ. պա-
տարագ և նուէր հաշտութե՟ հօր
ընդ մեղանչականացս. և զմեզ ան-
դատապարտս արարեալ՝ ազատե-
ցեր 'ի յաւիտենից մահուանէն.
Ե՛ւ բոլորովին պատարագելովդ՝
բոլորից շնորհեցեր փրկութի՟.
և անդամօք մարմնոյդ կացուցեր
զամենեսեան զմեզ և անբիծս և
անարատս առաջի հօր. յորոց վ՟ս
զօրացեալ էր դատակնիք յանցա-
նաց նախաստեղծին.

Ո՜վ զի տարածմամբ աշխարհա֊
ստեղծ բազկաց քոց խվր̃ քառա֊
թև խաչին, զձգումն ձեռաց նա֊
խահօրն 'ի ծառն գիտութե̃ բժըշ֊
կեցեր: Ա՛յ հեղուսմամբ ոտիցդ
որոց երկիր է պատուանդան՝ ըղ
դարշապարս նախաստեղծին 'ի
ծառն ընթացից ողջացուցեր:
Ա՛յ ճաշակմամբ լեղւոյն՝ զդառ֊
նութիւն ճաշակաց պտղոյն քաղց֊
րացուցեր: Ա՛յ կափուցանելով
զաչսդ որով զանդունդս նկատես՝
զաղտեղութիւն տեսարանացն որ 'ի
պտղոյն գեղեցկութ մաքրեցեր:
Ա՛յ 'ի փակել դրանց լսարանիդ՝
զթոյնս մահաբերս հեղեալ յա֊
ռաջնաստեղծ ունկն կուսին ջնջե֊
ցեր: Ա՛յ զէլիէլին բարբառելով՝
զխօսակցութիւն խորհրդակցութե
չարին խրատու սրբեցեր:
Ա՛յ մերկութ զզեցողիդ զլոյս փա֊
ռաց, զմերկութիւն պատկառանաց
սկզբնամարդոյն ծածկեցեր:
Ա՛յ բոլոր մարմնոյդ հարուածովք
Ճկդ ղըո

զբովանդակ սխալանսն ջնջեցեր։
Դու՛ անպարտական մահուամբդ՝
զստուգապէս պարտաւորելոյն մե-
ռուցեր զմահ։ Դու՛ իջանելով ՚ի
ստորին վայրս դժոխոց՝ զմեռ-
նեալսն ՚ի նմանէ ազատեցեր։
Դու՛ յարուե̅դ կենարար՝ ընդ քեզ
վերածեր ՚ի կեանս անմահականս։
Դու՛ իւրաքանչիւր անախտակիր
քո անդամօքդ՝ զառ՚ի չարէն ախ-
տակրութ̅ի մերոյս անդամոց բժշ-
կեցեր։ Դու՛ ոչ այսչափ միայն,
այլև նախահոգակ յարակայութե̅
մեր առ՚ի քէն անախտութե̅ն եղեր.
զի մի՛ իբրու առ՚ի քէն մեկուսա-
ցեալ աւազակն չար գտանելով՝
գանալից ոք̅ զառաջինն արասցէ.
Ու զի զխայթոցս գիտելով կա-
մակոր վիշապին, հնարեցեր ոչ ան-
կանիլ մեզ ընդ խածմամբ. և վի-
րաւորելոյն արագապէս և՚ի մօտոյ
կազմեցեր զդեղն բուժական։
Ո ի որպ̅ ստեղծիչ գոլով բնու-
թեանս պտղկայութ̅ին գիտելով՝


և

և զթշնամին բազմաճնար և յոքն-
արուեստ և՚ի չար առնելն իմաս-
տուն, կամեցար ամրացուցանել
յըմբռնողական որոգայթից վաս-
շուերին։ Դու թէպէտ փրկական
տնօրէնութեան քո խորհուրդ՝
զօրաւոր և անպարտելի է ախոյեան
ընդդէմ հակառակին, և յիշատակ
կամաւոր մահուան քո սուսեր խո-
ցոտիչ ապստամբին, և դուլաւ պա-
րսպելոցն ոչ դամադիւտ լինին
բիւրակերպեն ճարք թշնամւոյն.
այլ մեք պատրանօք չարին և զբա-
ղանօք ստորնայնոյս միշտ ՚ի մոռա-
ցօնս մատնեմք զյիշատակ փրկա-
գործ քո տնօրէնութեանդ. և ոչ
զդուրին յուսոյ կախիմք ՚ի դալ պա-
տերազմին. և կամ յաղթողականն
առնուլ խոցուածս վիրաց։

Հաղագս որոյ ՚ի դալն քո ՚լ բա-
րերար ՚ի կենսաբեր և յաշխար
հակեցոյց կամաւոր չարչարանսն,
՚ի հանդէտ վերնումն խորանի ՚ի
վերնատունն խորհրդոյ՝ ՚ի լրումն

ըստուերին և՛ի սկիզբն ճշմարտու
թեանն՝ առեր յաշխարհաստեղծ
ձեռս քո հաց և գինի. հայեցար
յերկինս առ հայր քո յորժամ ոչ եր
բեք մեկնեցար. գոհացար և օրհնե
ցեր և բաշխեցեր 'ի քո ընտրելոն
ասելով՝ առեք կերեք 'ի սմանէ
ամենեքեան՝ այս է մարմին իմ և
արիւն որ յաղագս ձեր և բազմաց
բաշխի և հեղու 'ի քաւութիւն և՛ի
թողութիւն մեղաց. զայս արարէք
յիմ յիշատակ. քանիցս անգամ
եթէ ուտիցէք զհացս զայս և ըզ
բաժակս ըմպիցէք՝ զմահ իմ պատ
մեցէք մինչև եկից ես միւսանգամ:

Դու որ երբեմն 'ի ձեռն հրաշա
գործեցեր զանչափ քո զօրութիւն
առ զաւակս արդարոցն որոց ուխ
տեցեր. չարչարելով զեգիպտոս և
ամայացուցանելով զնա 'ի խորսն. և
առաջնորդելով՝ քեզ հետևելոցն
սեամբ հրոյ և ամպոյ և կերակրե
լով երկնատեղաց հացիւն և ար
բուցանելով ջրովն վիմաբուղխ՝

ձկէ   ե

ետուր նց̃ա օրէնս ըստ խուրաքան
չիւր ամի շրջագայութե̂ զատուն̂երա
կան գառն զենուլ. և զա́ւուրս է
՚ի տաղա́ւարս բնակիլ. այլև զերկ
նատեղաց մանանայն ոսկեղէն սա
փորովն պահել. զի անաղօտ յիշա
տակ սքանչելագործութեան քո
մնասցէ ՚ի նս̃ զգալի նշանակօքն.
Սոյնպէս և առ նորով Ճշմարտու
թե̃ս որոյ ստուե́ր էր առաջինն,
զենար գառնդ Ճշմարիտ ՚ի զատկի
մեր քա̂ւութե̃. Սա̂ հերձեր զխորս
մեղաց ծովուն գա́ւազանաւ̂ կեն
սատու խաչին. և զիմանալին փա
րա́ւոն ընկղմեցեր ՚ի ջուրս ա̂ւա
զանին. Սա̂ զնոր ինէլ ցամաքաթև
անցուցեր ընդ նոյն. և լուսա́ւոր
ամպով հոգւոյն առաջնորդեցեր
յառ՚ի չարեաց անապատ վարս.
Սա̂ ՚ի յերկնից իջեալ կենաց հա
ցի́ւդ մարմնով և արեամբ քո կե
րակրեցեր. և ՚ի պարգևական աշ
խարհդ կենդանեաց հրա́ւիրեցեր.
Սա̂ հացիւ և գինւով զյիշատակ
Ճկը կա

կամաւոր խոնարհութ՟ քո և փրկա
գործ չարչարանացդ և կենդանա
րար մահուդ աւանդեցեր․ և իբր
յօթևանի յեօթնօրեայ կենցաղս
այս տաղաւարիդ հրամայեցեր․
Այլ վ՟ այնորիկ հացիւ և գինով
ետուր զյիշատակ մարմնոյ և ա
րեան քո ողորմած՝ յայտ առնելով
թէ ճշմարտապէս բանդ հօր ան
մարմին՝ մարմին և արիւն եղեր ը՟
յովհաննու․ և նովին մարմնով և
արեամբ չարչարեցար և մեռար
յաղագս մեր։ Այլ թէպէտ առ՚ի
քէն ընտրելոցն և սրբեցելոցն ա
ւանդեցեր զայս փրկական և սրբա
րար խորհուրդ, այլ յաւելեր թէ՝
՚ի քաւութ՟ի և՚ի թողութ՟ի մեղաց․
Յայտ արարեալ թէ ա՟մ աշխարհի։
Ո ՚ի որպէս մահըն քո կենարար՝
զբնութ՟իս ադամային փրկեաց և
ազատեաց, այսպէս և յիշատակ կա
մաւոր քո մահուան՝ միշտ զամե
նեսեան փրկագործէ․ և առաւել
զմեղաւորս․ որքև մանաւանդ կա

 րօտ

րօտ են փրկութեն ։ Ըստ որում
և յառակս անառակին դարձի՝
հրատարակեցեր զենուլ զեզինդ
պարարեալ ածուեդ և սրբուեդ՝
՚ի դէմս ամ բնութեանս անառակ
լոտ ապարասանութեանն եղելոյ ։
Այնքան առատձն ՚ի պարգևսն,
մինչ զի յանմեղութե կացեալքն
և դժուարաշարժքն ՚ի կիրս նա-
խանձու՝ ոչ Թուի շարժիլ ։
Իսկ հայրդ բարերար զանչափուն
սիրոյն յայտնելով խրախաբանէր
առ նսա ․ զառ ՚ի մահուանէ և ՚ի կո
րուստենէ որդւոյն առաջի արկա-
նելով զգիւտ և կենդանութի ․
և ընդ ինքեան պարտ վարկանէր
ուրախանալ ։ Ուրեմն ապա յիրա
ւի է ՚ի մեղուցելոցս գիւտ ես ՚ի
կեանս՝ ասել զզենումն անմահին ․
զորոյ ետուր հաստատուն նշանակ
յիշողութե փրկեցելոցս հացին և
գինով ․ զոր արարեր և անուանե-
ցեր մարմին քեզ և արիւն ․ զի ան
աղօտ մնասցէ միշտ ՚ի մէջ եկեղե-



ցւոյ

ցուց քո յիշատակ կենդանարար
մահու քո։ Ըստ որում և անցեր,
քանզի անգամ թէ ուտիցէք ըզ
հացս զայս և զբաժակս ըմպիցէք՝
զմահ իմ պատմեցէք։ Եւ հրամա
նատրեցեր ՚ի ներկայ յաւիտենին.
օրըստօրէ սովաւ զնոյն յիշատակ
փրկագործ տնօրէնութեան քո
վերստին նորոգել ՚ի միտս մեր։
Եւ ոչ յայնժամ կենդանարարդ
քո մահ զօրացաւ՝ զամէն ջրել ըզ
մեղս, այսպէս և օրըստօրէ յիշտկ
նորին նովին զօրութբ զնոյն կատա
րել՝ յօրըստօրէ յիշատակելն զաւ
օրեայն բառնալ զմեղս։ Որոյ ե
րանաւէտ հրամանին հետևելով
փրկեալ քո ժողովուրդ, ոչ յայնմ
ժամու և այսօր զնոյն կատարեմք.
և աներկբայ հաւատով զքեզ ի
մացականս տեսութբ նկատեմք.
և հաւատամք պատարագեալ ՚ի վր
սբյ սեղանոյս նուէր հաշտութե
հօր ընդ պարտաւորացս։ Իբր ար
դէն իսկ տեսանելով հաւատոյ

դիտամամբ զմիածինդ հօր բազկա
տարած խչ̄ը կենսունակ փայտին․
և զմաքրագործ կրկնավտակ աղ
բիւր կողից կայլակնացեալ 'ի լը
ճացումն աղտեղացելոցս մեզօք և
'ի վերստին կենդանութի։

Ուստի երկիւղիւ և սարսափ
մամբ մեծաւ ընդ խնդութե
խառնեալ՝ կամք առաջի սոսկալի
և ահաւոր քո խորհրդոյս․ և մաղ
թեմք՝ նախ և առաջին՝ արժանա
ւորեա զմեզ ամփոփել զմիտս մեր
յա̄մ զբաղմանց ստորնայնոցս․ և
անզբօս խորհրդով կալ առաջի քո
և գոհաբանութ̃ աղերսել․ որպէս
վայելէ ա̄յ յաղագս մեր պատարա
գելոյ․ այնպիսի տեսութ̃ և հաւա
տով ոպ̄ և աւազակն աջակողմեան
յայնժամ մաղթեաց բարերարիդ․
որ միով բանիւն՝ դրախտին եղև
ժառանգաւոր։ Որդ մարդասէր
և ողորմած անոխակալ և անյիշա
չար տ̄ր որ զանտանելի զչարչարանս
'ի յանձն առեր յանախտակիր բը

ծհէ նու

նութիւդ՝ ընդ իւրապատիկ ան-
տիւք անկեալ պարտաճորացս ,
մինչեւ ողորմութե՟ որ ոչ երբէք
մոռանաս զքոյդ որ յաղագս մեր
զչարչարանս․ եւ մի՛ ապախտ առներ
զերկս աշխատութե՟ց զոր յաղագս մեր
կրեցեր ։ Նո՟ իւրաքանչիւրովքն
կրիւք՝ ոպ՟ յայնժամ ազատութի՟
շնորհեցեր՝ եւ այժմ փրկագործեա՛․
վ՟զի առաւել զօրացան յիս անօ-
րէնութի՟ք քան թէ յայնժամ յաշ-
խարհի․ որքան անդիտութե՟ յայնմ
ժամու սխալանք՝ իսկ իմս գիտու-
թեամբ ։ առանց օրինակի եւ պատ-
ժեալքն․ իսկ ես զյոլովս ունելով
ապացոյցս ։ Սակայն ՚ի մոռացօնս
ձգեցի զանհրաժեշտ ատեան ամե-
նազօրիդ․ եւ ոչ յիշեցի զարդարա-
կշիռ հատուցումն անաչառիդ ․
եւ անարգելաբար բերայ յամենայն
կամս հակառակին ․ եւ անխափան
ընթացայ ՚ի հրապոյրս չարին ։
Զիս ինքն ետու ինքնայօժար կա-
մօք գործի ՚ի ձեռն ՚ի չար առնել

Ճարեղին· որով վարեցաւ խնամով
՚ի գործս ամ̃ պղծութե̃։ Ո՛չ եթող
անդամ զոր ո՛չ էհար ախտիւք· և
ո՛չ զգայութի̃ զոր ո՛չ ապականեաց
յանցաւորութե̃։ Ո՛չ են վէրք
մանուկանք եթէ պատեսցի, և ո՛չ
այտուցն անդամոյ եթէ ապեղանի
դիցի· այլ բոլորովին լեալ ախտա
ցեալ՝ յոտից մինչև ցգլուխ չիք
առողջութի̃։ Ո տեսարանս կուրա
ցոյց յարատ հայեցուածով· զլսա
րանս՝ ախտաւոր լսելութե̃· զհոտո
տելիս՝ ժահահոտ մեղաց մեղկութե̃·
զճաշակելիս՝ անասնաբար անառ
գելութե̃· զլեզուս՝ աղտեղի զազրա
խօսութե̃· զձեռս անմաքուր ձըգ
մամբ յանպատշաճս· զոտս ՚ի դնիցս
անօրէնութե̃։ Նաև զմասունս տի
րականին՝ յաղդակիցսն անհանճա
րութի̃· զբանականն՝ ՚ի խոկումն ան
զգամութե̃ անընտրողակ̃· զցասմնա
կանն՝ զինիլ Ը դէմ աղդակցին·
զցանկականն՝ սիրով ջեռնուլ ախ
տաւոր· զարդարութին՝ անիրաւութե̃

յորս ընդ նովա՛ն. զմիտս՝ մոլորա-
կան նանրախոհութեամբ:
Իսկ որ այսպիսիք գործեօք ներ-
գործին՝ նմին իններորդ անկեալ:
Հպարտութն. ամբարտաւանութն.
նախանձու. ատելութն. փառասի-
րութն. սնապարծութն. ստախօսութն
երդմնահարութն. բարկութն. սրտմը
տութն. որովայնամոլութն. գրգռու-
թն. հակառակութն. պոռնկութն.
անքնական ցանկութն. յարու՛ա-
կանս, յանասնայինս՝ ի գազանկնս
ոխակալութն. չարայիշութեան.
երկպառակութն. շողմողութն.
քսութն. մատնութն. անհնազանդութն
գայթելոյ. նախատանաց. թշնամա-
նաց. բամբասելոյ. հայհոյութն.
խեղկատակութն. շատախօսութեան.
ատնհարութն. ծաղու. կեղծաւո-
րութն. մարդահաճութն. ստուտակա-
պաստութն. նենգութն. չարակնութն.
չարախօսութն. գողութն. զրկելոյ.
յափշտակութն. անիրաւութեան.
ստուտվկայութն. զրպարտութն.

 խա

խաբէութն. և որ 'ի սոյնս յարմա
րին ախտք՝ բնականք և եկամուտք.
զորս ոչ եմ բաւական ընդ թուով
արկանել. անձնականք և մարմնա
կանք և մրտաւորականք. ամ գոր
ծարինօք յամենայնս որ'ի նմ կրին.
եթէ 'ի բնական շարժից և յինքնա
կամ յօժարուէ, և եթէ 'ի չարին
արկածից՝ ամենայնիւ յամենայնի
վերաւորեցայ.

Այլ բժիշկդ հնարաւոր ամենար
ուեստ և մարդասէր՝ զբազմապա
տիկդ 'ի կեր արկցես զմասն առ
հեքիս բժշկութի. Այ՛ զի ոչ առ
յինէն ունիմ բարուրս ինչ փըր
կութե՝ զբոյդ ամենողորմ 'ի վար
արկցես զհնարաւորութիւն. զի
և ոչ այլ ուստեք փրկութի.

Ոի ես անկեալ և վիրաւորեալ
քահանայն ետես և զանց արար.
ղևտացին՝ և ոչ զօրեաց. սամարա
ցւոյդ ըստ մեզ կարօտիմ օգնակա
նութե. ով և երբեմն անկելոյն 'ի
ձեռս աւազակաց. Եթէ գթասցիս

բարեգութ յանկեալս. եթէ պա
տեսցես զվէրս. եթէ արկցես 'ի
վերայ զօծումն շնորհիդ եւ զպելինն
չարչարանացդ, 'Ի քո՛յդ վայելեցից
շնորհ. քոյովքդ ապրեցայց վաս-
տակովք: Ա՛յ զի ամենայնի՛ եմ
յանցաւո՛ր, նմին իրի մարդասէր
եւ դու զդալորս իմ զգեցար բնութ
ե՛ւ 'ի քեզ արդարացուցեր. եւ 'ի վր
իմ սուրբ արարեր զանձն քո՛ զի
եղէց եւ ես սրբեալ ճշմարտութե:
Ա՛յ զի էի պարտաւոր յաւիտե-
նական մահուն՝ զքեզ ինքն եդուր
'ի մահ յաղագս իմոյ պարտեացս.
եւ զի ես ապերախտ գտայ առ ե-
րախտաւորդ եւ անշնորհակալու-
առ բարեգործդ. եւ ո՛չ յիշեցի ըզ
քո անհանդուրժելի որ յաղագս իմ
զչարչարանսդ. եւ ո՛չ պատկառեցի
յանբերելի կրից նախատանացդ:
այլ յառաջինն անդրէն դարձայ'ի
փոխած ըստ առակին: ընդ տիղմն
Թաւալեցայ յորմէ սրբեցայ. ընդ
ժահահոտութիւնն բերայ յորմէ

մաքրեցայ: Այլ զօրացի՛ր որ ո՛չ
երբէք տկարանայ ո՟չ յա՟մ ժամ
և այսօր յիշատակ փրկագործ կը
րիցդ. որոյ ահի՛ւ և դողուէ կամ
առաջի. ՚ի մաքրութիւն տղմաթաւալ
անկելոյս և ՚ի բժշկութիւն ամենահար
ուած վիրաւորելոյս. Հոգւոյդ
զհոգիս և մտօքդ զմիտս և մար
մնոյդ զմարմինս և զմտունս և
զշարժմունս և զզգայութիւն սոցա
սրբելով յա՟մ չարին արկածից.
որովք մեղայ ըստ խորհրդոյ ըստ
բանի և ըստ գործոյ: Այլ արժա
նաւորեա՛ քոյին շնորհի՛ զաղքնա
մեղս և զամենաթշուառս՝ ճաշակ
ման մեղսաքաւիչ և կենդանարար
մարմնոյ քո և արեան: Ո՛ ՚ի վրանս
կենդարու՝ եղէց խորան սողոմոնի.
յաղջամղջին տեսակէն լուսափայ
լեալ պայծառութ: Ո՛ ՚ի արժանի
եղէց քոյին բնակութ ըստ անսուտ
քո խոստման՝ եթէ որ ուտէ ըզ
մարմին իմ և ըմպէ զարիւն իմ՝
ունի՛ զկեանս յաւիտենին. և նա յիս

Ձհը բնա

բնակեսցէ և ես 'ի նմա։ Ո՛վ ի մի՛
դարձեալ 'ի մէջ յարիցէ թշնամին
ամայի դատեալ զիս 'ի քում բնա-
կութէ։ Այլ զքեզ տեսանելով
բնակիչ սրբեալ շնորհօք քոյին
տաճարիս, սարսեսցի ահիւ մեծաւ
ոգի անաղակ չար 'ի թշնորաբնակ
կայանից։ Մ'է համարձակիլ իբրև
զառաջինն կորովաձիգ աղեղնա-
ւորութեամբ ձգել ընդ խաւար
զնետս սատակչական ախտից. և
զկարեվէրն տալ խոցոտածս մա-
հաբեր։ Այլ դարձցի յետս ա-
մաչեցեալ և կործանեալ զյաւի-
տենական ամօթն և կորուստ։
Այլ ես զճշմարիտ կեանսդ ունե-
լով՝ աներկիւղ ապրեցայց յամ
փորձութենէ։
Դարձեալ մաղթեմ ամենագութ
ամենախնամ և ողորմած՝ յիշեա՛
զժողովուրդ քո զոր ստացար ի ս-
կզբանէ. մի՛ անտես առներ զեկե-
ղեցի քո զոր պատուական արեամբ
քո գնեցեր. յիշեա՛ զողորմութի քո


որով

որով լի՛ եղև երկիր։ Նայեա՛ յերկ
նից ՚ի սրբութենէ քումմէ և ա՛յց արա
այգւոյս այսմիկ զոր տնկեաց աջ քո։
Մի՛ քակեսցի ցանկ պատուիրա
նաց քոց. և մի՛ կործանեսցի պա
րիսպ ամենազօր խնամոց քոց։
Զի մի՛ եղիցի ՚ի կոխումն թշնա
մեաց քոց. և մի՛ կթեսցեն զսա՛
անցաւորք ճանապարհի։ Մի՛ ա
պականեսցէ զսա դարձեալ խոզ
անմաքուր. և մի՛ արածեսցի ՚ի սմա
կինճն վայրենի. Մի՛ ապատա
կեսցէ դարձեալ թշնամին. և մի՛
տար յապականութիւն զքո ժառան
գութիւն։ Գինք արեան քո են որ
մի՛ ժառանգեսցէ օտարոտին։
Աղէտք անճնարինք են եթէ ա՛ւա
զակն չար՝ ծառայեցուցէ զգանել
արեամբ քո ժողովուրդ։ Յիշեա՛
որ զի խաչիւ ստացար՝ չարչարա
նօք փրկեցեր՝ արեամբ ազատեցեր՝
մահուամբ կենդանացուցեր. մի՛
ապախտ առներ զարտաքսելի երկս
վաստակոց քոց։ Յանցաւորք են,


այլ

այլ դու թողիչ ես. մեղաւորք են՛
այլ դու քաւիչ ես. ախտաժէտք են՛
այլ դու բժիշկ ես. մոլորեալք են՛
այլ դու դարձուցիչ ես. կորու-
սեալք են, այլ դու գտիչ ես. մե-
ռեալք են, այլ դու կենդանացու-
ցիչ ես. տկարք են, այլ դու զօրա-
ւոր ես. կարեվէրք են, այլ դու
ամենահնար ես։ Ոչինչ որ՝ զի
մարմին են. հոգի որ ելանէ և այլ
ոչ դառնայ։ Բնութի վայրաքարշ
և հակեցօղ է ՚ի մեղս ըստ անսուա
քո բանին. եթէ միաք մարդկան
հաստատեալ են ՚ի խնամս չարի ՚ի
մանկութե. թէպէտ և ոչ եպերանք
յայսմ արարչիդ. զի ստացականք
՚ի չարին պատրանաց և ոչ բնութե
ունին. այլ ծնութե ՚ի նոյն ոչ բը
նութի հաստատեցաւ։ Նաւ թշնամի
ունին անմարմին և բազմահնար
և՚ի չար առնել իմաստուն։
Արդ ընդ կարեօք, և նա անկա-
րօտ։ Արդ պարզամիտք և սակա-
օրեայք, և նա խորամանկ և ծնա-
ՃՃա ցեալ

ցեալ անուրբք չարութեան.
Սոքա անհմուտք պատերազմի,
և նա վարժ իսկզբանէ.
Այլ դու տ՟ր կարող յամենայնի. որ քաջութ՟բ քո յամուրս մտեր աշխարհակալին. զհսկայն կապե ցեր. զկարասին յափշտակեցեր. զաւարն բաշխեցեր: Այժմ տուր քոյոց խրախոյս ասելով՝ քաջալե րեցարուք զի ես յաղթեցի աշ՟ի. և հրամայեցեր գնալ 'ի վ՟ր իժին և քարբին. և զամ՟ զօրութիւնս թշնամւոյն կոխել:
Արդ նովին զօրութ՟բ տ՟ր և այսօր հրաշագործեա. զօրացուցանելով զհաւատացեալս քո 'ի վ՟ր կամակոր թշնամւոյն: Տուր ամ՟ մեղաւորաց զգաստութ՟ն և զղջումն. խոստով նութ՟բ և ապաշխարութ՟բ մաքրիլ 'ի մեղաց. և հաղորդս լինիլ կենդա նարար և մեղաքաւիչ մարմնոյ և արեան քո: Այժմ որք 'ի պատուիրա նապահութ՟ն են՝ զօրացո զն՟ս մնալ 'ի նոյն հաստատութ՟ն. և օրըստորէ յառաջանալով ելս 'ի սրտի դնել.

և գնալ զօրութենէ 'ի զօրութի
և փառաց 'ի փառս։ Քահանայա
պետից ուղիղ դաւանութեամբ
և անբասիր քաղաքավարութեամբ
առաջնորդել ժողովրդեն քո հով
ուական տածողուե 'ի վայրս դա
լարոյ պատուիրանաց քոց և 'ի ջուր
սնուցողական իմաստից հոգւոյդ։
որով զօրացեալք արիաբար՝ զհետ
եկեսցեն քաջ և երկնաւոր հով
ուապետիդ՝ խառնիլ 'ի հօտ բազ
մաւն անմոլորից։ Քահանայից՝
սրբուե և անարատութե սպասա
ւորել կենարար խորհրդոյ մեղա
քաւիչ մարմնոյ և արեան քո։ 'ի
մաքրուի անձանց և 'ի քաւութի
մեղաց ամենայն հաւատացելոց։
Սարկաւագաց և ամ ուխտի ման
կանց եկեղեցւոյ մինչև 'ի հուսկ
վերջին կարգեալ աստիճան՝ ըստ
իւրաքանչիւր հաւատացեալ դոր
ծոյ պաշտել արթուե և սրբուե
'ի հաճոյս կամաց քոց։
Թգրաց դատել զժողովուրդս քո



ար

արդարութ՟ ըստ հրամանի սրբոց
քոց պատուիրանաց. առնել իրաւ֊
ունս և դնել յամ՟ ճանապարհս
արդարութ՟ն. ուղղել զանձինս և
որք ընդ ձեռամբ: Օ օրաւոր և
յաղթող լինել ՚ի պատերազմունս
թշնամեաց ՚ի վանումն ներհակին
և ՚ի խաղաղութ՟ի աշխարհի յան֊
դորրութ՟ի նեղելոց և ՚ի հաստա֊
տութիւն եկեղեցւոյ:
Իշխանաց զինուորաց և որք յա֊
թոռ դատողութեան՝ քաջութ՟ և
արութ՟ մարտնչել ընդ դէմ հակա֊
ռակաց ճշմարտութ՟ն. և ուղղութ՟
և արդրութ՟ դատել զժողովուրդս
առանց կաշառոց և ակնառութ՟:
Ժողովրդականաց ամ՟յն որք
յիւրաքանչիւր կենցաղավարութ՟՝
սիրել զմիմեանս որպ՟ զանձինս.
և զքեզ յամ՟ սրտէ և ՚ի զօրութ՟
և ՚ի մտաց. և դնել յամենայն պատ֊
ուիրանս քո երկիւղիւ և հնազան֊
դութեամբ. որք ՚ի չարիս են՝ դառ֊
նալ, և որք ՚ի բարիս՝ յառաջանալ:

ՃՁԴ Լու՟

Ո՛վ որք ուղիղ դաւանութեամբ ՚ի
քեզ եւ ՚ի Հայր քո եւ ՚ի Հոգի՛ նըն-
ջեցին յուսով յարութե՛, ընդ քեզ
յարո՛ ՚ի կեանս անմահականս. և
շնորհեա՛ զամ յանցանս նց զհո-
գւոյ զմարմնոյ և զմտաց. զկամայ
և զակամայ, զգիտութ և զանգի-
տութ. և ընկա՛լ ՚ի խորանսդ յաւի-
տենական. և Հանգո՛ ընդ սբս քո.
բարեխօսութբ սրբուհւոյ Ածա-
ծնին և ամենայն սրբոց:

Ո՛վ որք զպտուղ Հաւատոյ նուի-
րեցին յեկեղեցի քո՝ յուսով
առ ՚ի քէն բարեաց Հատուցման
յոլով և կամ սակաւ յիւրաքանչ-
իւր ժամանակի, ընկա՛լ անկարօտ
և անարգամեծար տր իբրև զխե-
րեւէշս այրւոյն. և Հատո՛ նց ըստ
Հաւատոց նց և առաւել քան զնոյն
յաննուաղ պարգևաց քոց յար-
քայութեան քում:

Ո՛վ որք իբր սպասաւորի քո մե-
ծութե՛ն ՚ի մեզ ինչ պտղաբերե-
ցին՝ ո՛վ ՚ի ձեռն մեր քեզ ընծայելով

Թէպէտ և ես անարժան գոլով
քո պարգևիդ զի ո՛չ եմ մշակ գոր
ծունեայ յայգի պատուիրանաց
քոց. այլ 'ի քէն ունելով մարդասէր
զկեանս և զամ կենաց պատճառս։
Արդ մի՛ համարիր ինձ 'ի դատա
պարտութի. և նց հատո՛ յանձնուազ
քո պարգևացդ ըստ ընդաբոյս ա
ռատութեն քո։ Եւ որք բանի
աւանդեցին մեզ յիշատակել յա
ղօթս, թէպէտ և ըստ կամի բա
րուց անհամարձակ գոլով բախել
զդրունս գթութե կամեցողիդ բա
րեաց. այլ դու ըստ աննախանձ և
հաւասարաբաշխ շնորհի.քո ընկա՛լ
զմաղթանս նց և յաջողեա՛ զհայց
ուածս ըստ իւրաքանչիւր պի
տոյից հոգւոյ և մարմնոյ։

Եւ պարտապանաց մերոց և որք
ունիցին ինչ խէթ զմէնջ և որք
ատենն զմեզ և հայհոյեն և ասեն
զամ բան չար զմէնջ սուտ և կամ
արդար. որք արդեամբք 'ի գլուխ
հանին զթշնամութին և որք 'ի միտս

խորհեցան , Թո՛ղ անյիշաչար տ՟ր
զա՟մ յանցանս նց. և՛ի գրոյն յան-
դիմանութե՟ ջնջեա՛ զմեղս նց. և
մի՛ կոչեսցին յատեան դատ՟նի քո։
Այլ զա՟մ չարիս ըստ բնաբարու-
թե՟ քո՛ բարեգործութի՟ համարեա՛
նց. և փոխարինեա՛ զանձառ պար-
գևաց քոց զհատուցումն։ Ընդ նո
սին և ինձ բազմամեղիս անոխա-
կալ և անյիշաչար տ՟ր՛ շնորհեա՛ ըզ
թողութի՟ բիւրապատիկ առ քեզ
պարտեաց և առ ընկերս։ Ո՟պ զի
հաւատարապէս առ՛ ի քէն բարե-
գործեալ եկեղեցի քո՛ և սիրով
կապակցեալք միաբանութե՟ փառս
վեր առաքեսցուք ընդ հօր և ամե-
նասուրբ հոգւոյդ։ Այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից
Ամէն։

Սերք Պետրոսի Աշօթից
Կուլեգորի Սիւնեցւոյ։

Յիշել մաղթեմ ըղորբագրողս.
Զառաջիկայ երգոցս ասօղս։

Երգ պաղատանաց առ Տէրն երկնաւոր. պաղատաւոր Գեղաւոր ցուցէ տաղեալ:

Անեղ Յս̄ եւ անսահման.
Հայր անսկիզբն եւ անվախճան
Անժամանակ որդւոյն ծնող·
Եւ գերազօր հոգւոյն բղխող:
Գոչեմ առ քեզ ձայնիւ մեծաւ·
Եւ դառնագին աղաղակաւ:
Որ յոչընչէ արարեր զիս·
Խոնարհեցո՛ զունկըն քո յիս:
Որ ո՛չ ըղձաս մեղաւորին·
Եւ ո՛չ կորուստ կամիս նոցին:
Այլ ըզդառնալն 'ի չար ախտէն·
Եւ 'ի մոլար ճանապարհէն:
Տո՛ւր ինձ յիշել զանցեալ չարիս·
Եւ զանհամար մեղաց պարտիս:
Որով զղջմամբ ապաշաւել·
Եւ հառաչմամբ ապաշխարել:
Բանալի առանց լուսոյդ ծագման·
Եւ քոյդ հըզօր ձեռին ձըգման:
Չունիմ շարժիլ ողորմելիս·
Եւ ո՛չ 'ի քեզ դիմել գերիս:

Ճըր

Մի՛ զիս ցասմամբ յանդիմաներ ·
և մի՛ յանկարծ մահուամբ տաներ ։
Զի մի՛ չարեօքս իմ անհամար ·
եկից առ քեզ անապաշխար ։
Այլ տուր աստէն ինձ ժամանակ ·
ողբալ ըզմեղս իմ անքանակ ։
Զի ողբացից զանձն իմ աստէն ·
և ապրեցայց յանանց սաստէն ։

Նորին երգ պաղատանաց առ Տէրն մեր Յս Քս ։

Բարձրեալ ած անզըննական ·
հօր միածին որդի և բան ։
Քեզ միշտ ը̄ հօր երկրպագեմ ·
և ընդ հոգւոյն օրհնաբանեմ ։
Որ հաճութ̄բ հօր և հոգւոյն ·
եկիր 'ի գիւտ կորուսեալ լոյն ·
Նա՛ ազատեալ 'ի գերողէն ·
հաներ 'ի չար արգելանէն ։
Արդ զիս որ կամ 'ի գուբ ներքին ·
և յանձաձանչ խաւար խորին ։
Վերաբերեա՛ յանձառ քո լոյս ·
ինձ ապաւէն գոլով և յոյս ։
ՃՂԹ

Ա՛յժ աղաչեմ ըզ Լոյսդ անճառ.
բազմարխալ գերիս թըշուառ:
Ներեա՛ խմացս անթիւ մեղաց.
վասըն քո սուրբ չարչարանաց:
Յորժամ գայցես 'ի դատաստան.
Նստիս յաթոռ քո հատուցման:
Ա՛յժ ըզ համար գործեցեր լոց.
պահանջեսցես յարարա ծոց:
Ընդ մինչ կայցեմ դիմապատկառ.
անխօս անձայն և անբարբառ:
Մի՛ զիս սաստիւ կըտրեր ը մեջ.
և մի՛ մատներ 'ի հուրն անշէջ:
Ընդ յլ ազատեա՛ 'ի տանջա նաց.
Ը՛'ի դըժոխոցն արգելա նաց:
Ա՛յժ քոց ոբց մաքուր դըրն դից.
արա՛ և զիս պըսակա կից:

Նորին երգ յաղթանաց առ սուրբ
Հոգին ճշմարիտ.

Պանձ գիտութեան անհամեմատ.
հոգիդ ած աղբիւր առատ:
Լոյս գերազանց որ բոլոր ըից.
հօր և որդւոյ արարչա կից:
ձղ

Հայցեմ 'ի քէն արտասուօք լով·
և այժմ 'ի քեզ առդիմեմ լով:
Տուր ինձ լինիլ ընդունա րան·
պարգևական լուսոյդ ծագման:
Ընկա՛լ ըղձայն բաղմամբ ղիս·
և աննըշոյլ աղջամըղ ջիս:
Աղբիւրացո՛ յիմոցս աչ չաց·
ջուր արտասուաց որբէլ մեղաց:
Զի մաքրեցայց 'ի համայ նից·
ապականեցայց չարագու նից:
Զարթո՛ զիս տէր 'ի թըմրա նաց·
և՛ 'ի քընոյ գանդաղա նաց:
Եւ զօրացո՛ կալ 'ի յո տին·
որ սևեռեալ կամ 'ի գե տին:
Շա՛տ են պարտիք իմոյս անձին·
որք ո՛չ 'ի թիւ բովանդա կին·
Բայց առ հոգիդ կենդանարար·
յանկարելեաց չէք անհը նար:
Զի թէ կամիս և ախոր ժես·
ըզհուրն 'ի ցօղ փոխակերպես:
Արդ մի' թողուր զիս յամառիլ·
և չար մեղօք յերկիր սահիլ:
Այլ տո՛ւր չընչնոյս աստ մշտածփ·
աճել 'ի միտ զելս 'ի հովտէս:
Ճղա̅

## Յիշատակարան Տպագրման ։

Սուրբ Գիրքս այս Աղօթից՝ Տպեցաւ և՛ի լոյս ածաւ արդեամբ և փափագմամբ՝ ՚ի սուրբ Աջէմ հանգուցեալ բարեպաշտօն իշխանի Մուրատօղլի կոչեցեալ մահտեսի Յարութիւնի որդւոյն։ ՚Ի յիշատակ հոգւոյն ածասէր ծնօղաց իւրեանց և ինքեանց։

Որք գոլով բարեսէր ծնողի բարեսուն զաւակք՝ եղին արդեամբք իւրեանց զսեղանս զայս հոգեկեցոյց՝ առաջի ջերմեռանդ հոգեսէր եղբարց. առ ՚ի տալ յիշել միշտ ըզ բարեսէր ծնօղս իւրեանց և զինքեանս յաղօթս։

Ուստի առատն յողորմութեան զհոգիս յիշողաց և յիշեցելոց՝ յիշեսցէ ՚ի գթութեն իւրում Ամէն։

Եւ հրատարակօղ աշխատաւորքն գործարանիս՝ [illegible] յիշեսցին ՚ի յաղօթս։